

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԵԳԼԱՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ ՌԱԴԻԿԻ

**ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՄԱԾՈՒՆԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ե 18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

Տեխնիկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Ա. Աղաբաբյան

ԵՐԵՎԱՆ, 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	10
1.1. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ	10
1.2. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՁՆԵՐՆ ՈՒ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ	13
1.2.1. Պաստերացված կաթի անվտանգության ապահովման ազգային պահանջներն ու չափանիշները	13
1.2.2. Պաստերացված կաթի անվտանգության ապահովման միջազգային պահանջներն ու չափանիշները	16
1.3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԸ	19
1.4. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	24
1.5. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿԱՇՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	28
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԻՆԵՄԱՆ, ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ	38
ԳԼՈՒԽ 3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	47
3.1. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	47
3.1.1. Պաստերացված կաթի մեջ չոր կաթի առկայության հետազոտության արդյունքները	47
3.1.2. Պաստերացված կաթի մեջ պահածոյացնող և կողմնակի նյութերի առկայության ուսումնասիրությունը	51
3.1.3. Պաստերացված կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշների ուսումնասիրություն	53
3.2. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	59

3.3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԺԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	71
3.3.1. Թունավոր տարրերի ռիսկի գնահատում.....	71
3.3.2. Պեստիցիդների ռիսկի գնահատում.....	82
3.3.3. Ռադիոնուկլիդների ռիսկի գնահատում	87
ԳԼՈՒԽ 4. ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ...93	
4.1. ՀԱԿՏՈՒԼՈԶԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԱՐԴԻ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԹԹՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿԱՐԴՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ	93
4.2. ՀԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԻՆԵՄԱՆ	99
4.3. ՀԱԿՏՈՒԼՈԶ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԱԾՆԻ ՄԵԶ ԸՆԹԱՑՈՂ ՊՐՈՏԵՌԼԻՏԻԿ ԵՎ ԼԻՊՈԼԻՏԻԿ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՑԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	102
ԳԼՈՒԽ 5. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՎՀԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	108
ԳԼՈՒԽ 6. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	113
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	115
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	117
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	118
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	138

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՄՎՏ	Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոն
ԱՑԽՄ	Աղիքային ցուպիկի խմբի մանրէներ
ԲԱՀՔ	Բարձր արդյունավետության հեղուկ քրոմատոգրաֆ
ԳԱՄ	Գաղութ առաջացնող միավորներ
ԴԴՏ	1,1- դի-(4-քլորֆենիլ)-2,2,2-տրիքլորէթան
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԹԲԹ	Թիոբարիտուրաթթվային մեթոդ
ԿԱՀ	Կողեքս Ալիմենտարիուս Հանձնաժողով
ԻՍՕ (ISO)	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
ՀԱԱՀ	Հայաստանի ազգային ագրարային համալսարան
ՀԿԿ	Հսկման կրիտիկական կետ
ՀՍՏ	Ազգային ստանդարտ
ՀՔՑՀ	Հեքսաքլորցիկլոհեքսան
ՄԱՖԱՄ	Մեզոֆիլ աերոր և ֆակովտատիվ անաերոր մանրէներ
ՆՓ	Նորմատիվ փաստաթուղթ
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
ՊԴԳ	Պարենի և դեղորայքի գործակալություն
ՊԿԿ	Պաստերացված կաթի կանոնակարգ
ՎՎՀԿԿ	Վտանգների վերլուծության և հսկման կրիտիկական կետեր
ՏԿ	Տեխնիկական կանոնակարգ
ՖԷԿ	Ֆուտելեկտրոկոլորիմետր
BCM	Չոր կաթի վերականգնիչ (восстановитель сухого молока)
IARC	Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալության
IMC	Միջազգային ֆինանսական կորպորացիա
MDA	Նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (minimum detectable activity)
MDL	Նվազագույն հայտնաբերման սահման (minimum detection limit):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Սննդամթերքի անվտանգության ապահովումը յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության գերխնդիրներից է: «Սննդամթերքի անվտանգության մասին» <<օրենքով [25] սահմանված են վերջինիս ուղղությամբ կիրառվող պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու անվտանգ սննդամթերքի արտադրությանը ներկայացվող պահանջները: << կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 827-Ն որոշման Հավելված N 1-ով [15] սահմանված է սննդամթերքի, մասնավորապես, կաթնամթերքի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում Պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի (ՎՎՀԿԿ) համակարգի ներդրման ժամանակացույցը: Վերջինիս համաձայն՝ կաթնամթերքի արտադրության բնագավառում ՎՎՀԿԿ համակարգի և դրա նախադրյալ ծրագրերի ներդրման ժամկետի ավարտը գերիշոք առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար սահմանված է մինչև 2020 թ. հունվարի 1-ը, փոքր առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար՝ մինչև 2019 թ. հունվարի 1-ը, միջին առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար՝ մինչև 2018 թ. հունվարի 1-ը:

2015 թ.-ի հունվարի 1-ից <<-ն անդամակցում է Եվրասիական Տնտեսական Միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ): ԵԱՏՄ անդամ պետությունների արտադրողները պետք է առաջնորդվեն միասնական տեխնիկական կանոնակարգերով, որոնցով սահմանված են մթերքի որակին և անվտանգությանը ներկայացվող պահանջները, և արտադրությունում մշակեն ու ներդնեն ընթացակարգեր՝ համաձայն ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների [74]:

Հայտնի է, որ կաթնամթերքը, մասնավորապես, պաստերացված կաթը և կաթնաթթվային մթերքները, համարվում են լիարժեք սննդակարգի անփոխարինելի բաղադրիչները: <<-ում կաթի առաջնային արտադրության և վերամշակման փուլերում անվտանգության կառավարման համակարգերը դեռևս լիարժեք կիրառություն չունեն, հետևաբար պաստերացված կաթի արտադրության ոլորտում առկա վտանգների և ռիսկի գործոնների գնահատումն արդիական խնդիր է:

Վերջին տարիներին խիստ կարևորություն են ստացել ինչպես սննդամթերքի անվտանգության, այնպես էլ առողջ սնման հիմնահարցերը, որոնց լուծման ուղիներից մեկը ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրությունն է: Վերջինս նախատեսված է տարբեր տարիքային խմբերի մարդկանց սննդակարգում պարբերաբար օգտագործման համար և արժեքավոր ֆունկցիոնալ բաղադրիչների առկայության շնորհիվ նվազեցնում է սնմամբ պայմանավորված հիվանդությունների զարգացման ռիսկը, նպաստում առողջության պահպանմանն ու բարելավմանը: Ներկայումս որպես ֆունկցիոնալ բաղադրիչ լայն կիրառություն ունի պրեբիոտիկ լակտովոզը:

Պետք է նշել, որ կան ավանդական մթերքներ, որոնք բնականից պարունակում են սննդային ֆունկցիոնալ բաղադրիչներ և ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության տեսանկյունից արժեքավոր նշանակություն ունեն: Այդպիսի մթերքներից են կաթնաթթվային մթերքները, հատկապես՝ ազգային կաթնամթերք մածունը:

Վերոնշյալ հանգամանքները պայմանավորում են պաստերացված կաթի արտադրության ոլորտում ռիսկերի գնահատման և ֆունկցիոնալ նշանակություն ունեցող մթերքի՝ մածնի տեխնոլոգիայի կատարելագործմանն ուղղված հետազոտությունների արդիականությունը:

Նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է պաստերացված կաթի արտադրության ոլորտում ռիսկերի գնահատումը և պրեբիոտիկ լակտովոզի օգտագործմամբ մածնի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը:

Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

1. Կատարել կաթնամթերքի, այդ թվում պաստերացված կաթի անվտանգության ապահովման ազգային և միջազգային պահանջների, չափանիշների ուսումնասիրություն և վերլուծություն:

2. Ուսումնասիրել կաթնամթերքի սպառողական շուկայում իրացվող պաստերացված կաթի որակական և տեղեկատվական կեղծումները:

3. Տեղայնացնել և կիրառել պաստերացված կաթի մեջ չոր կաթի որակական հայտնաբերման համար արագ, հավաստի և տնտեսապես մատչելի մեթոդ:

4. Իրականացնել պաստերացված կաթի, ինչպես նաև վերջինիս արտադրության համար որպես հումք օգտագործվող հում և չոր կաթի ռիսկի գործոնների գնահատում:

5. Պատրաստել մածնի արտադրության համար կաթնաթթվային մանրէների շտամներից և պրոբիոտիկից կազմված նոր մանրէական մակարդ, ուսումնասիրել պրեբիոտիկ լակտովոզի ազդեցությունը վերջինիս միկրոֆլորայի կողմից թթվություն առաջացնելու ակտիվության և մակարդման տևողության վրա:

6. Որոշել լակտովոզի օգտագործմամբ մածնի արտադրության օպտիմալ պարամետրերը, ինչպես նաև մածնում ընթացող պրոտեոլիտիկ և լիպոլիտիկ գործընթացների առանձնահատկությունները:

7. Իրականացնել լակտովոզի հավելմամբ մածնի անվտանգության և արտադրության տնտեսական արդյունավետության գնահատում:

Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ <<-ում կատարելագործվել է պրեբիոտիկ լակտովոզի և պրոբիոտիկ հատկություններ ունեցող նոր մանրէական մակարդի կիրառմամբ ֆունկցիոնալ նշանակության մածնի արտադրության տեխնոլոգիան:

Իրականացված հետազոտությունների արդյունքում ապահովվել է կաթնամթերքի շուկայում լայն իրացում ունեցող պաստերացված կաթի անվտանգության մանրէաբանական ու քիմիական վտանգների և ռիսկի գործոնների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված տեղեկատվություն: Վերջինիս արդյունքները հաշվի են առնվել նոր մանրէական մակարդով և պրեբիոտիկ լակտովոզով պատրաստված մածնի արտադրությունում ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքներով անվտանգության գնահատման համար:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

1. Հետազոտությունների արդյունքները փաստում են կաթնամթերքի սպառողական շուկայում լայն իրացում ունեցող պաստերացված կաթի որակական և տեղեկատվական կեղծումների առկայության մասին: Հայտնաբերվել է պաստերացված կաթի մեջ արգելված պահածոյացնող նյութ համարվող սորայի առկայություն, ինչպես նաև չոր կաթի պարունակություն՝ առանց համապատասխան մակնշման, և սահմանված պահանջներին ֆիզիկաքիմիական ցուցանիշների անհամապատասխանություն:

2. Պաստերացված կաթի և արտադրության համար որպես հիմնական հումք օգտագործվող հում և չոր կաթի նմուշներում քիմիական վտանգների՝ թունավոր տար-

րերի, պեստիցիդների և ռադիոնուկլիդների, ռիսկերի գնահատման արդյունքները հավաստում են, որ վերջիններս գտնվում են թույլատրելի ռիսկի տիրույթում:

3. Մանրէաբանական հետազոտությունների արդյունքները բացահայտել են, որ սպառողական շուկայում իրացվող պաստերացված կաթի և ֆերմերային տնտեսություններում ստացվող հում կաթի նմուշների զգալի մասը չեն համապատասխանում անվտանգության առումով մանրէաբանական ցուցանիշների համար սահմանված պահանջներին: Սակայն <<-ում հետազծելիության սկզբունքը դեռևս լիարժեք կերպով չի կիրառվում, ուստի մանրէաբանական վտանգների աղբյուրները հստակ բացահայտել հնարավոր չեն:

4. Մածնի արտադրությունում լակտովոզի օգտագործման համար որպես օպտիմալ չափաքանակ սահմանվել է 0,3 %-ը: Լակտովոզի կիրառումը մածնի արտադրությունում նպաստում է մթերքի որակական հատկությունների բարելավմանն ու կաթնաթթվային մանրէների անհրաժեշտ քանակների ապահովմանը:

5. Արտադրությունում ՎՎՀԿԿ համակարգի ներդրման նպատակով իրականացված ընթացակարգերի և գիտափորձերի արդյունքում ապահովվել է լակտովոզ պարունակող մածնի համապատասխանությունն անվտանգության սահմանված պահանջներին:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Աշխատանքի արդյունքները կարող են հիմք հանդիսանալ << սննդամթերքի անվտանգության կառավարման համապատասխան գերատեսչությունների ընթացիկ աշխատանքների, ինչպես նաև կաթնամթերք արտադրող ձեռնարկություններում ՎՎՀԿԿ համակարգի և վերջինիս նախադրյալ ծրագրերի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ժամանակ: Բացի այդ, ատենախոսության շրջանակներում, պաստերացված կաթի մեջ չոր կաթի որակական հայտնաբերման համար տեղայնացված թիոբարբիտուրաթթվային (ԹԲԹ) մեթոդն արդյունավետ կերպով կարող է կիրառվել շուկայում սպառողական պաստերացված կաթի կեղծման հայտնաբերման և համապատասխան վերահսկողության իրականացման նպատակով:

Պրեբիոտիկ լակտովոզի և պրոբիոտիկ հատկություններ ունեցող նոր տեսակի մանրէաբան մակարդի օգտագործմամբ մածնի արտադրության կատարելագործված

տեխնոլոգիան կարող է ներդրվել կաթի վերամշակման ձեռնարկություններում, հաշվի առնելով, որ վերջինս լրացուցիչ կապիտալ ներդրումներ չի պահանջում:

Ատենախոսության փորձագնահատումը: Զեկուցումների ձևով ատենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի նիստերում, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի գիտական խորհրդում, ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովներում (2012 թ., 2013 թ., 2014 թ.):

Հրատարակված գիտական աշխատանքները: Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են հեղինակի կողմից հրատարակված 7 հոդվածում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 137 էջի վրա, կազմված է ներածությունից, 6 գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածներից: Գրականության ցանկում նշված են 220 հայ և օտարազգի հեղինակների, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից հրատարակված գիտական աշխատանքներ:

Ատենախոսությունում առկա է 53 աղյուսակ, 1 նկար և 15 գծանկար:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաթը կաթնասուն կենդանիների կաթնազեղձերից արտադրվող սպիտակ կամ բաց դեղնավուն երանգով քաղցրահամ հեղուկ է [1], որի հիմնական դերն է պահպանել նորածին սերնդի կյանքը, ապահովել նրա աճն ու զարգացումը [175]: Յուրաքանչյուր տեսակի կաթնասուն կենդանի արտադրում է այնպիսի կաթ, որը քանակապես և որակապես բավարարում է նորածին օրգանիզմի սննդանյութերի պահանջները [4]:

Կաթը բարդ կոլոիդ համակարգ է, որի մեջ բաղադրամասերը փոխադարձաբար կապված են իրար իետ [1, 8]: Այդ բաղադրամասերն են՝ ջուրը, կաթնայուղը, ազոտային նյութերը (գլխավորապես սպիտակուցներ), կաթնաշաքարը, ֆոսֆատիդները, օրգանական և անօրգանական թթուների աղերը, ֆերմենտները, վիտամինները, գազերը և այլ նյութեր [6, 83, 214, 218]: Շնորհիվ այս արժեքավոր բաղադրամասերի պարունակության կաթն օժտված է բարձր սննդային արժեքով և անփոխարինելի սննդամթերք է երեխաների և հասակավոր մարդկանց համար [1, 57, 138]:

Թեև մարդու ամենօրյա սննդակարգում կարող է օգտագործվել տարբեր կենդանիներից ստացված կաթը, սակայն առավել շատ արտադրվում և օգտագործվում է կովի կաթը [108, 129, 134]: Ընդ որում, շատ երկրներում [175, 188], այդ թվում նաև Հայաստանում [11] սպառողական շուկայում հում կաթի իրացումը չի թույլատրվում, քանի որ այն կարող է առաջացնել մթերքի անվտանգության և հանրային առողջության հնարավոր ռիսկեր: Ուստի, թույլատրվում է կաթն իրացնել ջերմային մշակման ենթարկելուց հետո: Հիմնավորվում է, որ այդպիսով նվազեցվում է սննդային ծագման հիվանդությունների առաջացման հավանականությունը [214] և երկարացվում կաթի պահպանման ժամկետը [156, 157, 218]:

Տարբեր հեղինակների կողմից նշվում են կաթի ջերմային մշակման մի շարք եղանակներ [6, 7, 60, 83, 87]:

Ընդհանրապես, պաստերացումը նպատակ է հետապնդում ոչնչացնել ախտածին միկրոօրգանիզմներին, նվազեցնել մանրէների քանակը, ապաակտիվացնել ֆերմենտները և երկարացնել պահպանման ժամկետը [60, 144, 189, 214]: Ընդհանուր առմամբ, պաստերացումը հիմնականում իրականացվում է կաթի մեջ վեգետատիվ ախտածին

միկրոօրգանիզմների նվազեցման և մթերքի անվտանգության ապահովման նպատակով [209]:

Կաթնամթերքի միջազգային ֆեդերացիան պատերացումը սահմանում է որպես կաթի ջերմային մշակման գործընթաց, որն առաջացնում է մթերքի քիմիական, ֆիզիկական և զգայորոշման հատկությունների նվազագույն փոփոխություններ՝ նպատակ ունենալով նվազեցնել առողջության համար այն պոտենցիալ վտանգները, որոնք կարող են առաջանալ կաթի մեջ ախտածին միկրոօրգանիզմների առկայության հետևանքով [97, 126, 127]:

Ըստ Կաթնամթերքի միջազգային ասոցիացիայի գոյություն ունեն պատերացման մի քանի ընդունված եղանակներ.

- 1) Ցածր ջերմաստիճանի պայմաններում երկարատև պատերացում՝ 63°C ջերմաստիճանում, 30 րոպե և ավել տևողությամբ:
- 2) Բարձր ջերմաստիճանի պայմաններում կարճատև պատերացում՝ 72°C ջերմաստիճանում, 15 վրկ տևողությամբ: Ընդ որում այս եղանակը համարվում է առավել տարածված:
- 3) Շատ բարձր ջերմաստիճանի պայմաններում ակնթարթային պատերացում՝ 88°C ջերմաստիճանում 0,5 վրկ տևողությամբ, 90°C ջերմաստիճանում 0.5 վրկ տևողությամբ, 94°C ջերմաստիճանում 0,1 վրկ տևողությամբ, 96°C ջերմաստիճանում 0,05 վրկ տևողությամբ կամ 100°C ջերմաստիճանում, 0,01 վրկ տևողությամբ [158]:


Պետք է նշել, որ <<-ում առավելապես կիրառվում է բարձր ջերմաստիճանի պայմաններում կարճատև պատերացման եղանակը [6, 7]:

Պատերացած կաթը պատրաստում են բնական և չոր անարատ կաթից, որի համար կաթը նորմալացնում են $40\text{-}45^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում՝ ելնելով պատրաստի մթերքի յուղայնությունից [6, 60, 83, 87]: Հոսքում նորմալացման ժամանակ տաք կաթի մի մասը սերգատում են և ստացված յուղագուրկ կաթը խառնում անարատ կաթի հետ: Նորմալացնելուց հետո կաթը պատերացնում են, այնուհետև համասեռացնում $55\text{-}65^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում 12-15 ՄՊա ճնշման տակ [6, 83]: Ընդ որում կաթի համասեռացումը կարող է իրականացվել պատերացումից առաջ կամ հետո:

Համասեռացման հիմնական նպատակը կաթի սերակալման կանխարգելումն է: Բացի այդ, այն մեծացնում է յուղագնդիկների քանակը և փոքրացնում նրանց չափերը: Արդյունքում մեծանում է կաթի մածուցիկությունն ու մարսելիությունը [87]: Կաթում մանրէների հսկման և որակի կորստի կանխարգելման նպատակով համասեռացումն իրականացվում է կարճ ժամանակահատվածում [214]:

Պաստերացնելուց և համասեռացնելուց հետո կաթը պաղեցնում են մինչև $4-8^{\circ}\text{C}$, տարայափորում, տեղափոխում $2-8^{\circ}\text{C}$ սառը նկուղ և պահում մինչև իրացումը [6, 60]:

Պաստերացված կաթի արտադրության տեխնոլոգիական սխեման ներկայացված է Գծանկար 1-ում:



1 - ավտոցիստեռն, 2 - կենտրոնախոլուս պոմպ, 3 - կշեռք, 4 - վաննա, 5 - սերզատկեղտամաքրիչ, 6 - թիթեղավոր պաղեցուցիչ, 7 - պահպանման տանկ, 8- հավասարիչ բաք, 9- թիթեղավոր պաստերացիոն - պաղեցուցիչ տեղակայանք, 10 - սերզատ, 11 - համասեռիչ (հոմոգենիզատոր), 12 - կաթի խառնուրդի տանկա, 13 - միջանկյալ բաք, 14- կաթի լցման գիծ

Գծանկար 1. Պաստերացված կաթի արտադրության տեխնոլոգիական սխեման
(ըստ Բեգլարյան Ռ.Ա. և Բեգլարյան Ա.Ռ. [6]):

Պաստերացված կաթն արտադրվում է նաև չոր կաթից [6, 7, 83, 87]: Համաձայն «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգի՝ այս դեպքում կաթը համարվում է վերականգնված [11]:

Չոր կաթի վերականգնման համար օգտագործվում են BCM տիպի հարմարանք խառնիչով և կենտրոնախոլյս պոմապ՝ կաթի և ջրի համար: Չոր կաթը հատուկ բարձիչի օգնությամբ լցնում են խառնիչի ընդունարանը, որտեղ տեղադրված է մաղլ՝ չոր կաթը մաղելու համար, որից հետո չոր կաթը լուծվում է $45\text{--}50^{\circ}\text{C}$ գույնու մեջ: Վերականգնված կաթը պոմապի օգնությամբ տրվում է պաղեցուցիչ, որտեղ պաղեցվում է մինչև $4\text{--}6^{\circ}\text{C}$: Պաղեցված կաթը պահում են հատուկ ամբարների մեջ 6-8 ժամ՝ սպիտակուցների ու չեղանական համար: Նշված ժամանակահատվածից հետո պաղեցված կաթը մաքրում են, նորմալացնում յուղազուրկ կաթով կամ սերի միջոցով, համասեռացնում, պաստերացնում, պաղեցնում, տարայավորում և տեղափոխում $2\text{--}8^{\circ}\text{C}$ սաղը նկուղ [6, 83]:

Այսպիսով, պաստերացումը շաբ կարևոր քայլ է կաթի սպառման հերթանքով առաջացող սննդային ծագման հիվանդությունների կանխարգելման և վերահսկման համար, սակայն, հայրնի է նաև, որ պաստերացումից հետո մթերքի ոչ պաշշաճ մշակումը կարող է կրկին հանգեցնել աղբուղման առաջացմանը: Հերթական պաստերացված կաթի արդադրությունը բարդ գործընթաց է: Անկախ այն հանգամանքից, թե որքան մասնագիտացված և արդյունավետ է աշխարհում պաստերացված կաթ արդադրող ձեռնարկությունը, միշտ էլ առկա է անկանխարենքի և լուրջ խնդրի առաջացման հավանականություն: Ուստի կաթի արդադրությունը պետք է համարվի մի շարք շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ֆերմերների, կաթ և կաթնամթերք արդադրողների, մակարարների, սպառողների, ինչպես նաև պերական գերադեսչական մարմինների մրահեղության և կարգավորման առարկան:

1.2. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ, ՊԱՀԱՆՁՆԵՐՆ ՈՒ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1.2.1. Պաստերացված կաթի անվտանգության ապահովման ազգային պահանջներն ու չափանիշները

Սննդամթերքի անվտանգությունը պարենային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է և << ազգային անվտանգության տարրերից մեկը [3, 13]:

« կառավարության 2011 թվականի որոշմամբ ընդունվել է « սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը, որով սահմանվում են սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման հիմնական ուղղություններ՝ հաշվի առնելով միջազգային, մասնավորապես ԵՄ անդամ պետությունների փորձը: Ռազմավարության հիմնական նպատակը սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների առաջացման ռիսկերը նվազագույնի հասցնելն է, իսկ տեսլականը՝ «-ում ԵՄ պահանջներին համապատասխանող սննդամթերքի անվտանգության համակարգի ձևավորումը: Սակայն, միաժամանակ նշվում է նաև, որ վերջինիս ներդրումը բարդ, գիտական, ծախսատար, աշխատատար և ժամանակատար գործընթաց է [13]:

Ներկայումս «-ում սննդամթերքի անվտանգության բնագավառը կարգավորվում է մի շարք իրավական ակտերով, մասնավորապես «Աննդամթերքի անվտանգության մասին» [25], «Աննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» [26] և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» [9] « օրենքներով:

«Աննդամթերքի անվտանգության մասին» « օրենքն առաջին անգամ ընդունվել է 2006 թվականին, իսկ նոր օրենքը՝ 2014 թվականին: Սույն օրենքով սահմանվում են սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող պահանջները, մասնավորապես արտադրությանը, մակնշմանը, փաթեթավորմանը, ինչպես նաև սննդի շղթայի փուլերին ներկայացվող հիգիենայի ընդհանուր պահանջները: Համաձայն այդ պահանջների՝ սննդամթերքի անվտանգության ապահովման նպատակով, արտադրությունում պետք է ներդրվեն Պատշաճ հիգիենիկ, Պատշաճ արտադրական պրակտիկա և ՎԿՀԿ ինքնահսկման համակարգերը [25]:

2011 թվականին «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքում կատարված փոփոխությամբ ընդունվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը: Վերջինիս միջոցով ստուգում իրականացնող մարմինը ստուգումները նպատակառություն է դեպի առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտները, որոնք, ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման, դասակարգվում են բարձր, միջին և ցածր ռիսկայնության խմբերում [9]:

2014 թվականի հունիսի 21-ին ընդունվել է անվտանգության բնագավառը կարգավորող ևս մեկ օրենք՝ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին»: Սույն օրենքում ամրագրված է, որ համաձայն սպառողների շահերի պաշտպանության սկզբունքի, սննդի շղթան (արտադրությունից մինչև սպառում) պետք է դիտարկել որպես մեկ միասնական ամբողջություն: Օրենքում ամրագրված են նաև սննդամթերքի անվտանգության ոլորտում հետագծելիության և ոիսկերի վերլուծության սկզբունքները [26]:

Բացի նշված ստանդարտներից և օրենքներից, պաստերացված կաթի անվտանգության ապահովման կարևորագույն նորմատիվային փաստաթղթեր են << կառավարության՝ 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգը [11] և << կառավարության՝ 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների» տեխնիկական կանոնակարգը [12]: Առաջին կանոնակարգը սահմանում է կաթի ու կաթնամթերքի անվտանգության ցուցանիշները, կաթնամթերքի մակնշման, փաթեթավորման, պահման, փոխադրման և օգտահանման պահանջները, ինչպես նաև համապատասխանության հավաստման ընթացակարգերը [11]: Երկրորդ կանոնակարգում սահմանված են բոլոր տեսակի սննդամթերքների, այդ թվում կաթնամթերքի համար ընդհանուր հիգիենիկ պահանջները [12]:

2015 թ.-ի հունվարի 1-ից <<այսատանն անդամակցում է Եվրասիական Տնտեսական Միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ), որի անդամ պետությունների արտադրողները պետք է առաջնորդվեն միասնական տեխնիկական կանոնակարգերով: ԵԱՏՄ կողեգիայի նիստի որոշմամբ՝ <<-ում սննդամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգման ոլորտի կարգավորումների իրականացման համար սահմանված է վերջնաժամկետ մինչև 2018 թ.-ի հունվարի 2-ը [73]:

Այսպիսով <<-ում կաթնամթերքի, մասնավորապես, պաստերացված կաթի անվտանգության ապահովման համակարգը կարգավորվում է վերոնշյալ օրենքներով, ինչպես նաև մի շարք այլ ենթաօրենսդրական իրավական ակտերով: Այնուամենայնիվ, մթերքի անվտանգության բնագավառի ազգային օրենսդրությունը վերանայման և

կարարելագործման կարիք ունի՝ այն ասդիմանաբար համապատասխանեցնելով միջազգային լավագույն փորձի պահանջներին:

1.2.2. Պաստերացված կաթի անվտանգության ապահովման միջազգային պահանջներն ու չափանիշները

Սննդամթերքի անվտանգությունը հանրային առողջության հիմնախնդիր է, որը ժամանակակից գլոբալիզացված սպառողական շուկայում առավելապես դիտարկվում է միջազգային տեսանկյունից [140, 141, 175]: Վերջին տասնամյակների ընթացքում տեղի են ունեցել հսկայական զարգացումներ, ինչպես մթերքի արտադրության և վերամշակման մեթոդների, այնպես էլ ընդունված անվտանգության չափորոշիչներին մթերքի համապատասխանության վերահսկման բնագավառներում [122]: Արդյունքում, մթերքի անվտանգության ապահովումն այժմ այնպիսի խնդիր է, որը պահանջում է տարբեր երկրների միջև սերտ համագործակցություն՝ անվտանգությանը ներկայացվող պահանջների ու չափանիշների ներդաշնակեցման և վերահսկման համակարգերի ստեղծման միջոցով [97]:

Պետք է նշել, որ միջազգային պրակտիկայում կաթնամթերքի արտադրության տարբեր սեկտորներ վերահսկվում են տարբեր մարմինների կողմից՝ համապատասխան օրենքների, կանոնների և կանոնակարգերի միջոցով, որոնց դրույթները, սակայն, ժամանակ առ ժամանակ կարող են թվալ կրկնվող և հակասական [177]: Միաժամանակ յուրաքանչյուր երկիր ունի համապատասխան մարմին, որը վերահսկում է մթերքի անվտանգությունը՝ սննդի շղթայի կարգավորման միջոցով [214]:

ԱՄՆ-ում կաթնամթերքի անվտանգության համար պատասխանատու մարմինը Պարենի և դեղերի գործակալությունն է (այսուհետ՝ ՊԴԳ): ՊԴԳ-ն տարիներ շարունակ ապահովում է սննդային ծագման հիվանդությունների և ոիսկի գնահատման վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, որոնք նախատեսված են ինչպես արտադրողների, այնպես էլ սպառողների համար: Մասնավորապես, 1924 թվականին ԱՄՆ հանրային առողջության ծառայությունը, որը ՊԴԳ մասնաճյուղն է, մշակել է Կաթի ստանդարտ կանոնակարգը, որն այժմ հայտնի է որպես Պաստերացված կաթի կանոնակարգ (այսուհետ՝ ՊԿԿ): Սա կարգավորման այնպիսի մոդել է, որն օգնում է պետութ-

յուններին և տեղական ինքնակառավարման մարմիններին ունենալ կաթի սպառմամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելման արդյունավետ ծրագիր: ՊԿԿ-ն ներառում է կաթի նախնական արտադրության, վերամշակման, փաթեթավորման և «Ա» կարգի կաթի վաճառքի կարգավորման վերաբերյալ դրույթներ [150]: Բացի այս, ԱՄՆ հանրային առողջության ծառայությունը մշակել է նաև «Բ» կարգի կաթին ներկայացվող պահանջներ, որոնք իրենց խստությամբ զիջում են ՊԿԿ-ով սահմանված պահանջներին [108, 181]:

Անդրադառնալով մթերքի անվտանգության ապահովման միջազգային համակարգին՝ հարկ է ընդգծել, որ այժմ աշխարհում առավել անվտանգ սննդի շղթաներից մեկը համարվում է Եվրոպական սննդի շղթան [122]: ԵՄ Հանձնաժողովը սննդամթերքի անվտանգությունը համարում է իր գերակայություններից մեկը և Եվրոպական պալամենտի ու Խորհրդի կողմից 2002 թվականին ընդունված ԵՄ 178/2002 կարգավորմամբ սահմանում պարենային օրենսդրության հիմնական սկզբունքներն ու պահանջները [200]: Ըստ որում այդ գերակայության արտացոլումն է համարվում ԵՄ Հանձնաժողովի կողմից ընդունված Սպիտակ գիրքը: Հանձնաժողովը սահմանել է նաև այնպիսի միջոցառումների լայն շրջանակ, որոնք անհրաժեշտ են մթերքի անվտանգության չափորոշիչների բարելավման համար: Սպիտակ գրքի ուղենիշային սկզբունքը կայանում է նրանում, որ սննդամթերքի անվտանգության քաղաքականությունը պետք է հիմնված լինի համապարփակ և համալիր մոտեցման վրա: Այս մոտեցումը պետք է կիրառվի ողջ սննդի շղթայում («ֆերմայից - պատառաքաղ»): Ի թիվս մի շարք սկզբունքների, սննդամթերքի անվտանգության Սպիտակ գրքում սահմանվում է նաև, որ պարենային քաղաքականությունը պետք է հիմնված լինի հետագծելիության սկզբունքի վրա [122]:

«Հետագծելիություն» տերմինը վերաբերում է հումքից վերջնական արտադրանքի ստացման ընթացքին՝ արտադրության, վերամշակման և մատակարարման բոլոր փուլերին հետևելու հնարավորությանը: Շատ հաճախ այս սկզբունքն անհրաժեշտ է մթերքի աղտոտման աղբյուրների և աղտոտված մթերքի հետկանչի ժամանակ արտադրողների նույնականացման համար [102]:

2005 թվականի հունվարի 1-ից ԵՄ երկրներում բոլոր մթերքների, այդ թվում նաև կաթնամթերքների համար, հետագծելիության սկզբունքն ի վերջո դարձել է պարտադիր՝ ընդունվելով որպես ոիսկի կառավարման գործիք, այսինքն՝ գնահատման փուլում նույնականացված ոիսկերի նվազեցման միջոց [124]:

Հետագծելիությունը համարվում է որակի և անվտանգության կառավարման մի շարք համակարգերի, այդ թվում ԻՍՕ 22000 [16, 17], և ՎՎՀԿԿ համակարգերի [93], անբաժանելի մասը: Համաձայն ԵՄ օրենսդրության՝ մթերքը, որն առկա է սպառողական շուկայում կամ ենթակա է մատակարարման, պետք է լինի պատշաճ կերպով մակնշված կամ նույնականացված՝ ապահովելով հետագծելիության սկզբունքի կիրառումը [200]: Սպառման ենթակա մթերքի արտադրության և մատակարարման կարգավորման համար պահանջվում են պարենային քաղաքականության վերաբերյալ ստանդարտներ, հստակ մակնշում, որակի և անվտանգության կառավարման համակարգեր [176]:

Անդրադառնալով մթերքի արտադրության և մատակարարման համար համապատասխան ստանդարտների անհրաժեշտությանը՝ պետք է նշել, որ ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն հիմնել են Կոդեքս Ալիմենտարիուս Հանձնաժողովը (այսուհետ՝ ԿԱՀ), որը մշակում է սննդի ստանդարտներ և նպաստում վերջիններիս համընդհանուր կիրառմանն ու միջազգային ներդաշնակեցմանը: Իր երկարատև գործունեության ընթացքում ԿԱՀ-ն մշակել է կաթի մի շարք ստանդարտներ, որոնք վերաբերում են մակնշմանը, աղտոտիչներին, նմուշառմանը, փորձարկմանը, ոիսկերի գնահատմանն ու վերահսկման գործընթացներին [117, 120, 121]:

Անհրաժեշտ է նշել, որ ԿԱՀ-ն հաստատել է մի շարք սկզբունքներ, որոնց համաձայն մթերքի որակի և անվտանգության վերաբերյալ դրույթները պետք է լինեն գիտականորեն հիմնավորված [136, 209]: Սննդամթերքի անվտանգության ապահովման այս գիտահենք մոտեցումը կապված է այնպիսի համակարգերի գործունեության հետ, ինչպիսիք են ՎՎՀԿԿ-ն, Պատշաճ գյուղատնտեսական, հիգիենիկ և արտադրական գործելակերպերը [125, 165]: Վերջին երեք համակարգերը հայտնի են նաև որպես նախապայմանային ծրագրեր [4, 110, 183]:

Համաձայն ԿԱՀ-ի կողմից ընդունված հիգիենիկ սկզբունքների [121], ՎՎՀԿԿ համակարգը պաշտոնապես առաջարկվում է որպես սննդի շղթայում անվտանգության ապահովման հայեցակարգ, իսկ ըստ պարենամթերքի հիգիենայի վերաբերյալ ԵՄ դիրեկտիվի [127] ՎՎՀԿԿ համակարգը պետք է հիմք հանդիսանա բոլոր տեսակի մթերքների անվտանգության ապահովման ընթացակարգերի համար: ԵՄ անդամ երկրներում այս կառավարման համակարգը պարտադիր է բոլոր ձեռնարկությունների համար [200, 201]: Նշված պահանջը սահմանված է նաև ԵԱՏՄ «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգով [74]:

Ներկայումս ՎՎՀԿԿ համակարգն անվտանգության և նույնականացված վտանգ-ների հսկման առավել արդյունավետ և համակարգային մոտեցում է, քան ավանդական տեսչական ստուգումներն ու որակի հսկման գործընթացները [177, 191]: Նշված համակարգի կարևոր առավելություններից մեկը նաև կանխարգելիչ մոտեցումն է, այսինքն՝ բոլոր հավանական վտանգները նույնականացվում և վերահսկվում են արտադրական միջավայրում [108]:

1.3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԸ

Սպառողները, մասնավորապես, զարգացող երկրներում, հաճախ ունենում են սննդամթերքի կեղծումներով պայմանավորված առողջական վտանգների և ֆինանսական կորուստների հետ կապված խնդիրներ: Արդյունքում ոտնահարվում են սպառողների իրավունքները և նվազում սննդամթերքի մատակարարման նկատմամբ վստահությունը: Ընդ որում, առավել հաճախ կեղծվող մթերքների շարքին են պատկանում կաթը և կաթնամթերքը [136, 153]:

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» <<օրենքի [25] կեղծված է համարվում այն սննդամթերքը.

1) որի բաղադրությունը փոփոխվել է առանց մակնշման համապատասխան փոփոխության,

2) որի մակնշումը փոփոխվել է առանց բաղադրության համապատասխան փոփոխության,

3) որին ավելացվել են նյութեր կամ վերամշակվել է այնպիսի նյութերի ներառմամբ, սահմանված պահանջներին սննդամթերքի անհամապատասխանությունը թաքցնելու նպատակով,

4) որի պիտակի վրա առկա է ոչ ճիշտ նշում՝ սննդամթերքի հատուկ նշանակության մասին,

5) որի ներկայացման կամ առաջարկման համար օգտագործվում է մեկ այլ կազմակերպության անվանումը, առևտրային նշանը կամ ֆիրմային անվանումը՝ առանց այդ կազմակերպությունից պատշաճ կերպով թույլտվություն ձեռք բերելու:

Տարբերում են կաթնամթերքի կեղծման հետևյալ տեսակները՝ քանակական, տեղեկատվական, որակական և համակցված (միաժամանակ առկա են կեղծման 2 և ավելի տեսակներ) [53]:

Կաթնամթերքի քանակական կեղծումն իրականացվում է սպառողական տարաների թերլցման կամ թերկշուման միջոցով [69, 78]: Վերջիններիս բացահայտման և հաստատման համար պետք է առաջնորդվել տվյալ մթերքի նորմատիվային փաստաթղթերով, որոնք սահմանում են շեղումների թույլատրելի տիրույթները [17]:

Կաթնամթերքի տեղեկատվական կեղծումն է իրականացվում է կեղծ կամ սխալ ապրանքառուղեկից փաստաթղթերի, մակնշման և գովազդի միջոցով [33, 62]: <<-ում իրացվող կաթնամթերքի անվտանգությունը հիմնավորող ապրանքառուղեկից փաստաթղթերն են՝ համապատասխանության սերտիֆիկատը կամ համապատասխանության հայտարարագիրը, ինչպես նաև անասնաբուժասանիտարական նորմերին դրա համապատասխանությունը հավաստող փաստաթուղթը [25]:

<<-ում իրացվող կաթնամթերքի սպառողական տարայի վրա անմիջապես կամ դրան փակցված պիտակին պետք է մակնշված լինի մթերքի անվանումը, ջերմամշակման եղանակը, յուղի զանգվածային մասը, արտադրող կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, արտադրողի ապրանքային նշանը, զտաքաշը կամ ծավալը, բաղադրությունը, սննդային հավելումները, կենսաբանորեն ակտիվ հավելանյութերը, սննդային և էներգետիկ արժեքները, պատրաստի կաթնամթերքի մեջ մանրէների (բիֆիդոբակտերիաների, պրոբիոտիկ կոլտուրաների, կաթնաթթվային մանրէների, խմորիչների՝ ԳԱՄ 1գ կաթնամթերքում) պարունակությունը, պահման պայմանները, պատրաստ-

ման և փաթեթավորման թվականը (օրը, ամիսը, տարին), պիտանիության ժամկետը, խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը, ծագման երկիրը և գծիկային ծածկագիրը [11, 25]:

ԵԱՏՄ մակնշման մասին տեխնիկական կանոնակարգով [75] սահմանված է, որ պիտակավորման ժամանակ պետք է ներկայացվի մթերքի որակը բնութագրող իրական նկարագիրը:

Համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» <<օրենքի՝ տեղեկատվությունը, որը մակնշվում է մթերքի պիտակի վրա, պետք է լինի հայերեն, հասկանալի, ամբողջական և հավաստի [25]: Ըստ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» <<օրենքի՝ արտադրողը մթերքների համար պարտավոր է սահմանել այնպիսի պիտանիության ժամկետ, որի ավարտից հետո այն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ: Սննդամթերքի պիտանիության ժամկետի տևողությունը պետք է համապատասխանի նորմատիվ փաստաթղթերով սահմանված անվտանգության պարտադիր պահանջներին: Բացի այդ, արգելվում է պիտանիության ժամկետ չունեցող, ինչպես նաև սահմանված պիտանիության ժամկետն ավարտված սննդամթերքի իրացումը [27]:

Ինչպես արդեն նշվել է, կաթնամթերքի տեղեկատվական կեղծումը կարող է իրականացվել նաև գովազդի միջոցով, ինչը համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» <<օրենքի համարվում է մոլորեցում: Օրենքում նշվում է, որ մոլորեցումը կարող է տեղի ունենալ, մասնավորապես արտադրության գործընթացի, պիտանիության, որակի կամ այլ բնութագրերի հետ կապված [28]: Մոլորեցում է համարվում նաև մթերքի որակն անհիմն կերպով չափազանցնելը, կեղծ, թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվության ներկայացումը [53]:

Կաթնամթերքը համարվում է որակապես կեղծված, եթե [214].

1) ավելացվել է այնպիսի բաղադրամաս, որը վնասակար ազդեցություն ունի մթերքի վրա կամ իջեցնում է նրա որակը,

2) ամբողջությամբ կամ մասամբ փոխարինվել է էժանագին կամ վնասակար բաղադրամասերով,

3) ամբողջությամբ կամ մասամբ հեռացվել են նրա որոշ արժեքավոր կամ անհրաժեշտ բաղադրամասերը,

4) բարձրարժեք սննդամթերքը փոխարինվել է ցածրարժեքով,

5) արտաքին տեսքի, ֆիզիկաքիմիական հատկությունների բարելավման համար ավելացվել են տարբեր կողմնակի և պահածոյացնող նյութեր, կամ պարունակում է առողջության համար վնասակար հավելումներ (երբ մթերքի պիտակի վրա նման տեղեկատվությունը բացակայում է):

Կաթնարդյունաբերական տնտեսություններում քիչ չեն հանդիպում կեղծման դեպքերը, երբ կաթին ավելացվում են կողմնակի նյութեր: Այս դեպքում, կախված կեղծման նպատակով օգտագործվող միջոցներից և փոխարինիչների ծավալներից, տարբերում են կաթի որակական կեղծման հետևյալ եղանակները [22, 23, 32, 78].

1) չոր կաթի վերականգնման եղանակով պաստերացված կաթի արտադրություն, առանց մակնշման մեջ համապատասխան տեղեկատվության,

2) ջրածնի պերօքսիդի և ֆորմալինի ավելացում (պահածոյացման նպատակով),

3) սուդայի ավելացում (հիմնականում թթվության նվազեցման նպատակով),

4) օսլայի ավելացում (խտության մեծացման համար),

5) ջրով նոսրացում (կշռի մեծացման և թթվության նվազեցման նպատակով),

6) յուղագուրկ կաթի ավելացում կամ յուղի հեռացնում,

7) յուղագուրկ կաթի և ջրի ավելացում (կրկնակի կեղծում):

Կաթի պահածոյացման նպատակն այն առանց էական փոփոխությունների երկարատև պահելն է: Հայտնի է, որ կաթի պահպանման ժամանակ առաջացող անցանկայի փոփոխությունները պայմանավորված են մանրէների առկայությամբ և կենսագործունեությամբ: Հետևաբար պահածոյացման համար առաջարկված քոլոր եղանակներն էլ հիմնված են կաթի մեջ գտնվող մանրէների աճը ճնշելու կամ նրանց ոչնչացնելու սկզբունքի վրա: Համաձայն գրականության տվյալների՝ պահածոյացնող նյութերի ազդեցությամբ կաթի մեջ գտնվող մանրէները դադարում են զարգանալ կամ ոչնչանում են: Թեև քիմիական նյութերի ավելացմամբ հնարավոր է ոչնչացնել կաթի մեջ առկա մանրէներին, սակայն վերջիններիս սպանող յուրաքանչյուր քիմիական նյութ բացասաբար է անդրադառնում նաև մարդու առողջության վրա [18]:

Ըստ Ինիխովի [8], նախկինում, երբ բավականին զարգացած չէին կաթի տեղափոխման և պաստերացման եղանակները, ջրածնի պերօքսիդն օգտագործում էին հում կաթի վարակագերձման համար: Այն ավելացնում էին թարմ կաթին 0.02-0.05%-ի չափով և որոշ ժամանակ տաքացնում: Արդյունքում ոչնչանում էին ինչպես ախտածին, այնպես էլ փչացման մանրէները [65]: Զրածնի պերօքսիդը ուժեղ օքսիդիչ է [24], ինչով էլ հիմնականում պայմանավորված է նրա հակամանրէային հատկությունները [176]: Ընդ որում անաերոր և կոլիֆորմ մանրէները ջրածնի պերօքսիդի նկատմամբ առավել կայուն են, քան կաթնաթթվային մանրէները: Բացի այդ, ջրածնի պերօքսիդի ազդեցության արդյունքում ապակտիվանում են ավելի շատ գրամ-բացասական, քան գրամդրական մանրէներ [199]:

Համաձայն ՊԳԿ կողմից տրվող տեղեկատվության՝ ջրածնի պերօքսիդի մեծ քանակությունների (300-800 մլ/լ) ավելացումն առաջացնում է սպիտակուցների քայքայում, նվազեցնում վիտամին A-ի և կարոտինոիդների պարունակությունը: Վերջին հանգամանքով է պայմանավորված այն, որ ներկայում շատ երկրներում որպես սննդային հավելում ջրածնի պերօքսիդի օգտագործումն արգելված է [202]:

Կաթի պահածոյացման նպատակով օգտագործվող ինհիբիրացնող (արգելակող) նյութերի շարքին է դասվում ֆորմալինը [36]: Հայտնի է, որ կաթին ֆորմալին ավելացնելիս թթվությունը բարձրանում է՝ կախված նյութի քանակից: Պետք է նշել, որ ֆորմալինի ազդեցությունից կաթի թթվության կրած փոփոխությունը տեղի է ունենում, քանի որ սպիտակուցների ամինային խումբը ունակցիայի մեջ է մտնում ֆորմալինի ալիքիդային խմբի հետ, սպիտակուցը կորցնում է ամինային խմբերը, ինչի հետևանքով էլ բարձրանում է կաթի թթվային հատկությունները [8]:

Ըստ գրականության տվյալների՝ կաթի պահածոյացման նպատակով օգտագործվող քիմիական նյութերի շարքին է դասվում նաև սոդան՝ նատրիումի կարբոնատը կամ բիկարբոնատը: Հայտնի է, որ սոդան ավելացվում է կաթին թթվության չեզոքացման և հետագա թթվեցման պրոցեսի կանխման նպատակով, քանի որ կաթում սոդայի առկայությունը փոխում է թթվային միջավայրը հիմնայինի, և որպես պահածոյացնող նյութ նպաստում պահպանման ժամկետի երկարացմանը [90]:

Զրով նոսրացման դեպքում պետք է նկատի ունենալ շատ կարևոր հանգամանք, որ կեղծված կաթի անվտանգությունն էականորեն կախված է օգտագործված ջրի որակից: Եթե օգտագործվել է ըստ մանրէաբանական ցուցանիշների աղտոտված ջուր, ապա այս դեպքում մթերքը համարվում է ոչ միայն կեղծված, այլև մարդու առողջության համար պոտենցիալ վտանգավոր [108, 138]: Անհրաժեշտ է նշել նաև, որ ջրով կեղծման հետևանքով մեծանում է կաթի սառեցման կետը [57]:

Ընդհանուր առմամբ, գրականության մեջ ներկայացված են անարատ կաթի սառեցման կետի տարրեր արժեքներ: Ըստ Բեգլարյանի [6] կաթի սառեցման կետի արժեքը տատանվում է -0.542°C մինչև -0.582°C սահմաններում, ըստ Ինիխովի [8]' -0.540°C մինչև -0.58°C սահմաններում կամ միջին հաշվով նրա մեծությունը կազմում է -0.55°C , իսկ ըստ Ֆոքսի [146], եթե կաթի սառեցման կետը -0.525°C է կամ դրանից ցածր, ապա այն կեղծված չէ: Ըստ Նիկոլաևայի [69], ջրով կեղծման դեպքում կաթի սառեցման կետը մոտենում է 0°C -ի:

Համաձայն ԵՄ 92/46/EEC Դիրեկտիվի պահանջի՝ կաթի սառեցման կետը չպետք է բարձր լինի -0.520°C -ից, իսկ ըստ ԵՄ 2597/97 Կարգավորման [128] շուկայահանված խմելու կաթի սառեցման կետը պետք է մոտ լինի կաթի ստացման վայրում ընդունված սառեցման կետի միջին արժեքին: Վերջինիս հետ կապված՝ պետք է նշել, որ <<-ում կաթի սառեցման կետի վերաբերյալ կարգավորվող արժեք որևէ կանոնակարգով [12] սահմանված չէ:

Այսպիսով, տարրեր նյութերի ավելացման միջոցով կաթի և կաթնամթերքի կեղծումը շատ զարգացող երկրներում տարածված խնդիր է և համարվում է անօրինական, քանի որ դրա հետևանքով փոփոխվում է կաթի բնական կազմը: Բացի այդ, կեղծումը կարող է հանգեցնել կաթի մեջ անցանկալի վտանգավոր նյութերի և մանրէաբանական աղտոտվածության առաջացմանը [106, 153]:

1.4. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախկինում սննդամթերքի կարգավորման համակարգերը հիմնված էին միայն վտանգավոր սննդամթերքի իրավական սահմանման, շուկայից հեռացման և

խախտման դեպքի գրանցումից հետո պատժամիջոցների կիրառման վրա: Այս ավանդական համակարգերը չեն կարող դիմակայել սննդամթերքի անվտանգության առկա և զարգացող մարտահրավերներին, քանի որ չեն ապահովում կանխարգելիչ մոտեցում [136]:

Ներկայումս մթերքի անվտանգության վերաբերյալ ՊԳԿ-ի կողմից առաջարկվող մոտեցումը հիմնված է երեք հիմնական դրույթների վրա: Առաջին՝ առաջարկվում է վտանգների հսկման նպատակով ընդունել ռիսկի վրա հիմնված մոտեցում, երկրորդ՝ հսկողական միջոցառումները նպատակառությել հանրային առողջության տեսանկյունից առավել լուրջ վտանգների կանխարգելմանը և երրորդ՝ ռիսկի կառավարման ժամանակ հսկման կամ կարգավորման որոշումների կայացման համար հիմք ընդունել ռիսկի գնահատման արդյունքները [142]:

Վերջին տասնամյակների ընթացքում անցում կատարվեց ռիսկի վերլուծության համակարգին, ինչն ապահովեց սննդամթերքի անվտանգության վտանգների հսկման նոր մոտեցում [141]: Սննդամթերքի անվտանգության այս նոր գիտահենք և ռիսկահեն մոտեցումն ապահովում է սննդային ծագման հիվանդություններից սպառողների առողջության պաշտպանության արդյունավետ ուղի [175], բացի այդ խթանում է սննդամթերքում վտանգների նույնականացմանը, վերջիններիս ծագման և առկայության բնութագրմանը, հավանականության և ուժգնության գնահատմանը, ինչպես նաև վտանգների միջև առաջնահերթության սահմանմանը [141]: Յուրաքանչյուր նույնականացված հավանական վտանգի համար պետք է մշակվեն ուղղիչ գործողություններ և հսկման պլան [143]:

Ընդհանուր առմամբ, ռիսկի վերլուծությունն իրենից ներկայացնում է համակարգային որոշումների կայացման գործընթաց, որը ներառում է առանձին, սակայն փոխկապակցված երեք բաղադրիչներ՝ ռիսկի գնահատում, ռիսկի կառավարում և ռիսկի հաղորդակցում [122, 137, 201]: Նշված բաղադրիչներից առաջինը՝ ռիսկի գնահատումը, համարվում է ռիսկի վերլուծության գիտական հիմքը [140]: Այն ուղղված է մարդու առողջության համար կողմնակի բացասական ազդեցություն ունեցող վտանգների գնահատմանը [135]: Ըստ Կոդեքս Ալիմենտարիուսի սահմանման՝ ռիսկի կառավարումն ուղղված է ռիսկի գնահատման արդյունքում նույնականացված վտանգների

հսկման գործընթացների որոշմանը, իսկ ոիսկի հաղորդակցումը՝ ոիսկ գնահատող, ոիսկ կառավարող և այլ շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության փոխանակմանը [114]:

Անդրադառնալով ոիսկի գնահատման գործընթացին՝ նշենք, որ այն կազմված է վտանգի նույնականացման, վտանգի բնութագրման, էքսպոզիցիայի կամ ազդեցության գնահատման և ոիսկի բնութագրման փուլերից [107]:

Ըստ ԿԱՀ սահմանման՝ վտանգը կենսաբանական, քիմիական կամ ֆիզիկական ագենտ է կամ սննդամթերքի վիճակ, որը կարող է առաջանել առողջության համար կողմնակի ազդեցություններ [113, 121]: Համաձայն ԿԱՀ-ի [113, 114], ԵՄ 178/2002 կարգավորման [200] և ԻՍՕ/ԻԷԿ ստանդարտի [165] «ոիսկ» հասկացությունը սահմանվում է որպես մթերքում առկա վտանգի (վտանգների) հետևանքով առողջության վրա կողմնակի ազդեցության հավանականության և այդ ազդեցության ուժգնության միջև ֆունկցիա: Անհրաժեշտ է ընդգծել, որ այսօր վտանգների հայտնաբերումը և սպառողների առողջության վրա վերջիններիս կողմնակի ազդեցությունների հետ կապված ոիսկերի նվազեցման ընթացակարգերի բնութագրումն առանձնակի կարևորություն ունի անվտանգության արդյունավետ հսկման համակարգի մշակման և զարգացման համար [137, 207]: Բացի այդ, անհերքելի փաստ է, որ հնարավոր վտանգների հսկումը ոիսկի նվազեցման արդյունավետ միջոց է: Ոիսկի մակարդակը կարող է լինել բարձր, միջին կամ ցածր և, իրավիճակից կախված, կարող է տատանվել [176, 179]:

Անդրադառնալով «Վտանգ» հասկացության սահմանմանը՝ կարող ենք նշել, որ վտանգը միշտ ունի սպառողներին վնաս պատճառելու հավանականություն [182]: Վտանգներն առկա են սննդի շղթայի բոլոր փուլերում՝ առաջնային արտադրության, վերամշակման, տեղափոխման, պահպանման, ինչպես նաև սպառման ժամանակ [176]: Դրանց առկայությունը մթերքում կարող է սննդի շղթայի փուլերում ոչ պատշաճ հիգիենայի, արտադրության և վերամշակման ժամանակ կանխարգելիչ միջոցառումների բացակայության, քիմիական միջոցների չարաշահման, աղտոտված հումքի օգտագործման, ինչպես նաև ոչ պատշաճ և անբավարար պայմաններում պահպանման հետևանք լինել [91]:

Ըստ ԱՀԿ-ի՝ վտանգի բնութագրումը մթերքում նոյնականացված վտանգների կողմնակի ազդեցությունների քանակական և որակական գնահատումն է:

Ներկայումս վտանգի բնութագրման համար հաշվի են առնվում հետևյալ դրույթները [207].

- 1) սպառողների առողջական վիճակի հետ կապված ռիսկերը,
- 2) մթերքի արտադրության ժամանակ կիրառվող հումքի հետ կապված ռիսկերը,
- 3) արտադրության գործընթացը և դրա ազդեցությունը վտանգի վրա,
- 4) վերամշակումից հետո կրկին աղտոտման հավանականությունը,
- 5) մթերքի խոհարարական մշակման ժամանակ սպառողների կողմից այդ վտանգի կամ վտանգների հայտնաբերման, հեռացման և ոչնչացման հնարավորությունները:

Ազդեցության գնահատումը մարդու առողջության վրա վտանգի ազդեցության գնահատումն է, որի համար հաշվի են առնվում նաև մթերքի սպառման տվյալները: Ռիսկի գնահատման վերջին փուլը ռիսկի բնութագրումն է, որի ժամանակ որոշվում է առողջության վրա կողմնակի ազդեցության առաջացման հավանականությունն ու ծանրության աստիճանը՝ հիմք ընդունելով ռիսկի գնահատման նախորդ երեք փուլերի՝ վտանգի նոյնականացման, վտանգի բնութագրման և ազդեցության գնահատման ժամանակ հավաքագրված տեղեկատվությունը [141]:

Այժմ ռիսկի գնահատումը լայնորեն ճանաչված է որպես կարգավորման որոշումների համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման, վերլուծության, գիտական հետազոտությունների իրականացման համակարգային մոտեցում [213]: Սակայն, երբեմն ռիսկի գնահատումը միայնակ չի կարող ապահովել այն ամբողջական տեղեկատվությունը, որի հիման վրա ռիսկի կառավարման ժամանակ կայացվում է որոշում: Այսպիսի դեպքերում, երբ մարդու առողջության կամ կյանքի համար առկա է ռիսկ, սակայն գոյություն ունի գիտական անորոշություն, կիրառվում է նախազգուշության սկզբունքը, ինչը սահմանված է ԵՄ մայր օրենքով [200]:

Հսկողական հետազոտությունների կամ գիտական բացահայտումների արդյունքում նոր վտանգի կամ բարձր ռիսկի առկայության դեպքում իրականացվում է ռիսկի գնահատման գործընթաց: Բացի այդ, աղտոտված մթերքի սպառման հետ կապված առողջական ռիսկերի առաջացման հավանականության դեպքում ևս պետք է իրակա-

նացնել ոիսկի գնահատում: Այս դեպքում, կախված խնդրից և հնարավոր լուծումներից, կարող է անհրաժեշտ լինել սահմանել վտանգի առավելագույն մակարդակներ [116]:

1.5. ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԿԱՇԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հանրային առողջապահության հիմնարար ուղղություններ են սահմանվել բնակչության առողջության պահպանումը և հիվանդությունների կանխարգելումը: Դրանք պահանջում են համակարգված և համապարփակ գործողություններ՝ ուղղված, մասնավորապես, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը: Հանրային առողջապահության տեսանկյունից այսօր աշխարհի պետությունների առողջապահական համակարգերի համար առավել մեծ բեռ են ներկայացնում ոչ վարակիչ հիվանդությունները: Հետազոտությունները ցույց են տվել, որ վերջին տարիներին << բնակչության սննդակարգում նկատվում է սպիտակուցների և էներգիայի աղբյուր հանդիսացող սննդամթերքի սպառման նվազում: Միևնույն ժամանակ նկատվում է նյութափոխանակության խանգարման հետևանքով ավելորդ քաշով և ճարպակալումով տառապող մարդկանց թվի աճ: Վերջին 30 տարիների ընթացքում <<-ում ճարպակալումով տառապող մարդկանց թիվը մեծահասակների շրջանում աճել է կրկնակի, դեռահասների շրջանում՝ եռակի [10, 14]:

Միջազգային պրակտիկայում սննդային որոշ բաղադրիչների և մարդու առողջության միջև առկա կապի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև տարբեր հետազոտությունների վերլուծությունն ու ընդհանրացումը հանգեցրել են սննդագիտության նոր ուղղության, այն է՝ ֆունցիոնալ սննդամթերքի արտադրությանը [203, 216, 219]:

Ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրությունը սկիզբ է առել ճապոնիայում 1980-ական թթ.-երին: Ներկայումս ֆունկցիոնալ սննդամթերքի համաշխարհային շուկայի առաջատար երկրներն են ԱՄՆ-ն և ԵՄ երկրները: Համաձայն շուկայական գնահատումների՝ ֆունկցիոնալ սննդամթերքի շուկայում աճ է նկատվում, ինչը փորձագետների կողմից մեկնաբանվում է որպես առողջ սնման համար սննդամթերքի պահանջարկի բարձրացում [180, 203, 216, 219]:

Ֆունկցիոնալ համարվում է այն սննդամթերքը, որը նախատեսված է տարբեր տարիքային խմբերի բնակչության սննդակարգում պարբերաբար օգտագործման համար, նվազեցնում է սննդամբ պայմանավորված հիվանդությունների զարգացման ռիսկը և ֆունկցիոնալ սննդային բաղադրիչների առկայության շնորհիվ նպաստում առողջության պահպանմանն ու բարելավմանը [139]: Որպես ֆունկցիոնալ սննդային բաղադրիչներ կարող են օգտագործվել կենդանական, բուսական և մանրէակենսաբանական ծագման նյութեր, կենդանի միկրօրգանիզմներ, որոնք օրական ֆիզիոլոգիական պահանջի 10-50%-ի չափով պարբերաբար օգտագործման դեպքում բարենպաստ ազդեցություն են թողնում մարդու օրգանիզմի մեկ կամ մի քանի ֆիզիոլոգիական ֆունկցիաների և նյութափոխանակության գործընթացի վրա [48]: Մարդու առողջության վրա ֆունկցիոնալ մթերքների դրական ազդեցությունը դրսևորվում է ֆիզիկական դիմացկունության և իմունիտետի բարձրացմամբ, արյան մեջ խոլեստերինի մակարդակի իջեցմամբ, մարսողության բարելավմամբ և այլն [55, 63, 148]:

Ըստ Գիբսոնի և Ռոբերֆրոյդի կարելի է առանձնացնել ֆունկցիոնալ սննդամթերքի հետևյալ կատեգորիաները.

- ավանդական մթերքներ, որոնք բնականից պարունակում են ֆունկցիոնալ բաղադրիչների զգալի քանակություն: Դրանց թվին են պատկանում կաթնամթերքը, մասնավորապես կաթնաթթվային մթերքները, որոնք պարունակում են կալցիում, կենդանի կաթնաթթվային մանրէներ, ոիբոֆլավին, պեպտիդներ,

- ավանդական մթերքներ, որոնցում իջեցված է օրգանիզմի համար վնասակար բաղադրիչների (օրինակ, հիդրոգենացված ճարպեր, տրանսիզումերային ճարպաթթուներ, սախարոզա, կերակրի աղ, խոլեստերին և այլն) պարունակությունը,

- հարստացված մթերքներ, որոնք ստացվում են ավանդական մթերքներին մեկ կամ մի քանի ֆիզիոլոգիական ֆունկցիոնալ բաղադրիչների ավելացմամբ՝ նպատակ ունենալով կանխարգելել և կարգավորել վերջիններիս ավելցումը կամ պակասը [147]:

Ներկայումս ֆունկցիոնալ սննդամթերքի շարքին են դասվում մեծ թվով մթերքներ, որոնց արտադրության զգալի ծավալը բաժին է ընկնում կաթնամթերքին: Վերջիններս բաժանվում են հետևյալ հիմնական խմբերի՝ կաթնամթերք, որն օժտված է պրոբիոտիկ և (կամ) պրեբիոտիկ հատկություններով, կենսաբանական ակտիվ սննդային

հավելումներ, բուժիչ և կանխարգելիչ մթերքներ, մանկական սննդամթերք և այլն: Այժմ առավել լայն տարածում են գտել ֆունկցիոնալ նշանակություն ունեցող կաթնամթերքները [85, 180, 216]:

«Պրոբիոտիկ» տերմինն առաջին անգամ կիրառվել է 1965 թ.-ին Լիլի և Ստիլուելի կողմից: Ի հակադրություն հակարիոտիկների, պրոբիոտիկները բնութագրվել են որպես մանրէային գործոններ, որոնք խթանում են այլ միկրօրգանիզմների աճը [173]: 1974 թ.-ին Ռիչարդ Պարկերն «պրոբիոտիկ» տերմինն առաջարկել է ախտածին միկրոֆլորայի նկատմամբ անտագոնիստ հատկություն ունեցող միկրօրգանիզմների և դրանց ֆերմենտացիայի արդյունքների բնութագրման համար [192]: Սննդամթերքի հետ համապատասխան քանակությամբ ընդունման դեպքում պրոբիոտիկները հաստ աղիքում պայքարում են ախտածին և պայմանական ախտածին միկրօրգանիզմների դեմ, քացի այդ պրոբիոտիկների կենսագործունեության արդյունքում աղիներում ստեղծվում է օգտակար միկրօրգանիզմների աճը խթանող միջավայր [145, 147, 148]:

Պրոբիոտիկները սպառողներին հասանելի են դեղագործական պատրաստուկների, սննդում կենսաբանական ակտիվ հավելումների, ինչպես նաև բնական մթերքների տեսքով, որոնց շարքում կարևոր տեղ են զբաղեցնում պրոբիոտիկ միկրօրգանիզմներով մակարդված կամ դրանցով հարստացված կաթնաթթվային մթերքները [59]:

Բավարար փաստեր են առկա կաթնաթթվային ցուպիկների ու կոկկերի, ինչպես նաև գրամ-դրական (*Propionibacterium*, *Bacillus*), գրամ-բացասական (*Escherichia coli*, *Citrobacter*) մանրէների, խմորասնկերի (*Candida pintolepsii*, *Saccharomyces*) և սնկերի (*Aspergillus*, *Cordiceps*, *Rhizopus*) պրոբիոտիկ հատկությունների վերաբերյալ: Սակայն պրոբիոտիկների արտադրության ժամանակ առավել հաճախ օգտագործվող միկրօրգանիզմ-պրոբիոտիկներից են էութիոտիկները, որոնք աղիքային նորմալ միկրոֆլորայի ներկայացուցիչներ են: Սրանք առաջին հերթին տարբեր տեսակի բիֆիտոն (*Bifidobacterium adolescentis*, *Bifidobacterium bifidum*, *Bifidobacterium breve*) և կաթնաթթվային մանրէներ (*Lactobacillus acidophilus*, *Lactobacillus casei*, *Lactobacillus bulgaricus*, *Lactobacillus rhamnosus*, *Lactobacillus salivarius*, *Lactobacillus fermentum*) են [85, 92]:

Բիֆիդոբակտերիաները նպաստում են ճարպերի հիդրոլիզին և կլանմանը, բարելավում են սպիտակուցային և հանքային նյութափոխանակությունը, ֆերմենտացնում են ածխաջրեր, լուծում են թաղանթանյութը, արգելակում են ախտածին և պայմանական ախտածին միկրոօրգանիզմների աճը, սինթեզում են Յ խմբի վիտամիններ և անփոխարինելի ամինաթթուներ, ինչպես նաև ամրացնում իմունիտետը [88, 92]:

Հայտնի է, որ իր մեջ լուծված թթվածնի պարունակության պատճառով կաթի մեջ բիֆիդոբակտերիաները վատ են զարգանում: Արդյունքում բարդանում է բիֆիդոբակտերիաների մաքուր կուլտուրաների օգտագործումը կաթնաթթվային մթերքների արտադրության ժամանակ: Վերջին տարիներին լայն տարածում են գտել լակտոբակտերիաները, որոնց անտագոնիստական ակտիվությունը պայմանավորված է բակտերիոցինների, լիզոցիմի, օրգանական թթուների (քացախաթթու, կաթնաթթու) և ջրածնի պերօքսիդի առաջացմամբ [80, 210]:

Ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության զարգացման ուղղություններից մեկը պրեբիոտիկների կիրառումն է: «Պրեբիոտիկ» հասկացությունն առաջին անգամ առաջարկվել է Գիբսոնի և Ռոբերֆրոնիդի կողմից, իսկ բժշկական տերմինաբանության մեջ է մտել 1995թ.-ին [147]: Պրեբիոտիկները նյութեր կամ հավելումներ են, որոնք մարդու աղիներում չեն մարսվում, սակայն բարենպաստ ազդեցություն են թողնում օրգանիզմի վրա՝ ընտրողաբար խթանելով աղիների միկրոֆլորայում առկա բիֆիդոբակտերիաների աճն ու ակտիվացնելով նյութափոխանակությունը [82, 187]:

Նյութը պրեբիոտիկ համարվելու համար պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- մարսողական ֆերմենտների ազդեցությամբ հիդրոլիզի չենթարկվի և չներծծվի ստամոքսաղիքային համակարգի վերին հատվածներում,

- համարվի մեկ կամ մի քանի տեսակի օգտակար մանրէների համար ընտրողական սուբստրատ,

- փոփոխի աղիքային միկրոֆլորայի հավասարակշռությունը դեպի առավել բարենպաստը,

- դրական ազդեցություն ունենա ոչ միայն ստամոքսաղիքային համակարգի, այլ ողջ օրգանիզմի վրա (համակարգային ազդեցություն) [82, 111]:

Պրեբիոտիկներն աղիների միկրոֆլորայի համար ծառայում են որպես սննդային միջավայր, ինչն առավելապես պայմանավորված է մարսողական ֆերմենտների նկատմամբ դրանց կայունությամբ: Վերջինիս շնորհիվ պրեբիոտիկները ստամոքսաղիքային համակարգի վերին հատվածներում հիդրոլիզի չեն ենթարկվում և անփոփոխ հասնում են բիֆիտոբակտերիաների և լակտոբակտերիաների պահպանման վայրը: Բացի այդ, պրեբիոտիկները կարգավորում են արյան մեջ խոլեստերինի և գլուկոզայի մակարդակը, կապում և օրգանիզմից հեռացնում են թունավոր նյութեր, բարձրացնում են կալցիումի և մագնեզիումի յուրացման մակարդակը [77, 111]:

Արտադրությունում պրեբիոտիկների կիրառումը ապահովում է ոչ միայն մթերքի ֆունկցիոնալ հատկությունները, այլև բարելավում է տեխնոլոգիական հատկությունները և երկարացնում պահպանման տևողությունը [82]:

Ըստ քիմիական ծագման՝ պրեբիոտիկները լինում են ածխաջրային և սպիտակուցային (գլիկոպեպտիդներ, լակտոգլոբուլիններ և այլն), ինչպես նաև վիտամիններ և դրանց ածանցյալներ (պանտոտենաթթու, ինոզիտ և այլն): Ածխաջրային պրեբիոտիկների հիմնական տեսակներն են՝

- 1) մոնոսախարիդներ, սպիրտներ՝ քսիլիտ, սորբիտ և այլն,
- 2) օլիգոսախարիդներ՝ լակտովոզ, լակտիտոլ, սոյայի օլիգոսախարիդ, ֆրուկտոսախարիդներ, գալակտոսախարիդներ և այլն,
- 3) պոլիսախարիդներ՝ պեկտին, դեկստրին, ինովին, խիտոզա և այլն [54, 55, 58]:

Այսօր միջազգային պրակտիկայում վերոնշյալ պրեբիոտիկներից առավել կարևոր առևտրային նշանակություն են ստացել օլիգոսախարիդները: Վերջիններս օլիգոմերներ են՝ բաղկացած մի քանի մոնոմերներից՝ մոնոսախարիդներից, որոնք իրար հետ կապված են գլիկոզիդային կապերով: Հայտնի են 20-ից ավել տեսակի օլիգոսախարիդներ, որոնցից առավել տարածված են լակտովոզը, ֆրուկտոսախարիդներն ու գալակտոսախարիդները [95, 111, 198]:

Ֆրուկտոսախարիդներ առկա են մի շարք բույսերում և իրենցից ներկայացնում են ֆրուկտոզի դի, տրի և տետրամերներ: Չեն մարսվում օրգանիզմի կողմից, ենթարկվում են ֆերմենտատիվ քայլայման: Ֆրուկտոսախարիդների բակտերիալ նյութափոխանակության վերջնական արդյունք են հանդիսանում ցածրամոլեկուլային ցնդող թթուները

(քացախաթթու, պրոպիոնաթթու, կարագաթթու), որոնք մասնակցում են ստամոքսահիքային համակարգի թH պահպանմանը և աղիների բջիջների համար հանդիսանում են էներգիայի աղբյուր [172, 205]:

Գալակտոսախարիդները ևս դասվում են չմարսվող ածխաջրերի շարքին, բնության մեջ հանդիպում են կրծքի կաթի մեջ և որոշ բույսերում (սոխ, սխտոր, սոյա և այլն): Գալակտոսախարիդները դրական ազդեցություն են թողնում մարդու օրգանիզմի վրա, նպաստում են թփիդրակտերիաների և կաթնաթթվային մանրէների արագ աճին, բացի այդ՝ կանխարգելում են աղիների պատերի վրա վնասակար մանրէների պահպանումը [96, 169, 174, 206]:

Օլիգոսախարիդներից առավել տարածված է լակտովոզը, որը կազմված է երկու մոլեկուլից, և, ի տարբերություն ֆրուկտոսախարիդների, հեշտ է ֆերմենտացվում ու արագ յուրացվում: Ծնորիկվ իր հատկությունների՝ լակտովոզն օգտագործվում է մանկական սննդամթերքի, կաթնամթերքի և բուժիչ-կանխարգելիչ ազդեցություն ունեցող մթերքների արտադրության ժամանակ [76]:

Լակտովոզը համարվում է ներկայիս առավել շատ ուսումնասիրված պրեբիոտիկը: Որպես քիմիական նյութ առաջին անգամ ստացվել է 1929 թ.-ին և նորից բացահայտվել 40-ական թթ.-երին որպես թփիդոգեն գործոն [190]:

Ապացուցված է, որ մարդու օրգանիզմի վրա լակտովոզի դրական ազդեցությունը պայմանավորված է թփիդոֆլորայի զարգացման խթանմամբ: Հաստատված է նաև, որ լակտովոզը նպաստում է ստամոքսահիքային համակարգի վրա դրական ազդեցություն ունեցող կաթնաթթվային մանրէների ու թփոբակտերիաների զարգացմանը և արգելակում ախտածին մանրէների (օրինակ՝ *Salmonella*) աճը [58, 190]:

Բերանային ուղղով օգտագործման դեպքում լակտովոզը ստամոքսահիքային համակարգի վերին հատվածներում համապատասխան ֆերմենտների բացակայության պատճառով քայլքայման չի ենթարկվում, անցնելով հաստ աղիքով, օգտագործվում է թփիդոբակտերիաների կողմից որպես էներգիայի և ածխածնի աղբյուր [148]:

Լակտովոզի նյութափոխանակության արգասիքներն են քացախաթթուն, կաթնաթթուն և մի քանի այլ օրգանական թթուներ, որոնք ճնշում են աղիներում նեխման միկրոֆլորայի զարգացմանը և թթվեցնում աղիների պարունակությունը: Արդյունքում

կանխարգելվում է սպիտակուցների քայքայման ժամանակ թունավոր նյութերի առաջցումը, թեթևանում երիկամների և յարդի ծանրաբեռնվածությունը, բարձրանում իմունիտետը [187, 212]:

Լակտովոզի բժշկական օգտագործման շրջանակը բավականին լայն է և բացատրվում է օրգանիզմի ընդհանուր նյութափոխանակության վրա նրա բարենպաստ ազդեցությամբ: Լակտովոզն օգտագործվում է տարբեր հիվանդությունների ժամանակ (օստեոպորոզ, հաստ աղիքի քաղցկեղ, սրտանոթային հիվանդություն, ճարպակալում, նյարդային համակարգի հիվանդություններ, հեպատիկ էնցեֆալոպատիա, կոլիտ, փորկապություն և այլն): Բժշկակենսաբանական հետազոտությունների և լակտովոզի խտանյութերի ֆունկցիոնալ և տեխնոլոգիական հատկությունների հիման վրա ստեղծվել են նոր սերնդի մի շարք արտադրանքներ, որոնք բավարարում են օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջը: Լակտովոզով հարստացված բիոկաթնամթերքն օժտված է բուժիչ և կանխարգելիչ հատկություններով [95, 148, 190]:

Հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ կաթի մեջ պրեբիոտիկ լակտովոզ ավելացնելու դեպքում շշվով կերակրվող երեխաների աղիների միկրոֆլորան ունենում է նույն կազմությունը, ինչ մայրական կաթով կերակրվող երեխաների մոտ [95, 111]:

Ներկայումս ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության եղանակներից մեկը պրոբիոտիկների և պրեբիոտիկների ուսցիոնալ համակցված օգտագործումն է: Այսպիսի մթերքները ստացել են «սինբիոտիկ» անվանումը: Սինբիոտիկը ֆիզիոլոգիական, ֆունկցիոնալ սննդային բաղադրիչ է, որի կազմում առկա պրոբիոտիկներն ու պրեբիոտիկները համատեղ ազդեցություն են թողնում մարդու օրգանիզմի նյութափոխանակության գործընթացի և ֆիզիոլոգիական ֆունկցիաների վրա [81, 86, 151]: Կյինիկական հետազոտություններն ապացուցել են, որ սինբիոտիկներն ավելի բարերար ազդեցություն են թողնում, քան պրոբիոտիկներն ու պրեբիոտիկներն առանձին-առանձին [81, 86, 151]:

Կաթնաթթվային մանրէները սննդային թելիկների հետ փոխադարձաբար բարելավում են միմյանց հատկությունները: Պրոբիոտիկների և պրեբիոտիկների համատեղ օգտագործման կարևոր գործոնն այն է, որ սննդային թելիկներն ապահովում են կաթ-

նաթթվային մանրէների արագ տեղաշարժը դեպի աղիների միջին և ստորին հատվածներ: Սննդային թելիկների առկայության դեպքում կաթնաթթվային մանրէները 1,5-2,5 անգամ ավելի արագ են զարգանում, ինչը դրական ազդեցություն է ունենում աղիների միկրոֆլորայի կազմի վրա: Մյուս կողմից, կաթնաթթվային մանրէների և դրանց նյութափոխանակության արգասիքների ազդեցությամբ սննդային թելիկները դառնում են ավելի էլաստիկ, իսկ դրանց ազդեցությունը մարսողական համակարգի լորձաթաղանթի վրա՝ ավելի մեղմ: Կաթնաթթվային մանրէների առկայության դեպքում զգային բարելավվում է սննդային թելիկների զգայորոշման հատկությունները և հեշտանում յուրացումը [54, 205]:

Կաթնաթթվային մանրէների համար էներգիայի կարևոր աղբյուրներ են հանդիսանում մոնո և դիսախարիդները (գյուկոզա, լակտոզա, սախարոզա, մալտոզա), ինչպես նաև 30-50 մկգ/մլ կոնցենտրացիայով օրգանական թթուները (լիմոնաթթու, խնձորաթթու, պիրոխաղողաթթու, ֆումարաթթու, քացախաթթու, մրջնաթթու): Ե՛վ թիֆիդոբակտերիաների, և՝ կաթնաթթվային մանրէների համար որպես էներգիայի աղբյուր կարող է օգտագործվել նաև լակտովոզը: Հաստատված է, որ լակտովոզն ապահովում է *Lac.lactis*, *Str.thermophilus*, *Lb.brevis*, *Lb.fermentum* և *Lb.acidophilus* մանրէների աճը [212]:

Միկրոֆլորայի զարգացման վրա ազդող կարևոր գործոններից է մակարդի կազմի մեջ առկա միկրորգանիզմների միջև փոխազդեցության բնույթը: Գիտնականների տվյալներով *Lac.lactis* subsp. *lactis* և *Lac.lactis* subsp. *cremoris*, *Lac.lactis* subsp. *lactis* և *Lac.lactis* subsp. *lactis* blovar.*diacetylactis* շտամների համատեղման դեպքում բարդ նյութափոխանակության հետևանքով մեծանում է կենսաքիմիական ակտիվությունը [31]:

Հայտնի է, որ *Lactococcus lactis* և *Lactococcus cremoris* լակտոկոկերի, ինչպես նաև բուրմոնք առաջացնող լակտոկոկերի համատեղ ցանքսի դեպքում արագ բարձրանում է թթվությունը, ակտիվանում է բուրմոնք առաջացնող լակտոկոկերի կենսունակությունը, ինչպես նաև վերջիններիս կողմից բուրավետ նյութերի առաջացումը [81]:

Հայտնի է նաև, որ մարդու օրգանիզմի վրա դրական ազդեցության ապահովման նպատակով կաթնաթթվային մթերքում պահպանման ժամկետի ողջ ընթացքում պետք է լինեն սահմանված քանակությամբ կաթնաթթվային մանրէներ: Տարբեր երկրներում

սահմանված պահանջներին համաձայն՝ մթերքում պրոբիոտիկ միկրոօրգանիզմների քանակը պետք է լինի 10^6 - 10^9 ԳԱՄ/սմ³ ոչ պակաս [210]:

Խարիտոնովի և ուրիշների կողմից տեսականորեն հաստատվել է, որ կաթնամթերքում պրոբիոտիկ միկրոօրգանիզմների պարունակությունը պետք է լինի 10^8 ԳԱՄ/գ-ից ոչ պակաս, իսկ լակտովոզի պարունակությունը՝ 100գ մթերքում $0,5$ գ-ից ոչ ավել ($0,5\%$): Նույն հետազոտողների կողմից մկների վրա իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ փորձարկված կաթնաթթվային մթերքներից առավել արտահայտված դրական ազդեցություն է ունեցել այն սինթիոտիկ մթերքը, որը պատրաստվել է *Lb. bulgaricus*, *Lb. acidophilus* և *Sts. thermophilus* պարունակող մակարդով և $0,2\%$ լակտովոզի ավելացմամբ [86]:

Գրականության տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ներկայումս առկա է պրոբիոտիկների և պրեբիոտիկների ավելացմամբ ֆունկցիոնալ սննդամթերքի արտադրության աճի միտում: Վերջին տարիներին մի շարք աշխատանքներ են նվիրվել արտադրության և պատրաստի արտադրանքի պահպանման ողջ ընթացքում լակտովոզի և մակարդի միկրոֆլորայի միջև փոխազդեցության ուսումնասիրմանը, բացի այդ, մշակվել են լակտովոզ պարունակող մի շարք կաթնաթթվային մթերքների տեխնոլոգիաներ [61, 63, 72]:

Հետազոտությունները ցույց են տվել, որ լակտովոզի կիրառումը դրական ազդեցություն է թողնում յոգուրտի որակական և ֆունկցիոնալ հատկությունների վրա [95, 167]:

Կաթնաթթվային ըմպելիքի արտադրությունը ներառում է պաստերացված և պաղեցված կաթնային շիճուկի մեջ մակարդի ավելացում: Վերջինս պարունակում է *Lb. acidophilus* և *B. bifidum*, պատրաստվում է լակտովոզ պարունակող աճի խթանիչից: Կաթնաթթվային ըմպելիք կարող է արտադրվել նաև նախքան պաստերացումը կաթի մեջ $0,5\text{-}1\%$ շիճուկային սպիտակուցի, $1\text{-}10\%$ հանքային ջրի և $1\text{-}2,5\%$ լակտո-լակտովոզի օշարակի ավելացման և ստացված խառնուրդը բիֆիդոբակտերիաներով ու ացիդոֆիլային ցուպիկներով մակարդման եղանակով [72]:

Ֆունկցիոնալ հատկություններով կաթնաթթվային ըմպելիքի արտադրման մեկ այլ եղանակ ներառում է կաթի նորմալացում, համասեռացում, նորմալացված խառնուրդի

տաքացում, $12,2\pm2\%$ լակտովոզ պարունակող «Լակտոբել-ԷԴ» սննդային բիֆիոդեն խտանյութի ավելացում (8%), խառնում, համասեռացում, ֆիլտրում, ստացված խառնուրդի պաստերացում, պաղեցում մինչև մակարդման ջերմաստիճանը ($40\text{-}45^{\circ}\text{C}$), մակարդի ավելացում, մակարդում 4-5 ժամ, մինչ 75-90⁰Ծ թթվության մակարդվածքի ստացումը, պաղեցում և տարայավորում: Այս դեպքում որպես մակարդ օգտագործվում է թերմոֆիլ կաթնաթթվային ստրեպտոկոկերից և ացիդոֆիլային ցուպիկներից 4:2 հարաբերությամբ պատրաստված մակարդը: Նշված եղանակը թույլ է տալիս ըմպելիքը հարստացնել արժեքավոր սպիտակուցներով, լակտովոզով, պրոբիոտիկ միկրոօրգանիզմներով և արդյունքում ստանալ սիմբիոտիկ հատկություններով օժտված և ախտածին միկրոֆլորան ճնշող մթերք [79]:

Այսպիսով կարող ենք փաստել, որ լակտովոզի կիրառմամբ ֆունկցիոնալ սննդամթերքի արդադրությունը սննդարդյունաբերության զարգացող ուղղություններից է: <Եվրևաբար ազգաբնակչության առողջ սնման ապահովման գեսանկունից ֆունկցիոնալ նշանակության կաթնամթերքի, մասնավորապես մածնի արդադրության գեխնոլոգիայի կարարելագործումն արդիական է և պահանջում է խորքային ուսումնասիրություններ:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ, ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ատենախոսությունն իրականացվել է 2012-2016 թվականներին, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ) Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի (այսուհետ՝ ԱՄՎՏ) ամբիոնում ու պրոբլեմային լաբորատորիայում և <<ԳԱԱ Էկոլոգանոռսֆերային հետազոտությունների կենտրոնի (այսուհետ՝ Էկոկենտրոն) Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոնում:

Հետազոտություններն ու փորձարկումներն իրականացվել են Էկոկենտրոնի Կենտրոնական անալիտիկ լաբորատորիայում, «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայում, <<ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտարտադրական կենտրոնի Սննդի փորձաքննության մանրէաբանական լաբորատորիայում, «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Սանհարահիգիենիկ փորձարկման լաբորատորիայում և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի «Բնագիտական կենսաբանական առարկաներ» բաժնի լաբորատորիայում: Հետազոտություններն իրականացվել են ըստ Գծանկար 2-ում ներկայացված սխեմայի:


Պաստերացված կաթի արտադրության վտանգների նույնականացման և ռիսկերի գնահատման նպատակով իրականացվել է ոչ միայն շուկայում իրացվող պատրաստի արտադրանքի, այլ նաև պաստերացված կաթի արտադրության հումքի հետազոտություններ: Հետազոտությունների համար բազա են հանդիսացել կաթնամթերք արտադրող ութ տարբեր կազմակերպության՝ «Ժամարա և Անի» ՍՊԸ, «Աշտարակ կաթ» ՓԲԸ, «Բիոկաթ» ՍՊԸ, «Բոնիլատ» ՍՊԸ, «Ժամարա» ՍՊԸ, «Դուատր Մարիաննա» ՍՊԸ, «Մարիլա» ՍՊԸ, «Չանախ» ՍՊԸ, կողմից շուկայահանված և լայն սպառում ունեցող պաստերացված կաթի նմուշներ, համապատասխանաբար M-1, M-2, M-3, M-4, M-5, M-6, M-7 և M-8 կոդավորմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ութ կազմակերպության կողմից շուկայահանված պաստերացված կաթն առավելագույն սպառում է Երևան քաղաքի բնակչության կողմից, ուստի մթերքի նմուշառումն իրականացվել է մայրաքաղաքի տարբեր վաճառակետերից:

Որպես առաջին քայլ՝ պատերացված կաթի իրացման շուկայում իրականացվել է պատրաստի մթերքի սպառողական տարաների վրա առկա մակնշվածքի ուսումնասիրություն և գործող ազգային իրավական պահանջներին [11, 25] վերջինիս համապատասխանության գնահատում: Որպես հաջորդ քայլ՝ իրականացվել է շուկայահանված պատերացված կաթի նմուշառում և կեղծումների ուսումնասիրություն, այդ թվում՝ չոր կաթի, կողմնակի, պահածոյացնող նյութերի և ֆիզիկաքիմիական ցուցանիշների որոշում: Կատարվել են նաև մանրէաբանական և քիմիական վտանգների նույնականացման հետազոտություններ:

Ուսումնասիրությունների համար բազա են հանդիսացել նաև 2012-2015 թթ.-ին ՀՀ ներմուծված չոր կաթի նմուշները և ՀՀ մարզերի 18 տարբեր շրջանի ֆերմերային տնտեսություններից, ինչպես նաև կաթի հավաքման կետերից բերված հում կաթի նմուշները: Ընդ որում, համաձայն նախապես տրված տեղեկատվության, այդ ֆերմերային տնտեսությունները և կաթի հավաքման կետերը հում կաթ են հանձնում կաթնամթերք արտադրող կազմակերպություններին, իսկ տնտեսություններից կաթի տեղափոխումն արտադրամաս հիմնականում իրականացնում են արտադրողները՝ ֆերմերներին պատկանող տարաներով:


Նմուշառված հում կաթի արտադրման վայրերի անվանումներն ու նմուշների համար նշանակված կոդերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

Հում կաթի արտադրման վայրերի տեղադիրքերը ՀՀ տարածքում ներկայացված են Նկար 1-ում:



Պայմանական նշաններ: Հում կաթի նմուշների նիշերը, RM-1-18 հում կաթի նմուշների համարները

Նկար 1. Հում կաթի արտադրման վայրերը ՀՀ տարածքում



Գծանկար 2. Հետազոտությունների կատարման սխեման

Հում կաթի արտադրման վայրերի անվանումներն ու նմուշների կոդերը

C/C	Հում կաթի արտադրման վայրերը	Հում կաթի նմուշների կոդերը
Սյունիքի մարզ		
1	Բոնակողթ	RM-4
2	Գորիս	RM-17
3	Ազարակ	RM-18
Վայոց Ձորի մարզ		
4	Վայք	RM-16
Արարատի մարզ		
5	Արևշատ	RM-5
6	Վեդի	RM-6
Գեղարքունիքի մարզ		
7	Վարդենիս	RM-9
8	Սարովսան	RM-15
Կոտայքի մարզ		
9	Նոր Երզնկա	RM-1
10	Աբովյան	RM-14
Արմավիրի մարզ		
11	Փշտավան	RM-13
Արագածոտնի մարզ		
12	Շիլքառ	RM-2
13	Բերքատան	RM-3
14	Արագած	RM-8
Շիրակի մարզ		
15	Թալին	RM-7
16	Սպիտակ	RM-10
17	Աշոցք	RM-11
Լոռու մարզ		
18	Ստեփանավան	RM-12

Չոր կաթի առկայության որոշում: Պաստերացված կաթի մեջ չոր կաթի հայտնաբերումն իրականացվել է ԻՍՕ 18329:2004 միջազգային ստանդարտով սահմանված մեթոդով [160], ինչպես նաև Էկոկենտրոնում տեղայնացված թիոբարբիտոլաթթվային (TBA) մեթոդով [195]:

ԻՍՕ 18329:2004 միջազգային ստանդարտով սահմանված մեթոդը [160] հիմնված է կաթի մեջ ֆուրողին ֆերմենտի քանակական որոշման վրա, իսկ թիոբարբիտոլաթթվային (TBA) մեթոդը՝ չոր կաթի սպիտակուցներում առկա պերօքսիդային միացու-

թյունների և թիոբարիտուրաթթվի փոխազդեցության հետևանքով գունավոր միացության առաջացման վրա [195]:

Ջրածնի պերօքսիդի առկայության որոշում: Պաստերացված կաթի մեջ ջրածնի պերօքսիդի (H_2O_2) որակական հայտնաբերումն իրականացվել է ըստ ԳՕՍ 24067-80 միջամտական ստանդարտի: Այս ստանդարտով սահմանված մեթոդը հիմնված է ջրածնի պերօքսիդի և կալիումի յոդիդի օսլային լուծույթի փոխազդեցության արդյունքում կապույտ գունավորման առաջացման վրա: Մեթոդի զգայունությունը կազմում է 0.001 % [38]:

Ֆորմալինի առկայության որոշում: Պաստերացված կաթի մեջ ֆորմալինի որակական հայտնաբերումն իրականացվել է ըստ մեթոդական ցուցումների: Ըստ այս մեթոդի, 2 մլ 1.82 խտության խառնուրդի վրա (որը պատրաստվում է 100 մլ H_2SO_4 և 1.3 խտության HNO_3 թթուները խառնելու միջոցով) կաթ ավելացնելուց հետո երկու հեղուկների միացման սահմանում դեղին օղակի առաջացումը վկայում է հետազոտվող կաթի մեջ ֆորմալինի բացակայության, իսկ մանուշակագույն օղակի առաջացումը՝ ֆորմալինի առկայության մասին [2, 24]:

Սոդայի առկայության որոշում: Պաստերացված կաթի մեջ սոդայի առկայության որոշումն իրականացվել է ըստ ԳՕՍ 24065-80 միջամտական ստանդարտի [37], ինչպես նաև ռոզալաթթվային մեթոդով [2, 24]: ԳՕՍ 24065-80 ստանդարտով սահմանված մեթոդը հիմնված է սոդա (ընդ որում, և' կարբոնատ, և' բիկարբոնատ) պարունակող կաթի մեջ բրոմտիմոլկապույտի լուծույթի (0.01 %-անոց) գույնի փոփոխության վրա. դեղին երանգի առաջացումը վկայում է կաթի մեջ սոդայի բացակայության, իսկ դեղնականաչավուն երանգի առաջացումը՝ կաթի մեջ սոդայի առկայության մասին: Այս մեթոդի զգայունությունը կազմում է 0.05 % [37]:

Համաձայն պաստերացված կաթի մեջ սոդայի հայտնաբերման ռոզալաթթվային մեթոդի՝ հետազոտվող կաթին ռոզալաթթվի 0.2 %-անոց սպիրտային լուծույթ ավելացնելուց հետո նարնջակարմիր գունավորման առաջացումը փաստում է սոդայի բացակայության, իսկ վարդակարմիր (մորեգույն) գունավորման առաջացումը՝ սոդայի առկայության մասին [2, 24]:

Օսլայի առկայության որոշում: Պաստերացված կաթի մեջ օսլայի որակական հայտնաբերումն իրականացվել է ըստ մեթոդական ցուցման: Ըստ այս մեթոդի, 3 մլ հետազոտվող կաթի վրա 1 մլ յոդի 0,5%-անոց սպիրտային լուծույթ ավելացնելուց հետո մուգ մանուշակագույն գունավորման առաջացումը վկայում է կաթի մեջ օսլայի առկայության, իսկ դեղնավուն երանգի առաջացումը՝ օսլայի բացակայության մասին [24]:

Ֆիզիկաքիմիական ցուցանիշների և բաղադրամասերի որոշում: Որոշվել են պաստերացված կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ սառեցման կետը, խտությունը, ավելացված ջրի պարունակությունը, ինչպես նաև պաստերացված կաթի բաղադրամասերից կաթնայուղի, սպիտակուցի, կաթնաշաքարի և յուղազուրկ չոր նյութերի (ՍՈՄՈ) պարունակությունները:

Նշված ցուցանիշների որոշումն իրականացվել է էքսպրես եղանակով՝ կաթի հետազոտման Master ECO անալիզատորի կիրառմամբ:

Մանրէաբանական վրանգների նույնականացման հետազույթուն: Պաստերացված և հում կաթի նմուշներում որոշվել են ախտածին մանրէների, այդ թվում *Salmonella* (ըստ ԳՕՍ 30519-97 [44]), *St. Aureus* (ըստ ԳՕՍ 30347-97 [43]), *Lysteria monocytogenes* մանրէների (ըստ ԳՕՍ 51921-2002 [52] և ՄՅ 4.2.1122-02 [71]), ՄԱՖԱՄ և ԱՅԽՄ առկայությունը (ըստ ԳՕՍ 9225-84 [50]):

Քիմիական վրանգների նույնականացման հետազույթուն: Պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում իրականացվել է նաև քիմիական վտանգների, այդ թվում թունավոր տարրերի (Pb, As, Cd, Hg), պեստիցիդների (ԴԴՏ և դրա մետաբոլիտներ (ԴԴԴ, ԴԴԵ), հեքսաքլորդիկլոհեքսանի (այսուհետ՝ <ՔՑՀ> α, β, γ իզոմերներ) և ռադիոնուկլիդների (Cs-137 և Sr-90) նույնականացում:

Պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում թունավոր տարրերի պարունակությունները որոշվել են ատոմնաաբսորբցիոն մեթոդով (գրաֆիտային ատոմիզացիայի եղանակով՝ կիրառելով *Analyst 800* սպեկտրոմետրը (*Perkin Elmer, USA*), որի զգայունությունը կազմում է 0.00001 ppb: Նմուշների նախապատրաստումն ու թունավոր տարրերի տարրալուծումն իրականացվել է աղյուսակ 2-ում ներկայացված ստանդարտներով սահմանված մեթոդներով:

Պաստերացված հում և չոր կաթի նմուշներում թունավոր տարրերի որոշումը

Հ/Հ	Թունավոր տարրը	Ստանդարտը
1	Կապար (Pb)	ԻՈՕ - 8288 [163]
		ԳՕՍ - 26929-94 [41]
		ԳՕՍ - 30178-96 [42]
2	Արսեն (As)	ԻՈՕ - 11696 [159]
		ԳՕՍ - 26929-94 [41]
		ԳՕՍ - 30178-96 [42]
3	Կադմիում (Cd)	ԻՈՕ - 8288 [163]
		ԳՕՍ - 26929-94 [41]
		ԳՕՍ - 30178-96 [42]
4	Սնդիկ (Hg)	ԻՈՕ - 5666 [162]
		ԳՕՍ - 26927-86 [40]
		ԳՕՍ - 30178-96 [42]

Պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում **պեստիցիդների** առկայությունը որոշվել է ըստ ԻՈՕ 3890-1 ստանդարտով սահմանված մեթոդի [161]՝ կիրառելով "Trace TSQ" գազային գունալուսանկարիչ/մասս սպեկտրաչափը (*Tehermo Electron Corporation, US*), որի զգայունությունը կազմում է 10-15 գ/լ:

Պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում **ռադիոնուկլիդների** առկայությունը որոշվել է "DSA 1000" գամմա-սպեկտրաչափի (*US Cambera*) կիրառմամբ, Cs-137 ռադիոնուկլիդը գամմա սպեկտրոմետրիա, իսկ Sr-90 ռադիոնուկլիդը բետուա սպեկտրոմետրիա եղանակներով:

Ռիսկերի գնահատում: Ռիսկերի գնահատման համար կազմվել է մատրիցա (Գծանկար 3)՝ հիմք ընդունելով Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IMC) կողմից առաջարկվող մեթոդաբանությունը [66]: Նշված մատրիցայի մոխրագույն տիրույթում գտնվող վտանգները համարվում են էական (նշանակալի), իսկ սպիտակ տիրույթում գտնվողները՝ ոչ էական: Հիմք ընդունելով նաև ԳՕՍ Ռ 51705.1-2001 [51] ստանդարտը՝ սպիտակ տիրույթը համարվում է թույլատրելի ռիսկի տիրույթ, իսկ մոխրագույնը՝ անթույլատրելի ռիսկի տիրույթ:

Հետևանքի ծանրություն	A					
	B					
	C					
	D					
	E					
	1	2	3	4	5	
	Ցածր	Ցածր	Միջին	Միջին	Բարձր	
Վտանգի հանդիպման հավանականություն						

Գծանկար 3. Ոիսկերի գնահատման մատրիցա

Գծանկար 3-ում A, B, C, D և E-ն հետևանքի ծանրության (վտանգի ազդեցության 5 կատեգորիաներն են), որոնք բնութագրվում են հետևյալ կերպ [66].

- կարող է առաջացնել մահացու ելքեր (A),
- կարող է առաջացնել լուրջ հիվանդություններ (B),
- կարող է առաջացնել հիվանդություններ (C),
- կարող է առաջացնել անհարմարություններ (D),
- էական ազդեցություն չի դրսևորում (E):

Ըստ վերոնշյալ մեթոդաբանության վտանգի հանդիպման հավանականությունը կարող է լինել՝ ցածր (վտանգը քիչ հավանական է կամ հազվադեպ է հանդիպում), միջին (վտանգը կարող է լինել հավանական) և բարձր (վտանգը հանդիպում է հաճախակի):

Մածնի տեխնոլոգիայի կատարելագործմանն ու տեխնոլոգիական սխեմայի մշակմանն ուղղված հետազոտություններ: Մածնի ստուգիչ և փորձնական նմուշների պատրաստման համար որպես հումք օգտագործվել է կովի թարմ կաթ, որի թթվությունը եղել է 19°Ծ -ից ոչ բարձր, խտությունը՝ $1030 \text{ կգ}/\text{մ}^3$ -ից ոչ ցածր: Մածնի արտադրության նպատակով օգտագործված պրեբիոտիկ լակտոլոզի օշարակի բնութագիրը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Պրեթիոտիկ լակտովոզի օշարակի բնութագիրը

Արտադրական անվանումը	Արտադրող կազմակերպություն (երկիր)	100 գ-ում պարունակում է		
ДЮФАЛАК сироп	Solway pharma (Նիդեռլանդներ)	լակտովոզ	66,7 գ	
		գալակտոզա	11,3 գ	
		լակտոզա	6,7 գ	

Իրականացվել է լակտովոզ պարունակող մածնի փորձնական և ստուգիչ նմուշների հետազոտություն: Որոշվել են՝

- տիտրվող և ակտիվ թթվությունները, համապատասխանաբար ըստ ԳՕՍ 3624-92 [47] և ԳՕՍ 32892-2014 [45],

- յուղանությունը (%)՝ ըստ ԳՕՍ 5867-90 [49],

- սպիտակուցի զանգվածային մասը (%)՝ ըստ ԳՕՍ 25179-90 [39],

- ընդհանուր լուծվող ազոտի ֆրակցիան և ոչ սպիտակուցային լուծվող ազոտի ֆրակցիան որոշվել է Ի. Կլիմովսկու սիսեմայով, Կյելիալի մեթոդով [2],

- ազատ ամինաթթուների, այդ թվում անփոխարինելի ամինաթթուների պարունակությունը՝ AAA-881 ավտոմատ անալիզատորի օգնությամբ,

- հագեցած և չհագեցած ճարպաթթուների պարունակությունը, ըստ՝ ԳՕՍ 32915-2014 (գազային քրոմատոգրաֆիայի եղանակ) [46],

- կաթնաթթվային մանրէների քանակը՝ ըստ ԳՕՍ 10444.11-89 [34],

- խմորասնկի և բորբոսասնկերի քանակը՝ ըստ ԳՕՍ 10444.12-88 [35]:

Մածնի զգայորոշման ցուցանիշների գնահատումն իրականացվել է առաջնորդվելով կաթնաթթվային մթերքների որակի գնահատման բալային սանդղակով: Առավելագույն գնահատականը՝ 30 բալն է [70]:

Հետազոտությունների արդյունքների արտադրական փորձարկումներն իրականացվել են «ԽԱՔ» ՍՊԸ կաթնամթերք արտադրող ձեռնարկությունում (ներդրման ակտը ներկայացված է **Հավելված 5-ում**):

Փորձարկումներն իրականացվել են 3-5 կրկնությամբ: Ստացված արդյունքների վերլուծություններն ու վիճակագրական մշակումներն իրականացվել են Microsoft Excel ծրագրի միջոցով:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1.1. Պաստերացված կաթի մեջ չոր կաթի առկայության հետազոտության արդյունքները

Կաթնամթերքի կեղծումը կարևոր նշանակություն ունեցող խնդիր է, ինչը պայմանավորված է հիմնականում տնտեսական վնասներով: Սակայն, պետք է նշել նաև, որ կեղծումների որոշ տեսակներ կարող են մարդու առողջության վրա թողնել բացասական ազդեցություններ [108, 153]: Բնական մթերքի համեմատ՝ կեղծված մթերքը հաճախ պարունակում է ավելի շատ հնարավոր վնասակար նյութեր, որոնք հանրային առողջության տեսանկյունից համարվում են ռիսկի գործոններ [170]: Բացի այդ, մթերքի արտադրության ժամանակ կարող են անօրինական կերպով օգտագործել հումքի փոխարինիչներ և արդյունքում մոլորեցնել սպառողներին [62]: Հետևաբար, կաթնամթերքի կեղծումների հայտնաբերումն ու կանխարգելումը տնտեսական և սոցիալական լուրջ խնդիր է [166], որի լուծման համար կարևորվում են օրենսդրական կարգավորումներն ու համապատասխան հսկողությունը:

Մթերքների կեղծումների հայտնաբերման նպատակով կիրառվում են ռեֆերենս մեթոդներ, որոնք խիստ կարևորվում են, մասնավորապես, տեսչական մարմինների կողմից հսկողության իրականացման տեսանկյունից [108]: Սա, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ, կաթնարդյունաբերության ոլորտում պետական վերահսկողության ժամանակ փորձարկումներն իրականացվում են ըստ ԻՍՕ 17025 ստանդարտի [164] հավատարմագրված լաբորատորիաներում, որոնք պետք է կիրառեն ռեֆերենս մեթոդներ: Միաժամանակ, պետք է փաստել նաև, որ կեղծումների հայտնաբերման արագ և տնտեսապես մատչելի մեթոդների մշակումը, ինչպես նաև հետազոտությունների կատարման որակի անընդհատ բարելավումը կաթնամթերքի սպառողական շուկան կեղծված մթերքներից գերծ պահելու երաշխիքներ են: Բացի այդ, արագ և մատչելի մեթոդների կիրառումը հնարավորություն

կընծեռի շուկայի վերահսկողության արդյունավետության բարձրացման և սպառողների շահերի առավելագույնս պաշտպանության համար:

Հայտնի է, որ պաստերացված կաթը արտադրվում է ինչպես թարմ, այնպես էլ չոր կաթից: Համաձայն Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի [11], պաստերացված կաթի արտադրության ժամանակ չոր կաթի օգտագործումն արգելված չէ, սակայն այս դեպքում իրացման ենթակա պատրաստի արտադրանքի տարայի վրա պետք է մակնշված լինի «Վերականգնված կաթ» անվանումը: Այս պահանջն ամրագրված է նաև ԵԱՏՄ «Սննդամթերքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգում [74]:

Պաստերացված կաթի սպառողական շուկայում իրականացված ուսումնասիրությունների ընթացքում գրանցված արդյունքները թույլ են տալիս փաստել, որ տարվա տարբեր ժամանակահատվածներում՝ անկախ հանրապետությունում արտադրվող կաթի ծավալների սեզոնային տատանումների, իրացվող պաստերացված կաթի վրա մակնշված է, որ այն պատրաստված է կովի անարատ կաթից: Ընդ որում, չոր կաթի օգտագործման վերաբերյալ պաստերացված կաթի տարաների վրա որևէ տեղեկություն չի գրանցվել:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ պլանավորվել է իրականացնել կաթնամթերքի շուկայում լայն սպառում ունեցող պաստերացված կաթի նմուշներում չոր կաթի հայտնաբերման հետ կապված ուսումնասիրություններ:

Համաձայն գրականության մեջ առկա տվյալների՝ կաթնամթերքում, այդ թվում նաև պաստերացված կաթում, չոր կաթի առկայության որոշումը կարող է իրականացվել ներկայումս լաբորատոր պրակտիկայում լայն կիրառություն ունեցող բարձր արդյունավետության հեղուկ քրոմատոգրաֆ (High performance liquid chromatography, ԲԱՀՔ) սարքի միջոցով [193]: Պաստերացված կաթի մեջ չոր կաթի հայտնաբերման այսպիսի մեթոդ է սահմանվում ԻՍՕ 18329:2004 միջազգային ստանդարտով [160]: Նշված մեթոդով հետազոտությունների իրականացումը բավականին բարդ և ծախսատար գործընթաց է, ինչը պայմանավորված է փորձարկման ժամանակ ԲԱՀՔ սարքի և թանկ քիմիական նյութերի կիրառմամբ, ինչպես նաև արդյունքների վերծանմամբ: Հետևաբար,

խիստ կարևորվում է պատերացված կաթում չոր կաթի հայտնաբերման պարզ, արագ և, միաժամանակ, տնտեսապես մատչելի այլընտրանքային մեթոդի առկայությունը:

Որոշ հետազոտողների կարծիքով վերոնշյալ բնութագրերին բավարարող մեթոդ է համարվում թիոբարբիտուրաթթվային մեթոդը (ԹԲԹ), որը հիմնված է չոր կաթի սպիտակուցներում առկա պերօքսիդային միացությունների և թիոբարբիտուրաթթվի փոխազդեցության հետևանքով գունավոր միացության առաջացման վրա [94]: Այս մեթոդի կիրառման համար պահանջվող քիմիական նյութերը մատչելի են, անհրաժեշտ ծավալները՝ քիչ: Բացի այդ, օգտագործվող սարքավորումներն են ֆոտոէլեկտրոկոլորի-մետրն (ՖԷԿ) ու ջրային բաղնիքը:

Պետք է նշել, որ <<-ում ԹԲԹ մեթոդի կիրառման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չկա: <աշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն, որ ԹԲԹ-ն համարվում է պարզ և արագ մեթոդ, իրականացվել է վերջինիս տեղայնացմանն ուղղված աշխատանքներ:

ԹԲԹ մեթոդի տեղայնացման ժամանակ իրականացվել են, ինչպես կովի թարմ անարատ կաթի (ստուգիչ նմուշ), այնպես էլ վերջինիս և չոր կաթի խառնուրդի (տարբեր տոկոսայնության) հետազոտություններ: Նշված խառնուրդը պատրաստելու համար 100 մլ-ոց հարթահատակ կոլբայի մեջ կովի թարմ անարատ կաթին ավելացվել է 1-ին դեպքում՝ 5 գ, 2-րդ դեպքում՝ 10 գ, 3-րդ դեպքում՝ 20 գ, իսկ 4-րդ դեպքում՝ 30 գ չոր կաթ (ստացվել են համապատասխանաբար՝ 5 %-ng, 10 %-ng, 20 %-ng և 30 %-ng խառնուրդները շերմային մշակման ենթարկելուց հետո հետազոտվել են ԹԲԹ մեթոդով և գրանցվել են ՖԷԿ ցուցմունքները, որի համար 440 նմ ալիքում որոշվել է լուսի անցումը: Այս հետազոտությունների արդյունքները ներկայացված են աղ. 4-ում:

Աղյուսակ 4

Անարատ և չոր կաթից պատրաստված խառնուրդի հետազոտումը ԹԲԹ մեթոդով

C/C	Խառնուրդի տոկոսայնությունը (%)	ՖԷԿ ցուցմունքը
1	5	0,05
2	10	0,12
3	20	0,22
4	30	0,40
5	Ստուգիչ	0

Վերոնշյալ հետազոտության արդյունքները ցուց են տալիս, որ տարբեր քանակությամբ (5%, 10 %, 20 %, 30 %) չոր կաթ պարունակող խառնուրդների համար ֆԷԿ ցուցմունքը 0-ից մեծ է եղել (համապատասխանաբար՝ 0,05, 0,12, 0,22, 0,40), իսկ չոր կաթ չպարունակող ստուգիչ նմուշում ֆԷԿ ցուցմունքը եղել է 0: Այսպիսով, կարելի է պնդել, որ ջերմային մշակման ենթարկված (տվյալ դեպքում պաստերացված) կաթի մեջ չոր կաթի առկայության որոշման ժամանակ ֆԷԿ՝ 0 արժեքից մեծ ցուցմունքը վկայում է չոր կաթի առկայության, իսկ 0 արժեքը՝ բացակայության մասին:

ԹԲԹ մեթոդի հավաստիության և արդյունավետության հաստատման նպատակով իրականացվել է համեմատական հետազոտություն. պաստերացված կաթի մեջ չոր կաթի առկայությունը որոշվել է ինչպես ԹԲԹ, այնպես էլ ԻՍՕ 18329:2009 ստանդարտով սահմանված մեթոդով: Ընդ որում, հետազոտման ենթակա պաստերացված կաթի նմուշներն (արտադրողներ՝ «Բոնիլատ» ՍՊԸ, «Դուստր Մարիաննա» ՍՊԸ, «Մարիլա» ՍՊԸ) ընտրվել են պատահականության սկզբունքով:

Երկու տարբեր մեթոդով (ԹԲԹ և ԻՍՕ 18329:2009) համեմատական հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Պաստերացված կաթում չոր կաթի առկայությունն ըստ երկու տարբեր մեթոդների

Հ/Հ	Նմուշ	Մեթոդ	
		ԹԲԹ	ԻՍՕ 18329:2009
1	Բոնիլատ	չ/h	չ/h
2	Մարիաննա	+	+
3	Մարիլա	չ/h	չ/h

Ծանոթություն: «չ/h» - չի հայդնաբերվել, «+» - առկա է:

Աղյուսակ 5-ում ներկայացված արդյունքները փաստում են, որ երկու մեթոդով իրականացված հետազոտության արդյունքները համընկնում են, ինչն էլ փաստում է ԹԲԹ մեթոդի հավաստիության մասին [195]:

Տեղայնացված ԹԲԹ մեթոդով իրականացվել է կաթնամթերքի շուկայում լայն սպառում ունեցող պաստերացված կաթի այլ նմուշներում (M-1, M-2, M-3, M-5, M-8) չոր կաթի հայտնաբերման հետազոտություններ: Արդյունքում, պաստերացված կաթի նմուշներում հայտնաբերվել է չոր կաթի առկայություն:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոնշյալ հետազոտության արդյունքները, կարող ենք փաստել, որ <<-ում պաստերացված կաթի արտադրության ժամանակ թարմ անարար կաթի փոխարեն օգտագործվում է համեմատաբար էժան և դնդեսապես առավել շահավետ հումք՝ չոր կաթ, ինչը համարվում է որակական կեղծում: Բացի այդ, հետազոտված պաստերացված կաթի նմուշների դարաների վրա չոր կաթի կիրառման վերաբերյալ որևէ դեղեկարգվություն չի գրանցվել, ինչն էլ համարվում է դեղեկարգվական կեղծում և պաստերացված կաթի արտադրության վերաբերյալ գործող ազգային օրենսդրության [11, 25] պահանջների խախտում:

3.1.2. Պաստերացված կաթի մեջ պահածոյացնող և կողմնակի նյութերի առկայության ուսումնասիրությունը

Պաստերացված կաթը համարվում է լայն սպառում ունեցող կաթնամթերք, ուստի նրանում կողմնակի նյութերի առկայությունը հանրային առողջության տեսանկյունից կարող է խնդրահարուց լինել: Վերջիններիս շարքին են դասվում, մասնավորապես, պահածոյացնող նյութերը: Պետք է նշել, որ այս նյութերով՝ հում կաթի և պատրաստի կաթնամթերքի աղտոտումը տարիներ շարունակ համարվում է կաթնարդյունաբերության լրջագույն խնդիրներից մեկը [56]:

Ենելով խնդրի արդիականությունից և հաշվի առնելով կաթնամթերքի կեղծումների ռիսկայնությունը, մասնավորապես, պաստերացված կաթի արտադրությունում պահածոյացնող և արգելակող (ինհիբիրացնող) նյութերի՝ ջրածնի պերօքսիդի, ֆորմալինի և սոդայի հավանական օգտագործումը, իրականացվել է պաստերացված կաթում նշված նյութերի առկայության ուսումնասիրություն: Որպես ստուգիչ նմուշ օգտագործվել է կովի թարմ անարատ կաթ:

Կաթնամթերք արտադրող ութ կազմակերպության կողմից շուկայահանված պաստերացված կաթի նմուշներում վերոնշյալ նյութերի առկայության հայտնաբերման հետազոտությունների արդյունքները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղ. 6-ում ներկայացված տվյալները փաստում են, որ պաստերացված կաթի բոլոր նմուշներում ջրածնի պերօքսիդի և ֆորմալին պահածոյացնող նյութեր չեն հայտնաբերվել: Սակայն հետազոտության արդյունքները վկայում են պաստերացված կաթի

բոլոր նմուշներում սոդայի առկայության մասին: Վերջինս համարվում է որակական կեղծում և կաթնամթերքի արտադրությանը ներկայացվող ազգային իրավական պահանջի խախտում, քանի որ, համաձայն Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի [11], կաթը չպետք է պարունակի լվացող, ախտահանող, չեղոքացնող և արգելակող նյութեր: Բացի այդ, համաձայն «Սննդամթերքի անվտանգության մասին» <<օրենքի» [25], արգելվում է արտադրել և իրացնել վտանգավոր ու կեղծված սննդամթերք, այդ թվում նաև կաթնամթերք:

Աղյուսակ 6

Պաստերացված կաթի նմուշներում պահածոյացնող նյութերի առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	Պահածոյացնող նյութերի առկայությունը		
		Զրածնի պերօրսիդ	Ֆորմալին	Սոդա
1	M-1	-	-	+
2	M-2	-	-	+
3	M-3	-	-	+
4	M-4	-	-	+
5	M-5	-	-	+
6	M-6	-	-	+
7	M-7	-	-	+
8	M-8	-	-	+
9	Ստուգիչ	-	-	-

Ծանոթություն: «-» չի հայդնաբերվել, «+» - առկա է:

Նշենք նաև, որ հետազոտությունների ընթացքում հաճախ կաթի նմուշները չեն դիմակայել ոչ միայն եռացմանը, այլև ջրային բաղնիքում մի քանի րոպե պահմանը: Սա ապացուցում է, որ սոդայի ավելացման ժամանակ արդեն իսկ առկա են եղել կաթի կենսաքիմիական գործընթացների խանգարումներ և անցանկալի փոփոխություններ, այսինքն սոդան ավելացվել է կաթի բարձր թթվության չեղոքացման համար [21]:

Հաշվի առնելով, որ պաստերացված կաթի մեջ կողմնակի նյութերի շարքին է դասվում նաև օսլան, իրականացվել է վերջինիս որակական հայտնաբերմանն ուղղված հետազոտություններ: Արդյունքում պաստերացված կաթի նմուշներում օսլայի առկայություն չի հայտնաբերվել:

Այսպիսով, պասպերացված կաթի նմուշներում կողմնակի և պահածոյացնող նյութերի առկայության հետազոտության արդյունքները վկայում են ջրածնի պերօքսիդի, ֆորմալինի, օսլայի բացակայության և սոդայի առկայության մասին: Հաշվի առնելով կաթի մեջ սոդայի առկայության հետևանքով հնարավոր առողջական ռիսկերը, կարող ենք նշել, որ հետազոտված պասպերացված կաթի բոլոր նմուշները սոդայի պարունակության հետևանքով չեն կարող համարվել մարդու առողջության համար անվտանգ և ոչ ռիսկային:

3.1.3. Պաստերացված կաթի ֆիզիկաքիմիական ցուցանիշների ուսումնասիրություն

Հայտնի է, կաթը պարունակում է մարդու առողջ, լիարժեք սննդակարգի և օրգանիզմի նյութափոխանակության համար անհրաժեշտ անփիտարինելի բաղադրամասեր՝ սպիտակուցներ, ածխաջրեր (հատկապես կաթնաշաքար), կաթնայուղ, որոնք հեշտությամբ յուրացվում են օրգանիզմի կողմից [6, 7, 218]: Այդ բաղադրամասերով և դրանց միջև առկա փոխադարձ կապերով են պայմանավորված կաթի ֆիզիկաքիմիական հատկությունները: Հետևաբար, կաթի բաղադրության ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել նրա ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխմանը [29]: Համաձայն առկա տվյալների՝ կաթի բաղադրամասերի միջև նորմալ հարաբերակցության և արդյունքում ֆիզիկաքիմիական հատկությունների փոփոխություն կարող է առաջանալ, մասնավորապես, կաթի կեղծումների հետևանքով: Հետևաբար, ընդունված է, կաթի բնականության գնահատման, այսինքն կեղծումների բացահայտման և գնահատման նպատակով, որոշել նրա ֆիզիկաքիմիական ցուցանիշները, մասնավորապես՝ սառեցման կետը [32]: Վերջինիս որոշումը հնարավորություն է տալիս արագ կերպով հաստատել կաթի՝ ջրով նոսրացման միջոցով կեղծված լինելու հանգամանքը [184]:

Զրով նոսրացման միջոցով կեղծման հայտնաբերման և հաստատման ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն, որ կաթի սառեցման կետը խիստ հաստատուն ցուցանիշ չէ, քանի որ մի շարք գործոններից կախված այն կարող է փոփոխվել [108]: Այդ գործոնների շարքին են դասվում կաթի քիմիական կազմը, ջերմային մշակումը, ինչպես նաև կաթի պահպանման ժամկետը երկարացնող տարբեր պահածոյացնող

նյութերի, այդ թվում սոդայի, ֆորմալինի և ջրածնի պերօքսիդի առկայությունը: Ըստ Զագորսկայի և այլոց կաթի մեջ նշյալ նյութերի անգամ փոքր քանակությունների առկայության դեպքում կաթի սառեցման կետը էականորեն նվազում է, այնուամենայնիվ, սառեցման կետը չի կարող կիրառվել կաթում այդ պահածոյացնող նյութերի առկայության հսկման նպատակով [220]:

Անդրադառնալով կաթի սառեցման կետի արժեքի վրա ազդող գործոններին, նշենք, ինչպես փաստում են Բեգլարյանը և այլոք [6], լակտացիայի սկզբում և վերջում կաթի սառեցման կետը մեծանում է, ի հաշիվ հանքային նյութերի քանակի ավելացման:

Պաստերացված կաթի՝ ջրով կեղծման հայտնաբերման նպատակով կատարվել է սառեցման կետի որոշում: Վերջինիս արժեքները ներկայացված են աղ. 7-ում:

Աղյուսակ 7


Պաստերացված կաթի սառեցման կետի արժեքը

C/C	Նմուշների կոդերը	Սառեցման կետի արժեքը, °C
1	M-1	-0,531
2	M-2	-0,542
3	M-3	-0,510
4	M-4	-0,482
5	M-5	-0,553
6	M-6	-0,571
7	M-7	-0,546
8	M-8	-0,549
9	Ստուգիչ	-0,554

Ինչպես ցոյց են տալիս աղ. 7-ում բերված տվյալները, հետազոտված պաստերացված կաթի նմուշների սառեցման կետի արժեքները տատանվում են $-0,571^{\circ}\text{C}$ -ից մինչև $-0,482^{\circ}\text{C}$ սահմաններում: Սառեցման կետի առավել ցածր արժեք ($-0,571^{\circ}\text{C}$) ստացվել է M-6 նմուշի համար, իսկ առավել բարձր արժեք ($-0,482^{\circ}\text{C}$)՝ M-4 նմուշի համար:

Հաշվի առնելով պաստերացված կաթի նմուշների սառեցման կետի արժեքները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ջուր ավելացնելիս կաթի սառեցման կետը մեծանում է [6, 23, 78, 146], կարելի է ենթադրել կաթի՝ ջրով կեղծվածության մասին: Վերջինիս հաստատման նպատակով պաստերացված կաթի նմուշներում որոշվել են

ավելացրած ջրի քանակությունները, որոնք ներկայացված են Գծանկար 4-ում: Հետազոտության ժամանակ որպես ստուգիչ նմուշ օգտագործվել է կովի անարատ կաթ:




Գծանկար 4. Ավելացված ջրի պարունակությունը պաստերացված կաթի նմուշներում

Գծանկար 4-ում ներկայացված տվյալները վկայում են հետազոտված պաստերացված կաթի ութ նմուշից հինգում (M-1, M-2, M-3, M-4 և M-7) ավելացրած ջրի առկայության մասին, համապատասխանաբար՝ 2,5%, 1,2%, 6%, 12,3% և 0,8%:

Հայտնի է, որ ջրով նոսրացման ժամանակ, որպես կանոն, կաթի խտությունը փորձրանում է [22, 23, 69]: Համաձայն Կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգի պահանջի [11], կաթի խտությունը պետք է լինի 1026 կգ/մ³-ից ոչ պակաս, իսկ ըստ գրականության տվյալների [6]՝ այն տատանվում է 1027-1030 կգ/մ³ սահմաններում:

Հետազոտված պաստերացված կաթի նմուշների խտության փաստացի արժեքները ներկայացված են Գծանկար 5-ում:




Գծանկար 5. Պաստերացված կաթի խտությունը (կգ/մ³)

Ստացված արդյունքների համաձայն՝ խտության ամենացածր արժեքը (1023,28 կգ/մ³) գրանցվել է M-4 նմուշի համար, որում հայտնաբերվել էր ավելացրած ջրի ամենամեծ քանակությունն (12,3%) ու սառեցման կետի ամենաբարձր արժեքը (-0,482°C): Խտության ցածր արժեքներ են գրանցվել նաև M-1, M-2, M-3 և M-7 նմուշների համար, որոնց մեջ հայտնաբերվել էին ավելացրած ջրի որոշակի պարունակություններ:


Վերոնշյալ ֆիզիկաքիմիական ցուցանիշներից բացի պաստերացված կաթի նմուշներում որոշվել են նաև կաթի կարևոր նշանակություն ունեցող բաղադրամասերից կաթնայուղի, յուղագույրկ չոր մնացորդի (ՍՈՄՈ, ՅՉԿՄ), սպիտակուցների և կաթնաշքարի պարունակությունները:

Պաստերացված կաթի նմուշներում որոշված կաթնայուղի փաստացի պարունակությունները ներկայացված են Գծանկար 6-ում: Վերջիններս համեմատվել են պաստերացված կաթի սպառողական տարաների վրա մակնշված տվյալների հետ: Արդյունքները ցույց են տալիս, որ միայն M-3, M-4 և M-5 նմուշներում են կաթնայուղի փաստացի պարունակությունները համապատասխանում տարաների վրա մակնշված տվյալների հետ (համապատասխանաբար՝ 3,5q, 3,6q և 3,2q): Մյուս նմուշներում, մասնավորապես՝ M-6 և M-7 նմուշներում, կաթնայուղի փաստացի պարունակությունները (համապատասխանաբար՝ 3,3q և 3,4q) մակնշված արժեքից (3,2q) մեծ են: Հետազոտված պաստերացված կաթի M-1, M-2 և M-8 նմուշների համար գրանցվել է հակառակ պատկերը. կաթնայուղի փաստացի պարունակությունները (համապատասխանաբար՝ 3,1q, 3,1q և 2,9q) մակնշված արժեքից (3,2q) փոքր են:



Գծանկար 6. Պաստերացված կաթի նմուշներում կաթնայուղի պարունակությունը


Քանի որ կաթնայուղը համարվում է կաթի չոր մնացորդի փոփոխական բաղադրամասը, ուստի կաթի որակի գնահատման համար գործնականում առավել հաճախ որոշվում է չոր յուղազուրկ մնացորդը [29]: ՅԿՀՄ-ն համարվում է առավել հաստատուն ցուցանիշ, սակայն կաթի կեղծման դեպքում այն ևս կարող է փոփոխվել: Ուստի, չոր յուղազուրկ մնացորդի արժեքը կարելի է կիրառել կաթի բնականության գնահատման նպատակով. Եթե այդ արժեքը ցածր է 8,2%-ից, ապա ամենայն հավանականությամբ կաթը կեղծված է ջրով [32]: Կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգով [11] ևս սահմանված է, որ կովի կաթի մեջ չոր յուղազուրկ մնացորդի զանգվածային մասը պետք է լինի 8,2%-ից ոչ պակաս: Հետազոտված պաստերացված կաթի նմուշներում յուղազուրկ չոր մնացորդի (ՅԿՀՄ) զանգվածային մասը ներկայացված է Գծանկար 7-ում: Ըստ ներկայացված տվյալների, պաստերացված կաթի միայն M-5, M-6 և M-8 նմուշներն են համապատասխանում վերոնշյալ պահանջին: Պաստերացված կաթի նմուշներից M-4-ի համար, որում հայտնաբերվել էր ավելացրած ջրի ամենաբարձր պարունակությունը (12,3%), գրանցվել է ՅԿՀՄ ամենացածր արժեքը (7,52%): Բացի այդ, M-1, M-2, M-3 և M-7 նմուշներում, որոնցում հայտնաբերվել էին ավելացրած ջրի որոշակի քանակություններ, ՅԿՀՄ պարունակությունները ևս 8,2 %-ից ցածր են (համապատասխանաբար՝ 7,91%, 8,1%, 7,8% և 8,16%):



Գծանկար 7. Պաստերացված կաթի նմուշներում ՅԿՀՄ պարունակությունը


Պաստերացված կաթի նմուշներում որոշված սպիտակուցի փաստացի պարունակությունները ներկայացված են Գծանկար 8-ում: Վերջիններս համեմատվել են կաթի սպառողական տարաների վրա առկա տվյալների հետ: Արդյունքում հայտնաբերվել է, որ պաստերացված կաթի նմուշներից միայն M-1-ում, M-2-ում և M-7-ում է սպիտակուցի փաստացի պարունակությունը (2,8q) համապատասխանում տարայի վրա մակնշված

տեղեկատվությանը: Պաստերացված կաթի մյուս նմուշներից M-3-ում և M-4-ում սպիտակուցի փաստացի պարունակությունները (համապատասխանաբար՝ 2,7գ և 2,1գ) փոքր են մակնշված արժեքներից (համապատասխանաբար՝ 2,8գ և 2,6գ): Մյուս նմուշներում՝ M-5-ում, M-6-ում և M-8-ում, հայտնաբերվել են սպիտակուցի՝ մակնշված արժեքները (համապատասխանաբար՝ 2,6գ, 2,6գ և 2,8գ) գերազանցող պարունակություններ (համապատասխանաբար՝ 3գ, 3գ և 2,9գ):



Գծանկար 8. Սպիտակուցների պարունակությունը պաստերացված կաթի նմուշներում

Պաստերացված կաթի նմուշներում որոշված հաջորդ կարևոր բաղադրամասի՝ կաթնաշաքարի, վերաբերյալ տվյալները ներկայացված են Գծանկար 9-ում:



Գծանկար 9. Կաթնաշաքարի պարունակությունը պաստերացված կաթի նմուշներում

Համաձայն Գծանկար 9-ում ներկայացված տվյալների՝ պաստերացված կաթի նմուշներում կաթնաշաքարի փաստացի պարունակությունները գտնվում են 3,22-4,7գ սահմաններում: M-4 նմուշում, որում հայտնաբերվել էր ավելացրած ջրի մեծ քանակություն (12,3%), կաթնաշաքարի փաստացի պարունակությունը համեմատաբար փոքր է (3,22գ): Սակայն պետք է նկատել, որ մյուս նմուշներում (M-1, M-2, M-3 և M-7),

որոնցում հայտնաբերվել էին ավելացրած ջրի որոշակի քանակություններ, կաթնաշքարի փաստացի պարունակությունները ևս փոքր են (համապատասխանաբար՝ 4,36գ, 4,41գ, 4,1գ և 4,65գ), քանի որ, ըստ գրականության մեջ առկա տվյալների [3, 4] կաթի մեջ կաթնաշքարի միջին պարունակությունը կազմում է 4,7 %: Պաստերացված կաթի M-5 նմուշում կաթնաշքարի պարունակությունը (4,69գ) մոտ է, իսկ M-6 և M-8 նմուշներում հավասար նշված միջին արժեքին (4,7գ):

Այսպիսով, իրականացված հեղազուղության արդյունքները վկայում են սպառողական շուկայում իրացվող պաստերացված կաթի որոշ նմուշների (M-1, M-2, M-3, M-4 և M-7)' ջրով կեղծվածության մասին: Բացի այդ, առկա են նաև Կաթի և կաթնամթերքի դեխնիկական կանոնակարգով [9] սահմանված պահանջներին ու մակնշված դրվագներին անհամապատասխանության դեպքեր:

3.2. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կաթնամթերքի մանրէաբանական որակը պայմանավորված է հումքի նախնական մշակման և վերամշակման պայմաններով, ինչպես նաև արտադրության ժամանակ չերմային մշակումից հետո աղտոտվածության առաջացմամբ: Այս առումով խիստ կարևորվում են կաթնամթերքի մանրէաբանական հետազոտությունները, որոնք էական նշանակություն ունեն պատրաստի մթերքի անվտանգության գնահատման և կանոնակարգման համար [215]:

Պետք է ընդգծել, որ պատրաստի կաթնամթերքում մանրէների որակական և քանակական կազմը պայմանավորված է արտադրության ժամանակ որպես հումք օգտագործվող հում կաթի մանրէաբանական ցուցանիշներով [30]: Հաստատված է, որ հում կաթի մանրէաբանական աղտոտվածության մակարդակը հանդիսանում է այդ կաթից արտադրվող կաթնամթերքի որակն ու անվտանգությունը պայմանավորող կարևորագույն գործոններից մեկը [178, 199]: Բացի այդ, հում կաթի միկրոֆլորան կարևոր գործոն է նաև արտադրական կորուստների կանխարգելման և կաթնամթերքի պահպանման օպտիմալ ժամկետի ապահովման համար [104]: Հետևաբար, հում կաթի մանրէաբանական անվտանգության վերաբերյալ տվյալների իմացությունն էական

նշանակություն ունի սպառման ենթակա կաթնամթերքի անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ իրականացվել են ինչպես պատրաստի մթերքի՝ պաստերացված կաթի, այնպես էլ վերջինիս արտադրության ժամանակ որպես հիմնական հումք օգտագործվող հում կաթի մանրէաբանական վտանգների նույնականացմանն ու ռիսկերի գնահատմանն ուղղված հետազոտություններ:

Ախտածին, այդ թվում սալմոնելլա (*Salmonella*) ցեղի մանրէներ

Հայտնի է, որ սալմոնելլա ցեղի մանրէները ջերմակայուն չեն [108], ուստի պաստերացված կաթում նրանց առկայությունը հիմնականում պայմանավորված է անհամապատասխան պաստերացման իրականացմամբ կամ պաստերացումից հետո մթերքի աղտոտմամբ: Այսինքն, *Salmonella* մանրէի վտանգավորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ կարող է պահպանվել ոչ պատշաճ ջերմային մշակման ընթացքում և հումքից փոխանցվել պատրաստի մթերքին՝ առաջացնելով խաչածն աղտոտում: Բացի այդ, տարբեր ինֆեկցիաների կլինիկական նշաններ ունեցող աշխատողները ևս կարող են հանդիսանալ *Salmonella* ցեղի մանրէներով կաթի աղտոտման աղբյուր [112]:

Ախտածին, այդ թվում *Salmonella* ցեղի մանրէների առկայությունը որոշվել է ինչպես պաստերացված կաթի, այնպես էլ հում կաթի նմուշներում: Արդյունքները ներկայացված են աղ. 8-ում և աղ. 9-ում: Ստացված տվյալները վկայում են պաստերացված և հում կաթի նմուշներում ախտածին, այդ թվում *Salmonella* ցեղի մանրէների բացակայության մասին:

Աղյուսակ 8

Պաստերացված կաթի նմուշներում ախտածին, այդ թվում *Salmonella* մանրէների առկայությունը

Ախտածին, այդ թվում <i>Salmonella</i> մանրէների առկայությունը								
Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]	Փաստացի							
	M-1	M-2	M-3	M-4	M-5	M-6	M-7	M-8
1 գ-ում չ/թ	չ/հ	չ/հ	չ/հ	չ/հ	չ/հ	չ/հ	չ/հ	չ/հ

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլատրվում, «չ/հ» - չի հայտնաբերվել:

Հում կաթի նմուշներում ախտածին, այդ թվում *Salmonella* մանրէների առկայությունը

</<	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Ախտածին, այդ թվում <i>Salmonella</i> մանրէների առկայությունը
			Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]
			25 գ-ում չ/թ
			Փաստացի
1	RM-1	Նոր Երզնկա	չ/h
2	RM-2	Ծիլքար	չ/h
3	RM-3	Բերքառատ	չ/h
4	RM-4	Բոնակոր	չ/h
5	RM-5	Արևշատ	չ/h
6	RM-6	Վեդի	չ/h
7	RM-7	Թալին	չ/h
8	RM-8	Արագած	չ/h
9	RM-9	Վարդենիս	չ/h
10	RM-10	Սպիտակ	չ/h
11	RM-11	Աշոցք	չ/h
12	RM-12	Ստեփանավան	չ/h
13	RM-13	Փշատավան	չ/h
14	RM-14	Աբովյան	չ/h
15	RM-15	Սարուխան	չ/h
16	RM-16	Վայր	չ/h
17	RM-17	Գորիս	չ/h
18	RM-18	Ազարակ	չ/h

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլավորվում, «չ/h» - չի հայտնաբերվել:

Ուկեգույն սպաֆիլակոլ՝ *Staphylococcus aureus* (*St. aureus*)

St. aureus համարվում է սննդային ծագման հիվանդությունների առաջացման գլխավոր պատճառներից մեկը: Այս մանրէն արագորեն կարող է բազմանալ կաթի և կաթնամթերքի մեջ, այնուհետև սննդային թունավորումների առաջացման պատճառ դառնալ: Սովորաբար սննդային թունավորման կիխնիկական նշաններն են սրտխառնոցը, փսխումը, որովայնային ցավերն ու փորլուծությունը, իսկ ծանր դեպքերում՝ գլխացավը և ջրազրկումը: Երեխաների և տարեց մարդկանց շրջանում կարող են գրանցվել նաև մահվան դեպքեր [171]:

St. aureus առկայությունը որոշվել է պաստերացված կաթի նմուշներում, ինչպես նաև հում կաթում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս համարվում է այս մանրէով պատրաստի կաթնամթերքի աղտոտման առավել հավանական աղբյուրներից

մեկը [149]: Հետազոտության արդյունքները ներկայացված են համապատասխանաբար աղ. 10-ում և աղ. 11-ում:

Աղյուսակ 10

Պասպերացված կաթի նմուշներում St. aureus առկայությունը

Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]	St. aureus առկայությունը							
	Փաստացի							
	M-1	M-2	M-3	M-4	M-5	M-6	M-7	M-8
1 գ-ում չթ	չ/թ	չ/թ	չ/թ	չ/թ	չ/թ	չ/թ	չ/թ	չ/թ

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլապրվում, «չ/թ» - չի հայդնաբերվել:

Աղյուսակ 11

Հում կաթի նմուշներում St. aureus առկայությունը

Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	St. aureus առկայությունը
RM-1	Նոր Երզնկա	չ/թ
RM-2	Ծիլքար	չ/թ
RM-3	Բերքառատ	չ/թ
RM-4	Բոնակորթ	չ/թ
RM-5	Արևշատ	չ/թ
RM-6	Վեդի	չ/թ
RM-7	Ղալին	+
RM-8	Արագած	չ/թ
RM-9	Վարդենիս	+
RM-10	Սպիտակ	չ/թ
RM-11	Աշոցք	+
RM-12	Ստեփանավան	չ/թ
RM-13	Փշատավան	+
RM-14	Արովյան	+
RM-15	Սարուխան	+
RM-16	Վայր	+
RM-17	Գորիս	չ/թ
RM-18	Ազարակ	+

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլապրվում, «չ/թ» - չի հայդնաբերվել, «+» - հայդնաբերվել է:

Համաձայն ներկայացված արդյունքների՝ պաստերացված կաթի նմուշներում St. aureus չի հայտնաբերվել, սակայն հետազոտված հում կաթի 18 նմուշից 8-ի մեջ (RM-7, RM-9, RM-11, RM-13, RM-14, RM-15, RM-16 և RM-18) նշված մանրէն հայտնաբերվել է:

Նշենք, որ հում կաթի մեջ St. aureus առկայությունը կարող է պայմանավորված լինել կենդանու կաթնագեղձում ինֆեկցիայի առկայությամբ: Բացի այդ, նշված մանրէն աղտոտման հավանական աղբյուղ են հանդիսանում նաև հում կաթի մշակման ու

վերամշակման միջավայրը, ինչպես նաև անձնական հիգիենայի կանոններին չհետևող սպասարկող անձնակազմը [108, 168, 185]: Ըստ այդմ, անձնական հիգիենայի խստորեն պահպանումն առաջնային նշանակություն ունի հում կաթի մեջ *St. aureus* հակման համար [182]: Անհրաժեշտ է նշել նաև, որ *St. aureus* ցրտասեր չէ, հետևաբար, նրա աճը հնարավոր է կասեցնել համապատասխան ջերմաստիճանում սառեցման միջոցով [177], բացի այդ *St. aureus* նաև ջերմակայուն չէ և հեշտությամբ ոչնչացվում է պաստերացման միջոցով [149, 175]: Ուստի, հետազոտված պաստերացված կաթի նմուշներում *St. aureus* մանրէի բացակայությունը կարող է պայմանավորված լինել հում կաթի արդյունավետ պաստերացման կիրառմամբ և (կամ) հետվերամշակման փուլերում արտադրությանը ներկայացվող հիգիենիկ կանոնների պահպանմամբ:

Listeria monocytogenes

Համաձայն Կոդեքս Ալիմենտարիուս Հանձնաժողովի տվյալների՝ հում կաթն ու պաստերացված կաթը դասվում են այն մթերքների շարքին, որոնց մեջ *Listeria monocytogenes* հաճախակի է հայտնաբերվում [119]:

Ըստ Բիրնի [109] պաստերացված կաթում *Listeria monocytogenes* առկայությունը պաստերացմանը հաջորդող տեխնոլոգիական գործընթացներում աղտոտման հետևանք է:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ իրականացվել է պաստերացված և հում կաթի նմուշներում *Listeria monocytogenes* առկայության որոշում, որի արդյունքները ներկայացված են համապատասխանաբար աղ. 12-ում և աղ. 13-ում: Նշված աղյուսակներում բերված տվյալները վկայում են պաստերացված և հում կաթի նմուշներում *Listeria monocytogenes* բացակայության մասին:

Աղյուսակ 12

Պաստերացված կաթի նմուշներում *Listeria monocytogenes* առկայությունը

<i>Listeria monocytogenes</i> առկայությունը								
Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]	Փաստացի							
	M-1	M-2	M-3	M-4	M-5	M-6	M-7	M-8
1 գ-ում չ/թ	չ/h	չ/h	չ/h	չ/h	չ/h	չ/h	չ/h	չ/h

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլապրվում, «չ/h» - չի հայրնաբերվել:

Հում կաթի նմուշներում *Listeria monocytogenes* առկայությունը

Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	<i>Listeria monocytogenes</i> առկայությունը
RM-1	Նոր Երզնկա	չ/h
RM-2	Ծիլքար	չ/h
RM-3	Բերքառատ	չ/h
RM-4	Բոնակոթ	չ/h
RM-5	Արևշատ	չ/h
RM-6	Վեղի	չ/h
RM-7	Թալին	չ/h
RM-8	Արագած	չ/h
RM-9	Վարդենիս	չ/h
RM-10	Սահման	չ/h
RM-11	Աշոցք	չ/h
RM-12	Ստեփանավան	չ/h
RM-13	Փշատավան	չ/h
RM-14	Արովյան	չ/h
RM-15	Սարուխան	չ/h
RM-16	Վայք	չ/h
RM-17	Գորիս	չ/h
RM-18	Ազարակ	չ/h

Ծանոթություն: «չ/թ» - չի թույլատրվում, «չ/h» - չի հայտնաբերվել:

Մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէներ (ՄԱՖԱՄ)

ՄԱՖԱՄ հիգիենիկ ինդիկատորը ցույց է տալիս մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէների ընդհանուր քանակությունը, արտահայտվում է գաղութ առաջացնող միավորներով (ԳԱՄ), որոնց առաջացումը հիմնականում պայմանավորված է մեզոֆիլ սապրոֆիտ մանրէների (փշացման մանրէներ), աղիքային ցուպիկի խմբի մանրէների և որոշ ախտածին (օրինակ, *Salmonella*) մանրէների զարգացմամբ [67]: Այս մանրէների աճի համար օպտիմալ ջերմաստիճանը $25\text{--}40^{\circ}\text{C}$ է [68]:

Պաստերացված կաթի նմուշներում ՄԱՖԱՄ պարունակության վերաբերյալ տվյալները ներկայացված են աղ. 14-ում:

Համաձայն աղ. 14-ում ներկայացված տվյալների՝ պաստերացված կաթի M-4 նմուշում ՄԱՖԱՄ պարունակությունը հավասար է սահմանված թույլատրելի մակարդակին՝ 1×10^5 ԳԱՄ/գ, իսկ պաստերացված կաթի 2 նմուշում՝ M-5-ում և M-8-ում, ՄԱՖԱՄ պարունակությունները (համապատասխանաբար՝ 2×10^7 ԳԱՄ/գ և 6×10^6 ԳԱՄ/գ) գերազանցում են նշված թույլատրելի մակարդակը:

Պատերացված կաթի նմուշներում ՄԱՖԱՄ պարունակությունը

ՄԱՖԱՄ պարունակությունը, ԳԱՄ/գ								
Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]	Փաստացի							
	M-1	M-2	M-3	M-4	M-5	M-6	M-7	M-8
Ոչ ավել 1×10^5 ԳԱՄ/գ	4×10^4	3×10^4	1×10^4	1×10^5	2×10^7	5×10^4	2×10^4	6×10^6

Ծանոթություն: Կարմիրով նշված են թույլադրելի մակարդակը գերազանցող պարունակությունները:

Ըստ Միրոշնիկովայի [67], մթերքը, որի մեջ հայտնաբերվել է ՄԱՖԱՄ բարձր պարունակություն, չի կարող առողջ սնման տեսանկյունից համարվել անվտանգ, քանի որ մթերքում այդ մանրէների առկայությունն արդեն իսկ վկայում է հումքի ոչ արդյունավետ և ոչ պատշաճ ջերմային մշակման, սարքավորումների ոչ մանրակրկիտ լվացման և ախտահանման կամ պահպանման ոչ բավարար պայմանների կիրառման մասին:

ՄԱՖԱՄ բարձր պարունակություն ունեցող մթերքի սպառումը կարող է հանգեցնել ստամոքսաղիքային համակարգի խանգարմանը, ինչն ուղեկցվում է մարմնի ջերմաստիճանի բարձրացմամբ, դիգբակտերիոզի առաջացմամբ և սրտխառնոցով [64]:

ՄԱՖԱՄ պարունակությունը որոշվել է նաև հում կաթի նմուշներում: Արդյունքները ներկայացված են աղ. 15-ում:

Հում կաթի նմուշներում ՄԱՖԱՄ պարունակությունը

Նմուշ-ների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	ՄԱՖԱՄ պարունակությունը ըստ << [11] և ԵԱՏՄ [84] ՏԿ, ԳԱՄ/գ		
		Բարձր տեսակ՝ ոչ ավել 3×10^5	1-ին տեսակ՝ ոչ ավել 5×10^5	2-րդ տեսակ՝ ոչ ավել 4×10^6
		ՄԱՖԱՄ փաստացի պարունակությունը, ԳԱՄ/գ		
RM-1	Նոր Երզնկա			$1,7 \times 10^7$
RM-2	Ծիլքար			$1,7 \times 10^7$
RM-3	Բերբառատ			$9,3 \times 10^6$
RM-4	Բոնակոթ			$1,4 \times 10^5$
RM-5	Արևշատ			$6,1 \times 10^7$
RM-6	Վեդի			$8,6 \times 10^7$
RM-7	Թալին			$> 10^7$
RM-8	Արագած			$2,1 \times 10^7$
RM-9	Վարդենիս			$> 10^7$
RM-10	Սպիտակ			$> 10^7$
RM-11	Աշոցք			$> 10^7$
RM-12	Ստեփանավան			3×10^7
RM-13	Փշատավան			9×10^6

Աղյուսակ 15 (շարունակություն)

Նմուշ-ների կորերը	Արտադրման վայրի անվանումը	ՄԱՖԱՄ պարունակությունը ըստ << [11] և ԵԱՏՄ [84] ՏԿ, ԳԱՄ/գ		
		Բարձր տեսակ՝ ոչ ավել 3×10^5	1-ին տեսակ՝ ոչ ավել 5×10^5	2-րդ տեսակ՝ ոչ ավել 4×10^6
		ՄԱՖԱՄ փաստացի պարունակությունը, ԳԱՄ/գ		
RM-14	Աբովյան		$\geq 10^7$	
RM-15	Սարովիսան		$\geq 10^7$	
RM-16	Վայք		$\geq 10^7$	
RM-17	Գորիս		$\geq 10^7$	
RM-18	Ազարակ		$\geq 10^7$	

Ծանոթություն: Կարմիրով նշված և ընդգծված են թույլատրելի մակարդակը գերազանցող արժեքները:

Համաձայն աղ. 15-ում ներկայացված տվյալների՝ հետազոտված հում կաթի 18 նմուշից 17-ում ՄԱՖԱՄ փաստացի պարունակությունները գերազանցում են Կաթի և կաթնամթերքի << [11] և ԵԱՏՄ [84] տեխնիկական կանոնակարգերով տվյալ մանրէաբանական ցուցանիշի համար սահմանված թույլատրելի մակարդակները: Հետազոտված նմուշներից միայն RM-4 նմուշում (գ. Բռնակոթ) նշված մանրէների պարունակությունը չի գերազանցում 2-րդ տեսակի կաթի համար սահմանված թույլատրելի մակարդակը [11]:

Աղիքային ցուայիկի խմբի մանրէներ (ԱՅԽՄ)

ԱՅԽՄ խմբին են պատկանում հիմնականում *Escherichia*, *Klebsiella*, *Enterobacter*, *Serratia* և *Citrobacter* միկրոօրգանիզմները, որոնք սպոր չառաջացնող, գրամ-բացասական, աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ ցուայիկներ են [50, 67, 177]: Այս ոչ ցրտասեր մանրէները համարվում են աղտոտման հիմնական ինդիկատորներ: Ընդ որում, վերջիններիս առկայությունը մթերքում կարող է վկայել ֆեկալ աղտոտման մասին, քանի որ որոշ կոլիֆորմներ առկա են մարդկանց և կենդանիների կղանքում: Պետք է նշել նաև, որ *Escherichia coli* մանրէն համարվում է այս խմբի առաջնային աղտոտիչը [112]:

ԱՅԽՄ առկայությունը որոշվել է ինչպես պաստերացված, այնպես էլ հում կաթի նմուշներում: Իրականացված հետազոտության արդյունքները ներկայացված են աղ. 16-ում և աղ. 17-ում:

Աղ. 16-ում ներկայացված տվյալները փաստում են, որ հետազոտված պաստերացված կաթի 8 նմուշից 6-ում (M-2, M-3, M-4, M-5, M-6 և M-8) հայտնաբերվել են

աղիքային ցուպիկի խմբի մանրէներ: Պետք է նշել, որ պաստերացված կաթի մեջ ԱՅԽՄ առկայությունը փաստում է ոչ պատշաճ պայմաններում պաստերացման իրականացման կամ սարքավորումների սանհিতարական վիճակին չհետևելու, աշխատողների կողմից անձնական հիգիենայի կանոնները չպահպանելու մասին [67, 149] և ընդգծում կաթի վերամշակման և դրան հաջորդող փուլերում սանհিতարահիգիենիկ հսկողության խիստ անհրաժեշտությունը:

Աղյուսակ 16

Պաստերացված կաթի նմուշներում ԱՅԽՄ առկայությունը

Ըստ նորմատիվ փաստաթղթի [11, 84]	ԱՅԽՄ առկայությունը							
	M-1	M-2	M-3	M-4	M-5	M-6	M-7	M-8
0,01 գ-ում չ/թ	չ/h	+	+	+	+	+	+	չ/h

Ծանոթություն: «չ/h» - չի հայդնաբերվել, «+» - հայդնաբերվել է:

Աղյուսակ 17

Հում կաթի նմուշներում ԱՅԽՄ առկայությունը

Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	ԱՅԽՄ առկայությունը	
		Ըստ << [11] և ԵԱՏՄ [84] ՏԿ չ/թ	
		Փաստացի	
RM-1	Նոր Երզնկա		+
RM-2	Ծիլքար		+
RM-3	Բերքատատ		+
RM-4	Բոնակոթ		չ/h
RM-5	Արևշատ		+
RM-6	Վեղի		+
RM-7	Թալին		+
RM-8	Արագած		+
RM-9	Վարդենիս		+
RM-10	Սպիտակ		+
RM-11	Աշոցք		+
RM-12	Ստեփանավան		+
RM-13	Փշատավան		+
RM-14	Աբովյան		+
RM-15	Սարուխան		+
RM-16	Վայր		+
RM-17	Գորիս		+
RM-18	Ազարակ		+

Ծանոթություն: «+» - հայդնաբերվել է, «չ/h» - չի հայդնաբերվել:

Ըստ աղ. 17-ում բերված տվյալների՝ հետազոտված հում կաթի բոլոր նմուշներում, բացառությամբ RM-4 նմուշի, հայտնաբերվել են աղիքային ցուպիկի խմբի մանրէներ:

Հետազոտված հում կաթի 17 նմուշում ԱՑԽՄ առկայությունը վկայում է կաթի առաջնային արտադրության ժամանակ պատշաճ հիգիենայի կանոնների խախտման մասին:

Անդրադառնալով իրականացված մանրէաբանական հետազոտությունների արդյունքներին՝ պետք է նշել, որ պաստերացված կաթի M-8 նմուշում հայտնաբերվել է նաև *Pseudomonas aeruginosa*, որը կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգերով [11, 84] չի կարգավորվում:

Pseudomonas aeruginosa մանրէն կարող է հաղիպել առողջ մարդկանց մաշկի վրա կամ կոկորդում: Բացի այդ, այս մանրէն զգայուն է ջերմության նկատմամբ, հետևաբար ջերմային մշակման արդյունքում հեշտությամբ ոչնչանում է [171]:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, կարող ենք նշել, որ պաստերացված կաթի նմուշում *Pseudomonads aeruginosa* մանրէի առկայությունը պայմանավորված է արտադրության ժամանակ աշխատողների կողմից հիգիենայի կանոնների խախտմամբ և (կամ) ոչ արդյունավետ պաստերացմամբ:

Նշենք նաև, որ *Pseudomonas aeruginosa* մանրէի կողմից հարուցված ինֆեկցիայի արդյունքում առողջ մարդկանց մոտ կարող են առաջանալ գաստրոէնտերիտներ, իսկ փոքրերի մոտ կարող են գրանցվել նաև մահվան դեպքեր [171]:

Այսպիսով, ամփոփելով մանրէաբանական հետազոտությունների արդյունքները կարող ենք փաստել, որ կաթնամթերքի սպառողական շուկայում իրացվող պաստերացված կաթի նմուշներից միայն M-1 և M-7 նմուշներն են ըստ նույնականացված մանրէաբանական վրանգների համապարասիանում անվրանգության սահմանված պահանջներին [105], իսկ հում կաթի 18 նմուշից միայն RM-4 նմուշը [194]:

Ըստ ախտածին, այդ թվում *Salmonella*, ինչպես նաև *St. aureus* և *Listeria monocytogenes* մանրէաբանական վտանգների, պաստերացված կաթի սպառումը համարվում է ոչ ռիսկային: Սակայն, հետազոտության արդյունքում պաստերացված կաթի որոշ նմուշներում հայտնաբերված ՄԱՖԱՄ բարձր պարունակությունները (M-5 և M-8 նմուշներում), ինչպես նաև ԱՑԽՄ (M-2, M-3, M-4, M-5, M-6 և M-8 նմուշներում) և

Pseudomonas aeruginosa առկայությունը (M-8 նմուշում) թույլ են տալիս կաթնամթերքի շուկայում իրացվող պաստերացված կաթի սպառումը համարել ռիսկային՝ հաշվի առնելով նաև մարդու առողջության համար նշված մանրէների կողմից հարուցվող բացասական հետևանքները [105]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՄԱՖԱՄ, ԱՑԽՄ և *Pseudomonas aeruginosa* մանրէները ջերմակայուն չեն, անհրաժեշտ է նախքան սպառումը պաստերացված կաթը ենթարկել լրացուցիչ ջերմային մշակման:

Անդրադառնալով պաստերացված կաթի արտադրության համար որպես հիմնական հումք օգտագործվող հում կաթի մանրէաբանական հետազոտությունների արդյունքներին, կարող ենք նշել, որ հում կաթի նմուշներում ԱՑԽՄ (*RM-1, RM-2, RM-3, RM-5, RM-6, RM-7, RM-8, RM-9, RM-10, RM-11, RM-12, RM-13, RM-14, RM-15, RM-16, RM-17, RM-18*) և *St. Aureus* առկայությունը (*RM-7, RM-9, RM-11, RM-13, RM-14, RM-15, RM-16, RM-18*), ինչպես նաև ՄԱՖԱՄ անթուլատրելի շատ բարձր պարունակությունները (*RM-1, RM-2, RM-3, RM-5, RM-6, RM-7, RM-8, RM-9, RM-10, RM-11, RM-12, RM-13, RM-14, RM-15, RM-16, RM-17, RM-18*) վկայում են կաթի առաջնային արտադրությունում պատշաճ հիգիենիկ պրակտիկայի կանոնների խախտման մասին: Այսինքն, նշված մանրէների առկայությունը կաթի առաջնային ստացման և մինչ տեղափոխումը՝ պահպանման ընթացքում ֆերմերային տնտեսություններում ոչ հիգիենիկ պայմանների և ոչ պատշաճ ջերմաստիճանի կիրառման հետևանք է [105]:

Պետք է փաստել, որ <<-ում հետագծելիության սկզբունքի ոչ լիարժեք կիրառման պայմաններում խիստ դժվարանում է վտանգի աղբյուրների հստակ բացահայտումը, ինչպես նաև կանխարգելիչ և ուղղիչ գործողությունների սահմանումը:

Դիտարկելով ֆերմերային տնտեսություններում հում կաթի աղտոտման հավանական աղբյուրները՝ կարող ենք ընդգծել, որ տնտեսություններում կաթի սառեցման, կաթի հետ շիվող տարաների, պարագաների մաքրման, ախտահանման և պահեստավորման համար նախատեսված օդափոխվող կաթնատների բացակայությունը համարվում է կաթի մանրէաբանական աղտոտվածության առաջացման առանցքային պատճառներից մեկը: Կողեքս Ալիմենտարիուսն ընդգծելով կաթի առաջնային արտադրության գործընթացների նշանակալի ազդեցությունն անվտանգ կաթնամթերքի արտադրությունը կազմում է առաջնային աղտոտվածության առաջացման առանցքային պատճառը:

րության վրա՝ կարևորում է արտադրության այդ փուլում մանրէաբանական վտանգ-ների նվազեցմանն ուղղված կանխարգելիչ և հսկողական միջոցառումների իրականացումը [115]:

Կաթի ստացումից հետո այն պետք է անմիջապես պաղեցնել, ինչը կնպաստի մանրէների աճի դանդաղեցմանը [199]:

Նիկիֆորովայի փաստմամբ, գործնականում հաստատվել է այն հանգամանքը, որ արտադրության ողջ շղթայում սանիտարահիգիենիկ միջոցառումների խստիվ պահպանումը նպաստում է մթերքի՝ մանրէներով աղտոտման կանխարգելմանն ու մանրէների զարգացման կասեցմանը [68]:

Կաթի և կաթնամթերքի մեջ մանրէների վերահսկման երկու կրիտիկական փուլերն են՝ արդյունավետ պաստերացումը, այնուհետև՝ պատշաճ արտադրական գործընթացների կիրառումը, ինչը կկանխարգելի մթերքի վերամշակումից հետո աղտոտման առաջացումը: Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերը, որոնք հիմնված են նշված սկզբունքի վրա, համարվում են մանրէաբանական վտանգների հսկման արդյունավետ մեխանիզմներ [103]:

Կաթում և կաթնամթերքում բոլոր տեսակի մանրէների վերահսկման արդյունավետ միջոց է համարվում ՎՎՀԿԿ ինքնահսկման համակարգի կիրառումը: Բացի այդ, բոլոր վտանգների կանխարգելման և անվտանգ մթերքի արտադրման համար կարևոր նշանակություն ունեն նաև նախապայմանային ծրագրերը, որոնք օժանդակում են ՎՎՀԿԿ համակարգի աշխատանքներին [103, 177]:

Այսպիսով, պաստերացված կաթի արդադրության ոլորսում անվտանգության ապահովման հետ կապված խնդիրները պայմանավորված են մի շարք գործոններով, մասնավորապես, սննդի շղթայի կազմակերպման և անվտանգության կառավարման համակարգերի ոչ լիարժեք կիրառմամբ:

3.3. ՊԱՍՏԵՐԱՑՎԱԾ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արտադրության ցանկացած փոկում՝ հումքի ստացումից մինչև վերջնական արտադրանքի սպառում, կաթը կարող է աղտոտվել քիմիական նյութերի մնացորդներով և աղտոտիչներով, որոնք հայտնի են որպես քիմիական վտանգներ [97, 152]: Վերջիններս մեծ մասը կայուն միացություններ են, որոնք հաճախ չեն ենթարկվում շերմային մշակման ազդեցությանը, կարող են կուտակվել և տեղափոխվել սննդի շղթայում: Բացի այդ, երկարատև կողմնակի ազդեցության արդյունքում քիմիական վտանգների անգամ փոքր քանակությունները կարող են առաջացնել քրոնիկ հիվանդություններ [182, 186, 207]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վտանգների վերաբերյալ բավարար գիտական տեղեկությունները կարող են նպաստել մթերքի անվտանգության հետ կապված ռիսկերի զգալի նվազեցմանը [140], իրականացվել է պաստերացված կաթի մեջ քիմիական վտանգների՝ թունավոր տարրերի, պեստիցիդների, ռադիոնուկլիդների, և ռիսկերի գնահատում: Վերջինիս ժամանակ հաշվի է առնվել ինչպես առողջության վրա վտանգի կողմից առաջացրած հետևանքի ծանրության աստիճանը, այնպես էլ վտանգի հանրիպման հավանականությունը [51]:

3.3.1. Թունավոր տարրերի ռիսկի գնահատում

Հայտնի է, որ կաթը պարունակում է մարդու օրգանիզմի համար անհրաժեշտ միշտ մակրո և միկրոտարրեր [6, 138, 217], սակայն, ինչպես առաջնային արտադրության ընթացքում, այնպես էլ հետագայում՝ վերամշակման և իրացման փուլերում, աղտոտման հետևանքով կարող է պարունակել նաև քիմիական վտանգներ [152, 211]:

Պաստերացված կաթի մեջ առկա քիմիական վտանգներից հատուկ ուշադրություն պետք է դարձնել թունավոր տարրերին, քանի որ հումքի վերամշակման ժամանակ շատ դժվար է դրանց բարձր պարունակություններն իջեցնել մինչև ընդունելի մակարդակները: Բացի այդ, չկան բավարար ապացույցներ այն մասին, թե հնարավոր է թունավոր տարրերի պարունակություններն էականորեն նվազեցնել վերամշակման միջոցով [171]: Ուստի, պատրաստի մթերքում թունավոր տարրերի

փաստացի քանակությունները պայմանավորված են օգտագործվող հումքի մեջ վերշիններիս պարունակությամբ:

<<-ում կաթի և կաթնամթերքի համար կարգավորվում են կապար (Pb), արսեն (As), կաղմիում (Cd) և սնդիկ (Hg) թունավոր տարրերը [11], որոնց պարունակությունը կաթի մեջ համարվում է որակի և անվտանգության գնահատման կարևորագույն ցուցանիշ [89]: Ընդ որում, կաթի մեջ նշված թունավոր տարրերի առկայությունը համարվում է անվտանգության ապահովման տեսանկյունից լրիզ և կարևոր խնդիր՝ հաշվի առնելով դրանց հետ կապված հավանական առողջական ոիսկերը [197]:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ իրականացվել է ինչպես պատրաստի մթերքում, այնպես էլ պաստերացված կաթի արտադրության հիմնական հումքի (հում կաթ) և որպես հումքի փոխարինիչ օգտագործվող չոր կաթում թունավոր տարրերի և դրանցով պայմանավորված ոիսկերի գնահատում:

Կապար (Pb)

Կապարն առավել շատ հետազոտված թունավոր մետաղներից մեկն է [99], որը մարդու օրգանիզմի վրա կողմնակի ազդեցություն կարող է թողնել առավելապես սննդամթերքի սպառման միջոցով [132]: Համաձայն առկա տվյալների՝ կապարը կարող է առաջացնել վերարտադրողական համակարգի խնդիրներ, ուղեղաբորբ, անեմիա, երիկամային հիվանդություններ (նեֆրոտոքսիկության դրսևներում) և թունավորում: Կապարի ազդեցության լրջագույն հետևանքներից մեկը համարվում է հեմի սինթեզի արգելակումը և նյարդային համակարգի զարգացման խանգարումը (նեյրոտոքսիկության դրսևներում) [186, 196]:

<< և ԵԱՏՄ կանոնակարգերում [11, 74, 84] պաստերացված, հում և չոր կաթի համար Pb առավելագույն թույլատրելի մակարդակը 0,1 մգ/կգ է, ԵՄ նորմատիվ փաստաթյուրում [116, 123] սահմանված է ավելի ցածր թույլատրելի մակարդակ՝ 0,02 մգ/կգ:

Ստորև ներկայացված են պաստերացված, հում և չոր կաթում Pb փաստացի միջին պարունակությունները (համապատասխանաբար՝ աղյուսակ 18, 19 և 20):

Պատերացված կաթի նմուշներում Pb միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Pb առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 123]
		0,1	0,1	0,02
Pb փաստացի պարունակությունը, մգ/կգ				
1	M-1		0,0028	
2	M-2		0,0015	
3	M-3		0,0014	
4	M-4		0,0017	
5	M-5		0,002	
6	M-6		0,0028	
7	M-7		0,0037	
8	M-8		0,0038	

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ:

Հում կաթի նմուշներում Pb միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Pb առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
			Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 123]
			0,1	0,1	0,02
Փաստացի պարունակությունը, մգ/կգ					
1	RM-1	Նոր Երզնկա		0,0034	
2	RM-2	Ծիլքար		<0,00015	
3	RM-3	Բերքառատ		<0,00015	
4	RM-4	Բոնակոր		<0,00015	
5	RM-5	Արևշատ		0,0027	
6	RM-6	Վեղի		<0,00015	
7	RM-7	Թալին		<0,00015	
8	RM-8	Արագած		0,0021	
9	RM-9	Վարդենիս		0,0007	
10	RM-10	Սպիտակ		0,0012	
11	RM-11	Աշոցք		<0,00015	
12	RM-12	Ստեփանավան		<0,00015	
13	RM-13	Փշատավան		0,0006	
14	RM-14	Արովյան		<0,00015	
15	RM-15	Սարուխան		<0,00015	
16	RM-16	Վայր		<0,00015	
17	RM-17	Գորիս		<0,00015	
18	RM-18	Ազարակ		<0,00015	

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ:

Չոր կաթի նմուշներում Pb միջին պարունակությունները

</<	Նմուշների կոդերը	Pb առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
		Ըստ << ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 123]
		0,1	0,1	0,02
		Pb փաստացի պարունակությունը, մգ/կգ		
1	DM-1		0,0111	
2	DM-2		<u>0,0165</u>	
3	DM-3		0,008	
4	DM-4		0,022	
5	DM-5		0,0056	
6	DM-6		0,0102	
7	DM-7		0,004	
8	DM-8		<u>0,015</u>	
9	DM-9		<0,0001	
10	DM-10		0,0026	
11	DM-11		0,0017	
12	DM-12		0,0912	
13	DM-13		<0,0008	
14	DM-14		<0,0008	

Ծանոթություն: ՆՓ-նորմապիշտ փաստաթուղթ, կարմիրով նշված են գերազանցող արժեքները, ընդգծված են առավելագույն թույլատրելի մակարդակին մոտ արժեքները:

Համաձայն վերոնշյալ այլուսակներում բերված տվյալների՝ հետազոտված պատերացված և հում կաթի նմուշներում հայտնաբերվել են Pb շատ փոքր պարունակություններ, որոնք չեն գերազանցում ինչպես << կանոնակարգով, այնպես էլ միջագային նորմատիվային փաստաթղթերով սահմանված թույլատրելի մակարդակները: Ընդ որում, հում կաթի նմուշների մեծ մասում Pb փաստացի պարունակությունները զգալիորեն ցածր են սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից (*MDL' minimum detection limit*), տվյալ դեպքում՝ 0,00015 մգ/կգ արժեքից:

Ըստ այլուսակ 20-ում բերված տվյալների՝ հետազոտված չոր կաթի նմուշներում Pb փաստացի պարունակությունները չեն գերազանցում << և ԵԱՏՄ կանոնակարգերով [11, 84] սահմանված առավելագույն թույլատրելի մակարդակները: Սակայն, DM-4 և DM-12 նմուշներում Pb պարունակությունները (համապատասխանաբար՝ 0,022 մգ/կգ և 0,0912 մգ/կգ) գերազանցում են ԵՄ նորմատիվ փաստաթղթերով [116, 123] սահմանված թույլատրելի մակարդակը՝ 0,02 մգ/կգ արժեքը, իսկ DM-2 և DM-8 նմուշներում

հայտնաբերվել են նշված արժեքին զգալի մոտ պարունակություններ (համապատասխանաբար՝ 0,0165 մգ/կգ և 0,015 մգ/կգ):

Արսեն (As)

Արսենը թունավոր տարր է, որն ունի անօրգանական և օրգանական ձևեր: Ժեւ անօրգանական արսենն առավել թունավոր է, քան օրգանականը, սակայն ոիսկի գնահատման ժամանակ հաշվի է առնվում մթերքում ընդհանուր արսենի պարունակությունը [68, 111]:

Ըստ Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալության (IARC) արսենը և նրա միացությունները համարվում են քաղցկեղածին [155]:

<< [11] և ԵԱՏՄ [84] կանոնակարգերում պաստերացված, հում և չոր կաթի համար As առավելագույն թույլատրելի մակարդակը 0,05 մգ/կգ է: Պետք է նշել, որ պաստերացված կաթի, ինչպես նաև հում և չոր կաթի մեջ As առավելագույն թույլատրելի մակարդակի վերաբերյալ ԵՄ նորմատիվային տվյալներ առկա չեն:

Պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում As փաստացի միջին պարունակությունները բերված են համապատասխանաբար այսօսակ 21-ում, 22-ում և 23-ում:

Այլուսակ 21

Պաստերացված կաթի նմուշներում As միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կողերը	As առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]
		0,05	0,05
		As փաստացի պարունակությունը, մգ/կգ	
1	M-1		0,0104
2	M-2		0,0067
3	M-3		0,012
4	M-4		0,0183
5	M-5		0,0134
6	M-6		0,0158
7	M-7		0,0457
8	M-8		0,0175

Ծանոթություն:ՏԿ - պեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ:

Հում կաթի նմուշներում As միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	As առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ
			Ըստ <<ՏԿ 0,05 [11]
			Ըստ ԵԱՏՄ ՏԿ 0,05 [74, 84]
As փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	RM-1	Նոր Երզնկա	<0,00035
2	RM-2	Ծիլքար	<0,00035
3	RM-3	Բերքառատ	<0,00035
4	RM-4	Բոնակոր	<0,00035
5	RM-5	Արևշատ	<0,00035
6	RM-6	Վեղի	<0,00035
7	RM-7	Թափն	<0,00035
8	RM-8	Արագած	<0,00035
9	RM-9	Վարդենիս	<0,00035
10	RM-10	Սպիտակ	<0,00035
11	RM-11	Աշոցք	<0,00035
12	RM-12	Ստեփանավան	<0,00035
13	RM-13	Փշատավան	<0,00035
14	RM-14	Աբովյան	<0,00035
15	RM-15	Սարուխան	<0,00035
16	RM-16	Վայք	<0,00035
17	RM-17	Գորիս	<0,00035
18	RM-18	Ազարակ	<0,00035

Ծանոթություն:ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ:

Զոր կաթի նմուշներում As միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	As առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ <<ՏԿ 0,05 [11]	
		Ըստ ԵԱՏՄ ՏԿ 0,05 [74, 84]	
As փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	DM-1		0,0162
2	DM-2		0,0228
3	DM-3		<0,0009
4	DM-4		<0,0009
5	DM-5		0,0017
6	DM-6		0,0116
7	DM-7		<0,0005
8	DM-8		<0,00075
9	DM-9		0,0002
10	DM-10		<0,0075
11	DM-11		0,0008
12	DM-12		0,0017
13	DM-13		0,032
14	DM-14		0,001

Ծանոթություն:ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ:

Ստացված արդյունքները (աղ. 21 և աղ. 23) փաստում են տախս, որ պաստերացված և չոր կաթի նմուշներում As փաստացի միջին պարունակությունները փոքր են և չեն գերազանցում թույլատրելի մակարդակը (0,05 մգ/կգ): Սակայն պաստերացված կաթի M-7 նմուշում As պարունակությունը (0,0457 մգ/կգ) մոտ է նշված թույլատրելի մակարդակին: Աղ. 22-ում ներկայացված տվյալները վկայում են, որ հետազոտված հում կաթի բոլոր նմուշներում As պարունակությունները ցածր են սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից (MDL), տվյալ պարագայում՝ 0,00035 մգ/կգ արժեքից, որն առավելագույն թույլատրելի մակարդակի (0,05 մգ/կգ) համեմատ չնշին մեծություն է:

Կադմիում (Cd)

Մարդու օրգանիզմ Cd անցնում է հիմնականում սննդի միջոցով [68]: Cd թունավոր ազդեցության հետևանքով կարող են առաջանալ երիկամների, լյարդի, ոսկրերի, նյարդային, սրտանոթային և իմունային համակարգի հիվանդություններ, ինչպես նաև աճի, վերարտադրողականության և զարգացման խնդիրներ [98, 133]: Սակայն պետք է նշել նաև, որ Cd թունավոր ազդեցության հիմնական թիրախային օրգանը երիկամն է [196]: <ամաձայն Քաղցկեղի հետազոտման միջազգային գործակալության՝ Cd պատկանում է քաղցկեղածին նյութերի 1-ին խմբին [154]: << և ԵԱՏՄ կանոնակարգերում պաստերացված, հում և չոր կաթի համար Cd առավելագույն թույլատրելի մակարդակը 0,03 մգ/կգ է, իսկ ԵՄ-ում նշված մթերքների համար Cd առավելագույն թույլատրելի մակարդակ սահմանված չէ: Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում Cd փաստացի պարունակությունները ներկայացված են աղ. 24, 25 և 26-ում:

Աղյուսակ 24

Պաստերացված կաթի նմուշներում Cd միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Cd առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ
		Ըստ <<ՏԿ՝ 0,03 [11]
		Ըստ ԵԱՏՄ ՏԿ՝ 0,03 [74, 84]
Cd փաստացի պարունակությունը, մգ/կգ		
1	M-1	0,0012
2	M-2	0,0009
3	M-3	0,0004
4	M-4	0,0005
5	M-5	0,0007
6	M-6	0,0009
7	M-7	0,0005
8	M-8	0,0031

Հում կաթի նմուշներում Cd միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Cd առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ
			Ըստ <<ՏԿ՝ 0,03 [11]
			Ըստ ԵԱՏՄ ՏԿ՝ 0,03 [74, 84]
Cd փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	RM-1	Նոր Երզնկա	0,0006
2	RM-2	Շիլքար	0,00017
3	RM-3	Բերքառաստ	0,0008
4	RM-4	Բոնակոյք	<0,000075
5	RM-5	Արևշատ	0,00008
6	RM-6	Վեղի	0,0004
7	RM-7	Թափին	0,0008
8	RM-8	Արագած	0,0008
9	RM-9	Վարդենիս	0,0022
10	RM-10	Սպիտակ	0,0034
11	RM-11	Աշոցք	<0,000075
12	RM-12	Ստեփանավան	<0,000075
13	RM-13	Փշատավան	0,001
14	RM-14	Աբովյան	<0,000075
15	RM-15	Սարուխան	0,0003
16	RM-16	Վայք	0,0004
17	RM-17	Գորիս	0,0007
18	RM-18	Ազարակ	0,0005

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ:

Հոր կաթի նմուշներում Cd միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Cd առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ <<ՏԿ՝ 0,03 [11]	
		Ըստ ԵԱՏՄ ՏԿ՝ 0,03 [74, 84]	
Cd փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	DM-1		0,0033
2	DM-2		0,0015
3	DM-3		0,0007
4	DM-4		0,0087
5	DM-5		0,0024
6	DM-6		0,0013
7	DM-7		0,0008
8	DM-8		0,0009
9	DM-9		0,00002
10	DM-10		0,0069
11	DM-11		0,0058
12	DM-12		0,0007
13	DM-13		0,004
14	DM-14		<0,0008

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ:

Համաձայն վերոնշյալ աղյուսակներում ներկայացված արդյունքների՝ պատերացված, հում և չոր կաթի հետազոտված բոլոր նմուշներում հայտնաբերված Cd փաստացի միջին պարունակությունները փոքր են և չեն գերազանցում << և ԵԱՏՄ կանոնակարգերով [11, 84] սահմանված թույլատրելի մակարդակը (0,05 մգ/կգ):

Hg (Hg)

Hg համարվում է առավել վտանգավոր և բարձր թունավորություն ունեցող տարրերից մեկը, որն ունի կենդանիների և մարդու օրգանիզմում կուտակվելու հատկություն [68]: Ընդհանրապես այն հանդես է գալիս տարբեր քիմիական ծներով, որոնք օժտված են տարբեր թունաբանական հատկություններով [186]: Բարձր կոնցենտրացիաների դեպքում Hg թողնում է նյարդային համակարգի վրա բացասական ազդեցություն, ինչի արդյունքում առաջանում են ուշադրության հետ կապված խնդիրներ և սովորելու կարողության նվազեցում [131]:

<< [11] և ԵԱՏՄ [84] կանոնակարգերում պատերացված, հում և չոր կաթի համար Hg առավելագույն թույլատրելի մակարդակը 0,005 մգ/կգ է, իսկ ԵՄ-ում վերջիններիս համար Hg չի կարգավորվում:

Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում Hg փաստացի միջին պարունակությունները ներկայացված են համապատասխանաբար աղ. 27-ում, 28-ում և 29-ում:

Աղյուսակ 27

Պաստերացված կաթի նմուշներում Hg միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կողերը	Hg առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ << ՏԿ՝ 0,005 [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ՝ 0,005 [74, 84]
		Hg փաստացի պարունակությունը, մգ/կգ	
1	M-1		<0,001
2	M-2		<0,001
3	M-3		<0,001
4	M-4		<0,001
5	M-5		<0,001
6	M-6		<0,001
7	M-7		<0,001
8	M-8		<0,001

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ:

Հում կաթի նմուշներում Hg միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Hg առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ
			Ըստ <<ՏԿ' 0,005 [11]
			Ըստ ԵԱՏՄ ՏԿ' 0,005 [74, 84]
Hg փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	RM-1	Նոր Երզնկա	<0,0003
2	RM-2	Շիլքար	<0,0003
3	RM-3	Բերքառատ	<0,0003
4	RM-4	Բոնակոյթ	<0,0003
5	RM-5	Արևշատ	<0,0003
6	RM-6	Վեղի	<0,0003
7	RM-7	Թափն	<0,0003
8	RM-8	Արագած	<0,0003
9	RM-9	Վարդենիս	<0,0003
10	RM-10	Սպիտակ	<0,0003
11	RM-11	Աշոցք	<0,0003
12	RM-12	Ստեփանավան	<0,0003
13	RM-13	Փշատավան	<0,0003
14	RM-14	Աբովյան	<0,0003
15	RM-15	Սարուխան	<0,0003
16	RM-16	Վայք	<0,0003
17	RM-17	Գորիս	<0,0003
18	RM-18	Ազարակ	<0,0003

Ծանոթություն:ՏԿ - սեխնիկական կանոնակարգ:

Չոր կաթի նմուշներում Hg միջին պարունակությունները

Հ/Հ	Նմուշների կոդերը	Hg առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ <<ՏԿ' 0,005 [11]	
		Ըստ ԵԱՏՄ ՏԿ' 0,005 [74, 84]	
Hg փաստացի պարունակությունը, մգ/կգ			
1	DM-1		<0,0015
2	DM-2		<0,0015
3	DM-3		<0,0015
4	DM-4		0,0028
5	DM-5		0,0022
6	DM-6		<0,002
7	DM-7		<0,0015
8	DM-8		<0,0015
9	DM-9		<0,0015
10	DM-10		<0,0015
11	DM-11		<0,0015
12	DM-12		<0,0015
13	DM-13		0,004
14	DM-14		<0,002

Աղ. 27-ում և աղ. 28-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ պաստերացված և հում կաթի հետազոտված բոլոր նմուշներում Hg փաստացի միջին պարունակությունները ցածր են սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից (MDL), համապատասխանաբար 0,001 մգ/կգ և 0,0003 մգ/կգ արժեքներից:

Համաձայն աղ. 29-ում բերված տվյալների՝ հետազոտված չոր կաթի 11 նմուշներում Hg փաստացի միջին պարունակությունները սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից (MDL) ցածր են: Ընդ որում, DM-1, DM-2, DM-3, DM-7, DM-8, DM-9, DM-10, DM-11 և DM-12 նմուշների համար վերջինս 0,0015 մգ/կգ է, իսկ DM-6 և DM-14 նմուշների համար՝ 0,002 մգ/կգ: Չոր կաթի DM-4 և DM-5 նմուշներում Hg փաստացի պարունակությունները (համապատասխանաբար՝ 0,0028 մգ/կգ և 0,0022 մգ/կգ) թույլատրելի առավելագույն մակարդակից (0,005 մգ/կգ) փոքր են, իսկ DM-13 նմուշում հայտնաբերվել է վերջինիս համեմատաբար մոտ քանակություն (0,004 մգ/կգ):

Այսպիսով, պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում նույնականացված թունավոր տարրերի փաստացի պարունակություններն ընդհանուր առմամբ շատ փոքր են և չեն գերազանցում սահմանված անվտանգ մակարդակները [5, 20, 105]: Հետևաբար վտանգների վերլուծության, դրանց հետ կապված ոիսկերի գնահատման մատրիցայում (գծանկար 10) վտանգի հանդիպման հավանականությունը կարելի է ընդունել ցածր:

Հետևանքի ճանդություն	A					
	B					
	C	IC				
	D					
	E					
	1	2	3	4	5	
	Ցածր	Ցածր	Միջին	Միջին	Բարձր	
Վտանգի հանդիպման հավանականությունը						

Գծանկար 10. Պաստերացված, հում և չոր կաթի մեջ թունավոր տարրերի ոիսկերի գնահատման մատրիցա

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ համաձայն Միջազգային ֆինանսական կորպորացիայի մեթոդաբանության [66] քիմիական վտանգների, այդ թվում թունավոր տարրերի համար ընդունվում է հետևանքի ծանրության C կատեգորիան, ոիսկի գնահատման մատրիցայում (գծանկար 10) թունավոր տարրերը կգտնվեն սպիտակ տիրուպթում (1C), այսինքն՝ թույլատրելի ոիսկի տիրուպթում: Ուստի, այս քիմիական վտանգները տվյալ դեպքում համարվում են ոչ էական և արտադրության տեսանկյունից ոչ ոիսկային:

3.3.2. Պեստիցիդների ոիսկի գնահատում

Հայտնի է, որ ճարպալույծ, հատկապես քլորօրգանական պեստիցիդների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա հաճախ կարող է դրսնորվել կաթի սպառման միջոցով [185]: Նշված պեստիցիդները կարող են կուտակվել հյուսվածքներում և թողնել առողջության վրա կողմնակի բացասական ազդեցություններ՝ առաջացնելով նյարդային և վերարտադրողական ֆունկցիայի խանգարումներ [68]:

Կաթնամթերքի համար կարգավորվող քլորօրգանական պեստիցիդների շարքին են պատկանում ԴԴՏ-ն ու դրա մետաբոլիտները և <ՔՑՀ-ն (α, β, γ իզոմերներ) [3, 11, 84]: Պեստիցիդների հսկման տեսանկյունից կարևորվում են ինչպես պատրաստի մթերքի, այնպես էլ հումքի հետազոտությունները, ուստի իրականացվել է ինչպես պատերացված կաթի, այնպես էլ դրա արտադրության համար որպես հիմնական հումք օգտագործվող հումք և չոր կաթի համար կարգավորվող քլորօրգանական պեստիցիդների նույնականացում և ոիսկի գնահատում:

ԴԴՏ և դրա մետաբոլիզմներ (ԴԴԴ, ԴԴԵ)

ԴԴՏ-ն և դրա մետաբոլիտները մարդու օրգանիզմ են անցնում աղտոտված մթերքի սպառման արդյունքում: Ընդ որում, ԴԴՏ-ի և դրա մետաբոլիտների փաստացի կոնցենտրացիաները, որոնք անցնում են մարդու օրգանիզմ, պայմանավորված են ինչպես մթերքում այդ քիմիկատների կոնցենտրացիայով, այնպես էլ մթերքի սպառման ծավալով [100]:

<< և ԵԱՏՄ կանոնակարգերում [11, 84] պաստերացված և հում կաթի համար ԴԴՏ և դրա մետաբոլիտների առավելագույն թույլատրելի մակարդակը 0,05 մգ/կգ է,

իսկ չոր կաթի համար՝ 1,0 մգ/կգ: ԵՄ նորմատիվային փաստաթղթով պաստերացված, հում և չոր կաթի համար սահմանված է առավել ցածր մակարդակ՝ 0,04 մգ/կգ է [125]:

Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում ԴԴՏ և դրա մետաբոլիտների առկայության վերաբերյալ տվյալները ներկայացված են համապատասխանաբար՝ աղ. 30-ում, աղ. 31-ում և աղ. 32-ում:

Համաձայն աղյուսակներում բերված արդյունքների՝ հետազոտված պաստերացված, հում և չոր կաթի բոլոր նմուշներում ԴԴՏ և դրա մետաբոլիտների (ԴԴԴ, ԴԴԷ) պարունակությունները գտնվում են սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից՝ 0,005 մգ/կգ-ից, ցածր տիրույթում, և, հետևաբար փոքր են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կանոնակարգերով ամրագրված թույլատրելի մակարդակներից:

Աղյուսակ 30

Պաստերացված կաթի նմուշներում ԴԴՏ և դրա մետաբոլիտների առկայությունը

Հ/Հ	Նմուշ-ների կոդերը	ԴԴՏ (գումարային) առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [125]
		0,05	0,05	0,04
Փաստացի, մգ/կգ				
1	M-1	<0,005		
2	M-2	<0,005		
3	M-3	<0,005		
4	M-4	<0,005		
5	M-5	<0,005		
6	M-6	<0,005		
7	M-7	<0,005		
8	M-8	<0,005		

Ծանոթություն: ՏԿ - պեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ:

Աղյուսակ 31

Հում կաթի նմուշներում ԴԴՏ և դրա մետաբոլիտների առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	ԴԴՏ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
			Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [125]
			0,05	0,05	0,04
Փաստացի, մգ/կգ					
1	RM-1	Նոր Երզնկա		< MDL	
2	RM-2	Ծիլքար		< MDL	
3	RM-3	Բերքառատ		< MDL	

Աղյուսակ 31 (շարունակություն)

Հ/Հ	Նմուշների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	ԴԴՏ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
			Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [125]
			0,05	0,05	0,04
Փաստացի, մգ/կգ					
4	RM-4	Բոնակոր		< MDL	
5	RM-5	Արևշատ		< MDL	
6	RM-6	Վերի		< MDL	
7	RM-7	Թային		< MDL	
8	RM-8	Արագած		< MDL	
9	RM-9	Վարդենիս		< MDL	
10	RM-10	Սպիտակ		< MDL	
11	RM-11	Աշոցք		< MDL	
12	RM-12	Ստեփանավան		< MDL	
13	RM-13	Փշտավան		< MDL	
14	RM-14	Աբովյան		< MDL	
15	RM-15	Սարովսկան		< MDL	
16	RM-16	Վայք		< MDL	
17	RM-17	Գորիս		< MDL	
18	RM-18	Ազարակ		< MDL	

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDL՝ նվազագույն հայտնաբերման սահման (*minimum detection limit*):

Աղյուսակ 32

Չոր կաթի նմուշներում ԴԴՏ և դրա մետաբոլիտների առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	ԴԴՏ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ		
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [125]
		1,0	1,0	0,04
Փաստացի, մգ/կգ				
1	DM-1		< MDL	
2	DM-2		< MDL	
3	DM-3		< MDL	
4	DM-4		< MDL	
5	DM-5		< MDL	
6	DM-6		< MDL	
7	DM-7		< MDL	
8	DM-8		< MDL	
9	DM-9		< MDL	
10	DM-10		< MDL	
11	DM-11		< MDL	
12	DM-12		< MDL	
13	DM-13		< MDL	
14	DM-14		<MDL	

Ծանոթություն: ՏԿ - լրեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDL՝ նվազագույն հայտնաբերման սահման (*minimum detection limit*):

ՀՔՑՀ (α, β, γ իզոմերներ)

Քլիորգանական պեստիցիդներից ՀՔՑՀ-ն դասվում է մարդկանց համար հավանական քաղցկեղածին նյութերի շարքին: Այն քիմիական նյութ է, որը կիրառվում է որպես ինսեկտիցիդ: Երկարատև կիրառման և շրջակա միջավայրում պահպանվելու արդյունքում ՀՔՑՀ-ն կարող է կուտակվել նաև սննդի շղթայում [101, 204]:

ՀՀ և ԵԱՏՄ կանոնակարգերում [11, 84] պաստերացված և հում կաթի համար ՀՔՑՀ առավելագույն թույլատրելի մակարդակը 0,05 մգ/կգ է, իսկ չոր կաթի համար՝ 1,25 մգ/կգ: ԵՄ-ում առավելագույն թույլատրելի մակարդակը սահմանված է ՀՔՑՀ իզոմերների համար առանձին-առանձին [97], իսկ ՀՔՑՀ իզոմերների գումարային պարունակության համար թույլատրելի մակարդակ սահմանված չէ:

Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում ՀՔՑՀ առկայության վերաբերյալ ստացված արդյունքները բերված են համապատասխանաբար՝ աղ. 33-ում, 34-ում և 35-ում:

Նշված աղյուսակներում ներկայացված տվյալները փաստում են, որ պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված բոլոր նմուշներում ՀՔՑՀ իզոմերների գումարային պարունակությունները սարքի նվազագույն հայտնաբերման սահմանից (0,005 մգ/կգ) փոքր են և չեն գերազանցում ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգ մակարդակը (0,05 մգ/կգ):

Աղյուսակ 33

Պաստերացված կաթի նմուշներում ՀՔՑՀ առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	ՀՔՑՀ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ ՀՀ ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]
		0,05	0,05
Փաստացի, մգ/կգ			
1	M-1		<0,005
2	M-2		<0,005
3	M-3		<0,005
4	M-4		<0,005
5	M-5		<0,005
6	M-6		<0,005
7	M-7		<0,005
8	M-8		<0,005

Ծանոթություն: ՏԿ - տեխնիկական կանոնակարգ:

Հում կաթի նմուշներում ՀՔՑՀ առկայությունը

Հ/Հ	Նմուշ-ների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	ՀՔՑՀ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
			Ըստ <<ՏԿ>> ՏԿ 0,05 [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ 0,05 [74, 84]
			Փաստացի, մգ/կգ	
1	RM-1	Նոր Երզնկա	< MDL	
2	RM-2	Ծիլքար	< MDL	
3	RM-3	Բերքառատ	< MDL	
4	RM-4	Բոնակոթ	< MDL	
5	RM-5	Արևշատ	< MDL	
6	RM-6	Վեղի	< MDL	
7	RM-7	Թալին	< MDL	
8	RM-8	Արագած	< MDL	
9	RM-9	Վարդենիս	< MDL	
10	RM-10	Սպիտակ	< MDL	
11	RM-11	Աշոցք	< MDL	
12	RM-12	Ստեփանավան	< MDL	
13	RM-13	Փշատավան	< MDL	
14	RM-14	Արովյան	< MDL	
15	RM-15	Սարուխան	< MDL	
16	RM-16	Վայր	< MDL	
17	RM-17	Գորիս	< MDL	
18	RM-18	Ազարակ	< MDL	

Չոր կաթի նմուշներում ՀՔՑՀ առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	ՀՔՑՀ առավելագույն թույլատրելի մակարդակը, մգ/կգ	
		Ըստ <<ՏԿ>> ՏԿ 1,25 [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ 1,25 [74, 84]
		Փաստացի, մգ/կգ	
1	DM-1	< MDL	
2	DM-2	< MDL	
3	DM-3	< MDL	
4	DM-4	< MDL	
5	DM-5	< MDL	
6	DM-6	< MDL	
7	DM-7	< MDL	
8	DM-8	< MDL	
9	DM-9	< MDL	
10	DM-10	< MDL	
11	DM-11	< MDL	
12	DM-12	< MDL	
13	DM-13	< MDL	
14	DM-14	< MDL	

Այսպիսով պաստերացված կաթի և դրա արդադրության ժամանակ որպես հումք օգտագործվող հում և չոր կաթի հետազոտված նմուշներում դեխնիկական կանոնակարգով կարգավորվող պեսպիցիդներ չեն հայտնաբերվել, ուստի դրվագը դեպքում ոիսկերը համարվում են ոչ էական:

3.3.3. Ռադիոնուկլիդների ռիսկի գնահատում

Սննդամթերքում ռադիոնուկլիդների առկայությունը համարվում է մի շարք միջազգային կազմակերպությունների, ազգային մարմինների, ինչպես նաև հանրային առողջության խնդիր: Ինչպես հայտնի է, կաթը համարվում է մարդու սննդակարգի կարևոր բաղադրիչը, ուստի նրանում ռադիոնուկլիդների առկայությունը պետք է հանդիսանաշարունակական մոնիթորինգի առարկա [208]: << և ԵԱՏՄ կանոնակարգերում [11, 84] կաթնամթերքի համար նորմավորվում են ցեզիում-137 (Cs-137) և ստրոնցիում-90 (Sr-90) ռադիոնուկլիդները, որոնց համար սահմանված են թույլատրելի մակարդակներ:

Ցեզիում-137 (Cs-137)

Cs-137 ռադիոնուկլիդի համար << և ԵԱՏՄ կանոնակարգերում սահմանային թույլատրելի մակարդակը պաստերացված և հում կաթի համար 100 Բկ/լ է, իսկ չոր կաթի համար՝ 500 Բկ/լ [11, 84]: Համաձայն ԵՄ նորմատիվային փաստաթղթերի [116, 118], Cs-137 ռադիոնուկլիդի սահմանային թույլատրելի մակարդակը պաստերացված և հում կաթի համար 1000 Բկ/լ է, իսկ չոր կաթի համար թույլատրելի մակարդակ սահմանված չէ:

Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում Cs-137 ռադիոնուկլիդի առկայության վերաբերյալ տվյալները ներկայացված են համապատասխանաբար՝ աղ. 36-ում, աղ. 37-ում և աղ. 38-ում:

Ըստ ստացված արդյունքների (աղ. 36, աղ. 37, աղ. 38) պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված բոլոր նմուշներում գրանցվել են Cs-137 ռադիոնուկլիդի՝ սարքի նվազագույն հայտնաբերվող ակտիվությունից ցածր ($<10^{-1}$) պարունակություններ:

Պատճերացված կաթի նմուշներում Cs-137 առկայությունը

Հ/Հ	Նմուշների կոդերը	Cs-137 առավելագույն թույլատրելի մակարդակը, Բկ/լ		
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՍ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 118]
		100	100	1000
		Փաստացի, Բկ/լ		
1	M-1		< MDA	
2	M-2		< MDA	
3	M-3		< MDA	
4	M-4		< MDA	
5	M-5		< MDA	
6	M-6		< MDA	
7	M-7		< MDA	
8	M-8		< MDA	

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Հում կաթի նմուշներում Cs-137 առկայությունը

Հ/Հ	Նմուշ- ների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Cs-137 առավելագույն թույլատրելի մակարդակը, Բկ/լ		
			Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՍ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 118]
			100	100	1000
		Փաստացի, Բկ/լ			
1	RM-1	Նոր Երզնկա		< MDA	
2	RM-2	Ծիլքար		< MDA	
3	RM-3	Բերքառատ		< MDA	
4	RM-4	Բոնակոր		< MDA	
5	RM-5	Արևշատ		< MDA	
6	RM-6	Վեղի		< MDA	
7	RM-7	Թալին		< MDA	
8	RM-8	Արագած		< MDA	
9	RM-9	Վարդենիս		< MDA	
10	RM-10	Սպիտակ		< MDA	
11	RM-11	Աշոցք		< MDA	
12	RM-12	Ստեփանավան		< MDA	
13	RM-13	Փշատավան		< MDA	
14	RM-14	Արովյան		< MDA	
15	RM-15	Սարուխան		< MDA	
16	RM-16	Վայր		< MDA	
17	RM-17	Գորիս		< MDA	
18	RM-18	Ազարակ		< MDA	

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Չոր կաթի նմուշներում Cs-137 առկայությունը

</<	Նմուշների կոդերը	Cs-137 առավելագույն թույլատրելի մակարդակը, Բկ/Լ	
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]
		500	500
Փաստացի, Բկ/Լ			
1	DM-1		< MDA
2	DM-2		< MDA
3	DM-3		< MDA
4	DM-4		< MDA
5	DM-5		< MDA
6	DM-6		< MDA
7	DM-7		< MDA
8	DM-8		< MDA
9	DM-9		< MDA
10	DM-10		< MDA
11	DM-11		< MDA
12	DM-12		< MDA
13	DM-13		< MDA
14	DM-14		< MDA

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Sr-90

Sr-90 ռադիոնուկլիդի համար << և ԵԱՏՄ կանոնակարգերում [11, 84] սահմանային թույլատրելի մակարդակը պաստերացված և հում կաթի համար 25 Բկ/Լ է, իսկ չոր կաթի համար՝ 200 Բկ/Լ [11, 84]: Համաձայն ԵՄ նորմատիվային փաստաթղթերի [116, 118], Cs-137 ռադիոնուկլիդի սահմանային թույլատրելի մակարդակը պաստերացված և հում կաթի համար 100 Բկ/Լ է, իսկ չոր կաթի համար թույլատրելի մակարդակ սահմանված չէ:

Պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված նմուշներում Cs-137 ռադիոնուկլիդի առկայության վերաբերյալ տվյալները բերված են համապատասխանաբար՝ աղ. 39-ում, աղ. 40-ում և աղ. 41-ում:

Համաձայն ստացված արդյունքների՝ պաստերացված, հում և չոր կաթի հետազոտված բոլոր նմուշներում Sr-90 ռադիոնուկլիդի առկայությունը նվազագույն հայտնաբերվող ակտիվությունից ($<10^{-1}$) ցածր է:

Պատճենագույն կաթի նմուշներում Sr-90 առկայությունը

</<	Նմուշների կոդերը	Sr-90 առավելագույն քույլատրելի մակարդակը, Բկ/լ		
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 118]
		25	25	100
Փաստացի, Բկ/լ				
1	M-1		< MDA	
2	M-2		< MDA	
3	M-3		< MDA	
4	M-4		< MDA	
5	M-5		< MDA	
6	M-6		< MDA	
7	M-7		< MDA	
8	M-8		< MDA	

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Հում կաթի նմուշներում Sr-90 առկայությունը

</<	Նմուշ-ների կոդերը	Արտադրման վայրի անվանումը	Sr-90 առավելագույն քույլատրելի մակարդակը, Բկ/լ		
			Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]	Ըստ ԵՄ ՆՓ-ի [116, 118]
			25	25	100
Փաստացի, Բկ/լ					
1	RM-1	Նոր Երզնկա		< MDA	
2	RM-2	Ծիլքար		< MDA	
3	RM-3	Բերքառատ		< MDA	
4	RM-4	Բոնակորթ		< MDA	
5	RM-5	Արևշատ		< MDA	
6	RM-6	Վեղի		< MDA	
7	RM-7	Թալին		< MDA	
8	RM-8	Արագած		< MDA	
9	RM-9	Վարդենիս		< MDA	
10	RM-10	Սպիտակ		< MDA	
11	RM-11	Աշոցք		< MDA	
12	RM-12	Ստեփանավան		< MDA	
13	RM-13	Փշատավան		< MDA	
14	RM-14	Աբովյան		< MDA	
15	RM-15	Սարուխան		< MDA	
16	RM-16	Վայք		< MDA	
17	RM-17	Գորիս		< MDA	
18	RM-18	Ազարակ		< MDA	

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, ՆՓ - նորմատիվ փաստաթուղթ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Չոր կաթի նմուշներում Sr-90 առկայությունը

</<	Նմուշների կոդերը	Sr-90 առավելագույն թույլատրելի մակարդակը, Բկ/Լ	
		Ըստ <<ՏԿ [11]	Ըստ ԵԱՏՄ ՏԿ [74, 84]
		200	200
Փաստացի, Բկ/Լ			
1	DM-1	< MDA	
2	DM-2	< MDA	
3	DM-3	< MDA	
4	DM-4	< MDA	
5	DM-5	< MDA	
6	DM-6	< MDA	
7	DM-7	< MDA	
8	DM-8	< MDA	
9	DM-9	< MDA	
10	DM-10	< MDA	
11	DM-11	< MDA	
12	DM-12	< MDA	
13	DM-13	< MDA	
14	DM-14	< MDA	

Ծանոթություն: ՏԿ - դեխնիկական կանոնակարգ, MDA - նվազագույն հայտնաբերվող ակտիվություն (10^{-1}):

Վերոնշյալ հետազոտությունների արդյունքները փաստում են, որ պաստերացված կաթի և դրա արտադրության ժամանակ որպես հումք օգտագործվող հում և չոր կաթի նմուշներում դեխնիկական կանոնակարգով կարգավորվող Cs-137 և Sr-90 ռադիոնուկլիդների առկայությամբ պայմանավորված ռիսկերը համարվում են ոչ էական:

Ընդհանրացնելով պաստերացված կաթի, ինչպես նաև վերջինիս արտադրության համար որպես հիմնական հումք օգտագործվող հում և չոր կաթի նմուշներում քիմիական վրանգների՝ թունավոր գործությունների, պեսսիցիդների և ռադիոնուկլիդների, ռիսկերի գնահատման արդյունքները, կարող ենք նշել, որ նույնականացված քիմիական վրանգները գորնվում են թույլատրելի ռիսկի դիրույթում, հետևաբար մթերքի արտադրության դեսանկունից համարվում են ոչ ռիսկային:

Այսպիսով, պաստերացված կաթի արտադրության ռլորփում ռիսկերի գնահատման արդյունքները փաստում են ազգաբնակչության կողմից լայն սպառում ունեցող այս մթերքի որակական և դեղեկարգական կեղծումների, ինչպես նաև մանրէաբանական ռիսկերի առկայության մասին: Վերջինս վկայում է կաթի

Վերամշակման գործընթացներում սահմանված պարտշաճ արդադրական, հիգիե-նիկ նորմերի ու պահանջների խախտման մասին և, հետևաբար, ընդգծում դեխնո-լոգիական գործընթացների բարելավման ու պարտասպի մթերքի ոիսկերի նվա-զեցման և կանխարգելման նպարակով արդադրությունում անվտանգության կառավարման ՎՎՀԿԿ համակարգի ներդրման խիստ անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 4. ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Ներկայումս <<-ում կաթնարդյունաբերության զարգացման արդիական ուղղություններից մեկը ազգային կաթնամթերք մածնի արտադրությունն է, որն, ի հաշիվ բարձր սննդային արժեքի և դիետիկ հատկությունների, ունի լայն սպառում: Գրականության տվյալների վերլուծությունը (Գլուխ 1) թույլ է տալիս եզրակացնել, որ ներկա պայմաններում կաթնաթթվային մթերքների դիետիկ և ֆունկցիոնալ հատկությունների ապահովման նպատակով կիրառվում են ոչ միայն պրոբիոտիկ հատկություններ ունեցող նոր մանրէական մակարդներ, այլ նաև մի շարք պրեբիոտիկ նյութեր, որոնցից լայնածավալ կիրառություն է ստացել լակտովոզը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մեր կողմից իրականացվել են պրեբիոտիկ լակտովոզի հավելմամբ մածնի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործմանն ուղղված ուսումնասիրություններ, որոնց արդյունքները ներկայացված են ստորև:

4.1. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿԱՐԴԻ ՄԻԿՐՈՖԼՈՐԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԹԹՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿԱՐԴՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հաստատված է, որ մածնի որակական ցուցանիշները և սննդային արժեքը զգալիորեն կախված են կաթնաթթվային մանրէներից, որոնք օգտագործվում են արտադրության ժամանակ որպես մանրէական մակարդների բաղադրիչներ: Մածնի արտադրության ժամանակ կաթնաթթվային ստրեպտոկոկերը որոշակի ազդեցություն են ունենում մանրէակենսաբանական գործընթացների ընթացքի վրա [6, 7]: Տեխնոլոգիական հրահանգների տվյալների համաձայն՝ օգտագործվում են *Streptococcus lactis*, *Streptococcus cremoris* և բուրմունք առաջացնող ստրեպտոկոկերից պատրաստված մակարդներ: Սակայն ստրեպտոկոկերի նշված տեսակները օժտված չեն աղիներում հարմարվելու ունակությամբ, ինչպես նաև ախտածին մանրէների նկատմամբ արտահայտված անտագոնիստական ակտիվությամբ, իետևաբար դրանց օգտագործմամբ

պատրաստված մթերքն օժտված չէ բուժիչ և կանխարգելիչ հատկություններով: Անտագոնիստական ակտիվությամբ և մեծ թվով ածխաջրատներ խմորելու ունակությամբ օժտված *Lactobacillus salivarius*, *Lactobacillus acidophilus* և *Streptococcus bovis* մանրէները կարողանում են հարմարվել մարդու աղիներում: Այս մանրէների կիրառումը ճնշում է ախտածին և պայմանական ախտածին մանրէներին, բացի այդ բարձրացնում մթերքի դիետիկ հատկությունները [67]:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հետազոտվել են ՀԱԱՀ ԱՄՎՏ ամբիոնի պրոբիոմային լաբորատորիայի թանգարանից վերցրած՝ *L. acidophilus*, *Lac. salivarius* և *Str. bovis* շտամները:

Կաթնաթթվային մանրէների շտամների կենսաբանական և տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման հիման վրա ընտրվել է *Str. bovis* 730 և *L. acidophilus E* շտամներից բաղկացած մանրէական մակարդ՝ 1:1 հարաբերակցությամբ:

Str. bovis 730, *L. acidophilus E*, պրոբիոտիկ հատկություններ ունեցող *Lactobacillus salivarius N 1588* շտամների և դրանցից բաղկացած նոր մանրէական մակարդի (1:1:1 հարաբերակցությամբ), բնութագիրը ներկայացված է առյուսակ 42-ում:

Առյուսակ 42


Շտամների, մանրէական մակարդի և պրոբիոտիկի բնութագիրը

Ցուցանիշներ	Շտամներ		Մանրէական մակարդ (1:1:1)	<i>Lac. salivarius N 1588</i>
	<i>Str. bovis</i> 730	<i>L. acidophilus E</i>		
Թթվությունը 24ժ, °Ծ	96,4±3,8	80,5±3,4	135,0±5,5	80,0±3,0
Մակարդման տևողությունը, ժ	4,2±0,1	4,5±0,1	4,0±0,1	4,6±0,1
Մակարդվածքի ամրությունը, գ/սմ ²	1,1±0,05	1,1±0,05	1,0±0,05	1,2±0,05
Պրոտեոլիզ, մգ%	10,4±0,3	11,5±0,5	16,0±0,6	12,5±0,5
Սիներեզիս, %	6,5±0,2	6,0±0,2	11,0±0,4	7,0±0,3
Համր, բալ	5,0	5,0	5,0	5,0
Ազատ ամինաթթուների ընդհանուր քանակը, մգ%	8,48±0,2	7,5±0,2	13,5±0,4	2,2±0,2
լիզին	5,4±0,1	6,2±0,2	7,4±0,2	4,5±0,1
գլուտամինաթթու	12,5±0,4	10,4±0,3	14,0±0,4	8,0±0,2
վալին	7,0±0,1	4,5±0,1	8,5±0,2	6,0±0,2
լեյցին	11,0±0,3	9,0±0,2	13,5±0,3	12,0±0,3
ֆենիլալանին	18,5±0,5	14,0±0,3	19,0±0,4	20,4±0,6
Ցնորդ ճարպաթթուների ընդհանուր քանակը, մգ%	9,5±0,2	8,5±0,1	11,5±0,2	7,0±0,1
քացախաթթու	90,5±1,2	85,0±1,0	92,5±1,3	88,0±1,0
յուղաթթու	7,0±0,2	5,0±0,1	8,5±0,2	7,5±0,2

Աշխատանքի կատարման նպատակից ելնելով՝ ուսումնասիրվել է պրեբիոտիկ լակտովոզի տարբեր քանակների (0,1, 0,3 և 0,5 %) ազդեցությունը նոր մանրէական մակարդի և պրոբիոտիկի (*Lactobacillus salivarius N 1588*) կիրառմամբ պատրաստված մածնի թթվության առաջացման ակտիվության և մակարդման տևողության վրա:


Որպես ցանքսի միջավայր օգտագործվել է 0,05 % յուղանության և 18⁰Շ թթվության մանրէազերծված կաթը: Կաթի մեջ ավելացվել է 2,5-3 % մակարդ և 0,1, 0,3 և 0,5 % կոնցենտրացիաներով լակտովոզի օշարակ (խառնուրդի հաշվարկով): Որպես ստուգիչ օգտագործվող նմուշի պատրաստման համար մակարդի միկրոֆլորայի նույն պայմաններում ցանքսը կատարվել է առանց լակտովոզի ավելացման: Մակարդում իրականացվել է մինչև մածնի արտադրման տեխնոլոգիայով սահմանված թթվությանը (100-110⁰Շ) հասնելը:

Լակտովոզ պարունակող և չպարունակող փորձանմուշների մակարդման ընթացքում յուրաքանչյուր 2 ժամում, հսկվել է ակտիվ և տիտրվող թթվությունների փոփոխությունը: Գծանկար 11-ում և 12-ում ներկայացված են ընտրված մանրէական մակարդի միկրոֆլորայի կողմից թթվություն առաջացնելու վրա լակտովոզի կոնցենտրացիայի ազդեցության ուսումնասիրության արդյունքները:



Գծանկար 11. Մածնի ստուգիչ և փորձնական նմուշներում ակտիվ թթվության (pH) փոփոխությունը

Ինչպես երևում է գծանկար 11-ից, թթվության բարձրացումն ակտիվ ընթանում է 3-8 ժամերի միջև ընկած ժամանակահատվածում: pH-ի արժեքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 0,5 % լակտուլոզ պարունակող փորձնական նմուշի և ստուգիչ նմուշի ցուցանիշների միջև ամենամեծ տարբերությունը գրանցվել է 4 ժ մակարդումից հետո, երբ ստուգիչ նմուշի ակտիվ թթվությունը 5,4 %-ով ցածր էր:




Գծանկար 12. Մածնի ստուգիչ և փորձնական նմուշներում տիտրվող թթվության ($^{\circ}\text{Թ}$)
փոփոխությունը

Ընդհանուր առմամբ, բոլոր ժամանակամիջոցներում թթ ցուցանիշի նվազման դինամիկաները բոլոր փորձանմուշների համար համընկնում են: 0,3 և 0,5 % քանակություններով լակտուլոզի ավելացումը որոշակիորեն հանգեցրել է տիտրվող թթվության բարձրացման գործընթացի դանդաղեցմանը: Օրինակ, 0,3 % լակտուլոզ պարունակող փորձնական նմուշի տիտրվող թթվությունը ստուգիչ նմուշի տիտրվող թթվությունից 4 և 6 ժ մակարդումից հետո ցածր է եղել համապատասխանաբար 29 և 24 %-ով:


Հաշվի առնելով օգտագործվող մակարդի բնութագիրը և մածնի արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները՝ մակարդման գործընթացը պետք է շարունակել մինչև $100\text{-}110^{\circ}\text{Թ}$ թթվության ստացումը:

Ուսումնասիրված փորձանմուշների թթվության բարձրացումը մինչև 85°C , ստուգիս նմուշի և $0,1\%$ լակտովոզ պարունակող փորձանմուշի համար գրանցվել է 6 ժ մակարդումից հետո, իսկ $0,3$ և $0,5\%$ պրեբիոտիկ պարունակող փորձանմուշի համար՝ $6,5$ ժ մակարդումից հետո: Լակտովոզ չպարունակող նմուշի և $0,1\%$ պրեբիոտիկ պարունակող փորձանմուշի համար $100-110^{\circ}\text{C}$ թթվությունը գրանցվել է ցանքսից 7 ժ անց, իսկ $0,3$ և $0,5\%$ լակտովոզ պարունակող փորձանմուշների համար՝ $7,2 \pm 0,1$ ժ անց: Բոլոր փորձանմուշների համար $\text{pH}-ի$ նվազումը մինչև $4,6-4,7$ տեղի է ունեցել 7 ժ անց: Մակարդման գործընթացի վերջում թթվության փոփոխման գործընթացը հավասարակշռվել է և բոլոր փորձանմուշների առավելագույն թթվությունը՝ 115°C ($\text{pH}=4,5$) գրանցվել է ցանքսից հետո 8 ժ ընթացքում:

Հետազոտությունների հաջորդ փուլում ուսումնասիրվել է լակտովոզի տարբեր կոնցենտրացիաների ազդեցությունը *Lactobacillus salivarius* պրոբիոտիկ կուլտուրայի կողմից թթվություն առաջացնելու ակտիվության վրա: Արդյունքները բերված են Գծանկար 13-ում և 14-ում:



Գծանկար 13. Լակտովոզի տարբեր կոնցենտրացիաների ազդեցությունը *Lactobacillus salivarius* պրոբիոտիկ կուլտուրայի թթվածնագոյացնող ակտիվության վրա



Գծանկար 14. Մածնի ստուգիչ և վիործանական նմուշներում տիտրվող թթվության ($^{\circ}$ Թ) փոփոխությունը

Արդյունքները ցույց են տալիս, որ ինչքան մեծ է լակտովոզի կոնցենտրացիան, այնքան մակարդման գործընթացն ավելի դանդաղ է ընթանում: Տիտրվող թթվության ամենամեծ տարբերությունը նկատվել է ստուգիչ նմուշի և 0,3 ու 0,5 % լակտովոզ պարունակող վիործանմուշների միջև՝ 8 ժ մակարդումից հետո: pH ցուցանիշի համար ամենամեծ տարբերությունը նկատվել է 8 ժ մակարդումից հետո ստուգիչ նմուշի և 0,5 % լակտովոզ պարունակող վիործանմուշի միջև:

Որպես կանոն, կաթնաթթվային մթերքի արտադրության ժամանակ *Lactobacillus salivarius* կուլտուրան օգտագործվում է այլ միկրոօրգանիզմների հետ միասին և մակարդման գործընթացը շարունակվում է մինչև 100-110 $^{\circ}$ Թ (pH=4,4-4,6) թթվության ստացումը: Ուսումնասիրված վիործանմուշների համար մինչև 100 $^{\circ}$ Թ (pH=4,6) թթվության բարձրացումը նկատվել է $7,2 \pm 0,1$ ժ անց ստուգիչ նմուշի և 0,1 % և 0,3 % լակտովոզ պարունակող վիործանմուշի համար, և $8,1 \pm 0,1$ ր անց՝ 0,5 % պրեբիոտիկ պարունակող վիործանմուշների համար: Մինչև 110 $^{\circ}$ Թ (pH=4,4) թթվության բարձրացումը տեղի է

ունեցել $8,5 \pm 0,1$ ժ անց ստուգիչ նմուշում և 0,1 % և 0,3% լակտովոզ պարունակող փորձանմուշներում, իսկ 0,5 % լակտովոզ պարունակող փորձանմուշում՝ $9,2 \pm 0,1$ ժ անց:

Հաստատվել է նաև, որ *Lactobacillus salivarius*-ի կիրառմամբ պատրաստված փորձանմուշների պահպանման ընթացքում ակտիվ և տիտրվող թթվությունների վրա լակտովոզի ավելացումը էական ազդեցություն չի թողնում:

Այսպիսով, հաստատվել է, որ 0,5 % լակտովոզի ավելացումը դանդաղեցնում է նոր մանրէական մակարդով մածնի մակարդման գործընթացը: Սակայն 0,3 % պրեբիոտիկի ավելացման դեպքում մակարդման գործընթացը 30 րով արագանում է:


Վերոնշյալ արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ լակտովոզի ավելացումն էական ազդեցություն չի թողնում նոր մանրէական մակարդի կիրառմամբ մածնի արտադրման տեխնոլոգիական գործընթացի վրա: Ավելի մեծ քանակությամբ (0,5%) լակտովոզի ավելացումն ազդում է *Lactobacillus salivarius*-ի կողմից թթվության առաջացման վրա, 1 ժ-ով մեծացնելով մակարդման տևողությունը, ինչը կապված է ածխացրերի մետաբոլիզմի հետ:

4.2. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Մեր կողմից իրականացված հետազոտությունների ընթացքում հաստատվել է, որ պրեբիոտիկ լակտովոզը դրական ազդեցություն է թողնում մանրէական մակարդի կազմի մեջ մտնող մանրէների կենսունակության, ինչպես նաև մածնի զգայորոշման ցուցանիշների վրա: Առավել էական արդյունքներ ստացվել են նոր մանրէական մակարդի օգտագործման և 0,3% լակտովոզի ավելացման դեպքում [19]:

Ենելով վերոնշյալից՝ որոշվել է կատարելագործել լակտովոզի հավելմամբ մածնի տեխնոլոգիա՝ կիրառելով ընտրված նոր մանրէական մակարդը, որի կազմն ու բնութագիրը բերված են աղյուսակ 42-ում:

Մածնի արտադրության համար կատարելագործված տեխնոլոգիական գործընթացը ներկայացված է գծանկար 15-ում:



Գծանկար 15. Լակտովոզի հավելմամբ մածնի արտադրության տեխնոլոգիական սխեման

Հումքի ընդունումն ու որակի գնահատումն իրականացվել է <<-ում գործող կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգի [11, 84] պահանջներին համապատասխան: Մածնի արտադրման համար օգտագործվել է 2-րդ կարգից ոչ ցածր կատեգորիայի կաթ՝ 19°Ծ -ից ոչ բարձր թթվության:

Նորմալացում և խառնում: Կախված հումքի և պատրաստի մթերքի յուղայնությունից՝ կատարվել է նորմալացում ըստ յուղի և կաթի չոր նյութերի պարունակության, օգտագործելով յուղազուրկ կաթ: Նորմալացումը կատարվել է այն հաշվարկով, որ պատրաստի մթերքում յուղի պարունակությունը համապատասխանի սահմանված պահանջին:

Համասեռացում, լակտովոզի ավելացում և պաստերացում: Յուղային ֆազի կայունության ապահովման նպատակով իրականացվել է համասեռացում՝ $60-65^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի և 12-20 ՄՊա ճնշման պայմաններում:

Լակտովոզի օշարակն ավելացվել է նախքան պաստերացումը, խառնուրդի ընդհանուր զանգվածի 0,3 % չափով:

Ըստ Դիլանյանի թթու կաթնամթերքների պատրաստման ժամանակ թանձր մակարդվածք ստանալու համար անհրաժեշտ է ալբումինը նստեցնել, որին հասնում բարձր ջերմաստիճանում պաստերացման միջոցով [7]: Հաշվի առնելով նշված հանգամանքը պաստերացումն իրականացվել է $90-95^{\circ}\text{C}$ -ում, 5-10 ր տևողությամբ, որը նպաստում է նաև անցանկայի միկրոֆլորայի ապակտիվացմանը:

Պաղեցում, մակարդի ավելացում և խառնում: Խառնուրդը պաղեցվել է մինչ մակարդման օպտիմալ ջերմաստիճանը՝ $40-42^{\circ}\text{C}$: Ընտրվել է մածնի արտադրման թերմոստատային եղանակը՝ պինդ մակարդվածքի ստացումն ապահովելու համար: Մակարդն ավելացվել է խառնուրդի 2,5-3%-ի չափով:

Մակարդում, պաղեցում, տարայավորում, սառեցում, պահպանում և իրացում: Մակարդումն իրականացվել է $40-42^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում 3-5 ժ, մինչև $100\pm5^{\circ}\text{Ծ}$ թթվության ստացումը: Այնուհետև մթերքը պաղեցվել է մինչև $4-6^{\circ}\text{C}$ և ուղարկվել պահպանման: Մինչ իրացումը մթերքը պետք է պահպանել սառնարանային ջերմաստիճանում ($4-6^{\circ}\text{C}$) և 85-90 % հարաբերական խոնավության պայմաններում: Պատրաստի մթերքի թթվությունը $100-110^{\circ}\text{Ծ}$ է:

Ինչպես երևում է Գծանկար 15-ից, ռեզերվուարային եղանակով մածնի արտադրման ժամանակ տեխնոլոգիական գործընթացները նույն են, սակայն մակարդի ավելացումից հետո խառնուրդը չի տարայավորվում, մակարդումն իրականացվում է ռեզերվուարում 6-8 ժ, մինչև $100-110^{\circ}\text{C}$ թթվության ստացումը: Մակարդվածքի ստացումից հետո մթերքը տարայավորվում և սառեցվում է մինչև $4-6^{\circ}\text{C}$:

Լակտովոզի հավելմամբ մածուն կարելի է պատրաստել տարբեր յուղայնության, ընդ որում, ցածր յուղայնությամբ մթերքի արտադրությունը կարող է մեծացնել սպառողների շրջանակը, քանի որ մթերքը կարող է խորհուրդ տրվել նաև ավելորդ քաշի հետ կապված խնդիր ունեցողներին:

Աղ. 43-ում ներկայացված են $2,5\%$ յուղայնություն ունեցող ավանդական և լակտովոզ պարունակող (փորձնական) մածնի բաղադրագրերը՝ 1000 կգ պատրաստի մթերքի հաշվով օգտագործված հումքի ծախսը:

Աղյուսակ 43

$2,5\%$ յուղայնություն ունեցող ավանդական և լակտովոզ պարունակող մածնի
բաղադրագրերը (1000 կգ պատրաստի մթերքի հաշվով)

Հումքի անվանումը	Հումքի ծախսը, կգ	
	Ավանդական	Փորձնական
Հում կաթ ($2,5\%$ յուղայնության)	962	959
այդ թվում՝ անարատ կաթ ($3,4\%$ յուղայնության), յուղագուրկ կաթ ($0,05\%$ յուղայնության),	732	732
Մակարդ՝ պատրաստված $0,05\%$ յուղայնության յուղագուրկ կաթից	230	227
Լակտովոզի օշարակ (100 մլ-ում $66,7$ մգ-ից ոչ պակաս լակտովոզի պարունակությամբ)	38,0	38,0
	-	3,0

4.3. ԼԱԿՏՈՒԼՈԶ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԱԾՆԻ ՄԵՋ ԸՆԹԱՑՈՂ ՊՐՈՏԵՌԵԼԻՏԻԿ ԵՎ ԼԻՊՈԼԻՏԻԿ ԳՈՐԾՄՆԹԱՑՆԵՐԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտնի է, որ կաթնաթթվային մանրէներն օժտված են պրոտեռլիտիկ և լիպոլիտիկ ակտիվությամբ, ինչը կրիտիկական ազդեցություն կարող է ունենալ մթերքի հետագա հասունացման գործընթացների վրա:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ մածնի փորձնական (լակտովոզ պարունակող) և ստուգիչ նմուշներում ուսումնասիրվել է սպիտակուցների և յուղի քայքայման արգասիք-

Ների կուտակման ժամանակ ընթացող պրոտեոլիտիկ և լիպոլիտիկ գործնթացների առանձնահատկությունները:

Փորձերի կատարման ընթացքում վերոնշյալ գործնթացների բնութագրման համար որոշվել են ազդային ֆրակցիաների (ընդհանուր լուծվող ազոտ և ոչ սպիտակուցային լուծվող ազոտ), ազատ ամինաթթուների, ինչպես նաև լիպիդային ֆրակցիաների պարունակությունները:

Մածնի նմուշներում ընդհանուր լուծվող ազոտի ֆրակցիայի պարունակությունը բերված է աղ. 44-ում:

Ըստ ստացված տվյալներ՝ մինչ մակարդումը մածնի փորձնական և ստուգիչ նմուշների համար ընդհանուր լուծվող ազոտի ֆրակցիայի պարունակությունը նույն է և կազմում է 6,5 %: Նմուշների պահպանման ժամանակ դրանցում ընդհանուր լուծվող ազոտի պարունակությունն աճում է, ինչը ցույց է տալիս, որ նմուշներում ընթանում են պրոտեոլիտիկ գործնթացներ: Այդ փոփոխությունների արագությունն ավելի արտահայտված է մածնի փորձնական նմուշի համար: Նմուշների պահպանման 5-րդ օրը ընդհանուր լուծվող ազոտի ֆրակցիաների բացարձակ արժեքները մածնի փորձնական նմուշում կազմում են 13,5 %, իսկ ստուգիչ նմուշում՝ ընդհամենը 11,3 %:

Աղյուսակ 44

Մածնի նմուշներում ընդհանուր լուծվող ազոտի ֆրակցիայի պարունակությունը

Մածնի արտադրության փուլը	Ընդհանուր լուծվող ազոտի պարունակությունը (%)	
	Փորձնական նմուշում	Ստուգիչ նմուշում
Մինչև մակարդումը	6,5±0,2	6,5±0,2
1օր	9,5±0,2	8,0±0,2
2օր	10,7±0,3	9,2±0,2
3օր	11,8±0,3	10,0±0,3
5օր	13,5±0,3	11,3±0,3

Աղ. 45-ում բերված տվյալները բնութագրում են մածնի նմուշներում ոչ սպիտակուցային լուծվող ազոտի ֆրակցիաների կուտակումը: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ պահպանմանը զուգընթաց, մածնի նմուշներում ոչ սպիտակուցային լուծվող ազոտի քանակը շարունակել է աճել: Պահպանման 5-րդ օրվա ընթացքում մածնի փորձնական նմուշում այն աճել է 3,2 %-ով, իսկ ստուգիչ նմուշում՝ 2%-ով:

Մածնի նմուշներում ոչ սպիտակուցային լուծվող ազոտի ֆրակցիայի պարունակությունը

Մածնի արտադրության փուլը	Ոչ սպիտակուցային լուծվող ազոտի պարունակությունը, % (ընդհանուր ազոտից)	
	Փորձնական նմուշում	Ստուգիչ նմուշում
Մինչև մակարդումը	3,3±0,1	3,3±0,1
1օր	4,2±0,1	3,8±0,1
2օր	5,2±0,1	4,4±0,1
3օր	5,8±0,2	4,8±0,1
5օր	6,5±0,2	5,3±0,2

Մածնի փորձնական և ստուգիչ նմուշներում ազատ ամինաթթուների պարունակությունները բերված են համապատասխանաբար աղ. 46-ում և աղ. 47-ում:

Ազատ ամինաթթուների պարունակությունը մածնի փորձնական նմուշում, մգ%

Ազատ ամինաթթուներ	Մածնի փորձնական նմուշները	
	1օրական	5օրական
Լիզին	22,4±0,9	45,6±1,8
Հիստիդին	3,0±0,1	7,2±0,3
Արգինին	2,4±0,1	6,5±0,2
Ասպարագինաթթու	4,1±0,2	11,0±0,4
Տրեոնին	4,0±0,2	10,5±0,4
Սերին	5,7±0,3	13,3±0,5
Գլուտամինաթթու	18,4±1,2	38,8±1,6
Պրոլին	Հետքեր	1,1±0,05
Գլիցին	1,5±0,07	2,8±0,1
Ալանին	5,9±0,3	14,4±0,5
Վաին	18,4±0,7	46,4±1,6
Մեթիոնին	12,5±0,5	33,5±1,2
Իզոլեյցին	15,1±0,6	33,8±1,2
Լեյցին	30,4±1,2	68,6±2,7
Թիրոզին	1,8±0,08	4,2±0,2
Ֆենիլալանին	20,4±0,8	46,5±1,6
Գումարը	166,0±6,2	384,2±14,2
Այդ թվում անփոխարինելի ամինաթթուներ		
Լիզին	22,4±0,9	45,6±1,8
Լեյցին	30,4±1,2	68,6±2,7
Իզոլեյցին	15,1±0,6	33,8±1,2
Ֆենիլալանին	20,4±0,8	46,5±1,6
Մեթիոնին	12,5±0,5	33,5±1,2

Աղյուսակ 46 (շարունակություն)

Ազատ ամինաթթուներ	Մածնի փորձնական նմուշները	
	1 օրական	5 օրական
Վալին	18,4±0,7	46,4±1,6
Տրեոնին	4,0±0,2	10,5±0,4
Գումարը	123,2±4,8	284,9±10,6

Աղյուսակ 47

Ազատ ամինաթթուների պարունակությունը մածնի ստուգիչ նմուշում, մգ%

Ազատ ամինաթթուներ	Մածնի ստուգիչ նմուշները	
	1 օրական	5 օրական
Լիզին	13,2±0,6	20,6±1,8
Հիստիդին	1,3±0,05	2,5±0,1
Արգինին	2,0±0,08	4,2±0,1
Ասպարագինաթթու	5,8±0,2	9,4±0,4
Տրեոնին	4,8±0,2	5,6±0,2
Սերին	6,6±0,3	8,6±0,3
Գլուտամինաթթու	10,2±0,4	15,4±0,6
Պրոլին	Հետքեր	Հետքեր
Գլիցին	1,1±0,05	1,0±0,05
Ալանին	6,3±0,3	9,2±0,4
Վալին	6,6±0,3	10,4±0,4
Մեթիոնին	9,5±0,4	12,6±0,5
Իզոլեյցին	7,5±0,3	9,4±0,4
Լեյցին	20,3±0,8	42,6±1,7
Թիրոզին	2,0±0,08	4,3±0,2
Ֆենիլալանին	7,8±0,3	10,0±0,4
Գումարը	105,0±4,0	165,9±6,2
այդ թվում անփոխարինելի ամինաթթուներ		
Լիզին	13,2±0,6	20,6±1,8
Լեյցին	20,3±0,8	42,6±1,7
Իզոլեյցին	7,5±0,3	9,4±0,4
Ֆենիլալանին	7,8±0,3	10,0±0,4
Մեթիոնին	9,5±0,4	12,6±0,5
Վալին	6,6±0,3	10,4±0,4
Տրեոնին	4,8±0,2	5,6±0,2
Գումարը	69,7±2,6	111,3±4,8

Աղ. 46-ում և աղ. 47-ում ներկայացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ լակտովոզ պարունակող 1 օրական մածնի փորձնական նմուշում ազատ ամինաթթուների պարունակությունը կազմում է $166,0 \pm 6,2$ մգ%, մինչդեռ 1 օրական ստուգիչ նմուշում ավելի ցածր է՝ $105,0 \pm 4,0$ մգ%: Բերված արդյունքները

փաստում են, որ պահպանման ընթացքում ազատ ամինաթթուների քանակությունն աճել է, այսինքն տեղի է ունեցել հիդրոլիզ: Այսպես, 5 օրական մածնի փորձնական նմուշում դրանց գումարային պարունակությունը կազմում է $384,2 \pm 14,2$ մգ%, իսկ 5 օրական ստուգիչ նմուշում վերջինս ավելի ցածր է՝ $165,9 \pm 6,2$ մգ%:

1 և 5 օրական մածնի փորձնական նմուշներում անփոխարինելի ամինաթթուները կազմում են ազատ ամինաթթուների 74,2 %-ը: Այս երկու փորձանմուշի դեպքում էլ ազատ ամինաթթուների ընդհանուր քանակից գերակշռում են լեյցինը ($30,4-68,6$ մգ%), լիզինը ($22,4-45,6$ մգ%), ֆենիլալանինը ($20,4-46,5$ մգ%), վալինը ($18,4-46,4$ մգ%), գլուտամինաթթուն ($18,4-38,8$ մգ%) և իզոլեյցինը ($15,1-33,8$ մգ%):

Մածնում ընթացող լիպոլիտիկ գործընթացների բնութագրման համար հետազոտվել է ցնդող և բարձրամոլեկուլյար ճարպաթթուների քանակը: Ստացված արդյունքները ներկայացված են աղ. 48-ում և աղ. 49-ում:

Աղյուսակ 48

Ցնդող ճարպաթթուների պարունակությունը մածնի նմուշներում (մգ%)

Ցնդող ճարպաթթուների	Փորձնական նմուշում		Ստուգիչ նմուշում	
	1 օրական	5 օրական	1 օրական	5 օրական
Մրջնաթթու	$1,18 \pm 0,04$	$1,44 \pm 0,05$	$0,80 \pm 0,03$	$0,95 \pm 0,04$
Քացախաթթու	$5,64 \pm 0,20$	$8,80 \pm 0,36$	$4,08 \pm 0,16$	$5,24 \pm 0,20$
Պրոպիոնաթթու	-	-	-	-
Կարագաթթու	$0,90 \pm 0,04$	$1,20 \pm 0,04$	$0,62 \pm 0,02$	$0,78 \pm 0,03$
Ընդհամենք	$7,72 \pm 0,30$	$11,44 \pm 0,50$	$5,50 \pm 0,22$	$6,97 \pm 0,26$

Աղ. 48-ում բերված արդյունքները ցույց են տալիս, որ մածնի փորձնական նմուշներում ցնդող ճարպաթթուների կուտակումն ավելի ակտիվ է ընթանում: Այսպես, 5 օրական մածնի փորձնական նմուշում կուտակվել են $11,44 \pm 0,50$ մգ% ցնդող ճարպաթթուներ, ինչը 1,64 անգամ ավել է 5 օրական ստուգիչ նմուշում կուտակված ցնդող ճարպաթթուների քանակից ($6,97 \pm 0,26$ մգ%): 1 օրական մածնի փորձնական և ստուգիչ նմուշներում համեմատաբար ավելի քիչ ցնդող ճարպաթթուներ են կուտակվել, համապատասխանաբար՝ $7,72 \pm 0,30$ մգ% և $5,50 \pm 0,22$ մգ%:

Ըստ տոկոսային հարաբերության, մածնի բոլոր նմուշներում ցնդող ճարպաթթուներից գերակշռում է քացախաթթուն ($73,1-77,2$ %):

Բարձրամոլեկուլյար ճարպաթթուների քանակը (%) մածնի 5 օրական նմուշներում

Բարձրամոլեկուլյար ճարպաթթուներ	Փորձնական	Ստուգիչ
Հագեցած		
Կարագաթթու	$2,7 \pm 0,10$	$2,80 \pm 0,12$
Կապրոնաթթու	$2,40 \pm 0,04$	$3,24 \pm 0,14$
Կապրիլաթթու	$3,64 \pm 0,15$	$4,14 \pm 0,16$
Կապրինաթթու	$3,53 \pm 0,15$	$5,80 \pm 0,23$
Լաուրինաթթու	$3,08 \pm 0,12$	$4,46 \pm 0,18$
Միրիստինաթթու	$9,56 \pm 0,32$	$8,50 \pm 0,30$
Պալմիտինաթթու	$24,80 \pm 0,96$	$27,64 \pm 0,86$
Ստեարինաթթու	$4,74 \pm 0,20$	$6,58 \pm 0,26$
Չհագեցած		
Կապրոլեինաթթու	$1,60 \pm 0,64$	Հետքեր
Լաուրոլեինաթթու	$1,85 \pm 0,74$	Հետքեր
Միրիստոլեինաթթու	$3,78 \pm 0,15$	$3,20 \pm 0,14$
Պալմիտոլեինաթթու	$2,54 \pm 0,10$	$1,76 \pm 0,07$
Օլեինաթթու	$25,42 \pm 10,17$	$24,60 \pm 0,10$
Լինոլաթթու	$5,66 \pm 0,23$	$4,08 \pm 0,16$
Լինոլենաթթու	$4,70 \pm 0,20$	$3,20 \pm 0,14$
Ընդհանուր պարունակությունը, մգ%	$5,64 \pm 0,22$	$2,40 \pm 0,10$

Աղ. 49-ում ներկայացված տվյալները վկայում են, որ պահպանման ընթացքում տեղի է ունենում յուղի հիդրոլիզ: 5 օրական մածնի փորձնական նմուշում բարձրամոլեկուլյար ճարպաթթուների ընդհանուր պարունակությունը ($5,64 \pm 0,22$ մգ%) ստուգիչի համեմատ ավելացել է 2,35 անգամ:

Այսպիսով, համաձայն կարարված հետազոտությունների արդյունքներ՝ պահպանման ընթացքում լակտոպոզ պարունակող մածնի փորձնական նմուշում փեղի են ունենում պրոպեռլիփիկ և լիպոլիփիկ գործընթացներ, որոնք պայմանավորում են մթերքի հասունացումը [19]: Այնուամենայնիվ, ամփոփելով վերոնշյալ հետազոտությունների արդյունքները, կարող ենք նշել, որ լակտոպոզի ավելացումն էական արդարակած ազդեցություն չի գործում պրոպեռլիփիկ և լիպոլիփիկ գործընթացների վրա, ուստի սպիրակուցների և ճարպերի քայլայմամբ պայմանավորված արագներ (օր. համի և հոլի արագներ) չի առաջացնում:

ԳԼՈՒԽ 5. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՎՀԿԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ազգաբնակչության համար անվտանգ և որակյալ կաթնամթերքի արտադրությունը հանդիսանում է ժամանակակից շուկայական պայմաններում կաթնարդյունաբերության զարգացման արդիական խնդիրներից մեկը։ Մեր կողմից իրականացված հետազոտությունները (Գլուխ 3) հավաստել են, որ պաստերացված կաթի արտադրությունում առկա են մանրէաբանական ռիսկերի հետ կապված խնդիրներ, որոնց նվազեցման և կանխարգելման նպատակով խիստ անհրաժեշտ է կաթնամթերքի արտադրությունում ներդնել և կիրառել անվտանգության կառավարման ՎՎՀԿԿ համակարգ։

Անվտանգության ապահովման այս համակարգը հանդիսանում է։

1. արտադրության, վերամշակման և մատակարարման ընթացքում գործողությունների հսկման, ինչպես նաև մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների նպատակային օգտագործման արդյունավետ գործիք,
2. որակի հսկման ավանդական սահմանափակումների վերացման գործիք,
3. տեխնոլոգիական գործընթացների արդիականացման ժամանակ փոփոխությունների և առաջընթացի կարգավորման ճկուն համակարգ,
4. մթերքի անվտանգության հետ կապված խնդիրների նվազեցման միջոց,
5. կանխատեսվող նորահայտ ռիսկերի նույնականացման միջոց,
6. արտադրանքի և արտադրողների նկատմամբ սպառողների վստահությանը հասնելու ուղի,
7. արտադրանքի և բիզնեսի միջազգային խթանման մոտեցում [176]։

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ իրականացվել է մեր կողմից կատարելագործված տեխնոլոգիայով պատրաստվող մածնի արտադրությունում ՎՎՀԿԿ համակարգի ներդրում։ ՎՎՀԿԿ համակարգի ներդրման 12 քայլերը, ներառյալ նշված համակարգի 7 հիմնական սկզբունքները հետևյալն են՝

1. ՎՎՀԿԿ աշխատանքային խմբի ստեղծում,
2. արտադրանքի նկարագրություն,
3. արտադրանքի նախատեսվող օգտագործման որոշում,

4. արտադրության տեխնոլոգիայի գործընթացային սխեմայի մշակում,
5. գործընթացային սխեմայի ստուգում (վերիֆիկացիա) և հաստատում,
6. Սկզբունք 1՝ վտանգների վերլուծություն (վտանգների նույնականացում և գնահատում),
7. Սկզբունք 2՝ հսկման կրիտիկական կետերի (<ԿԿ) որոշում,
8. Սկզբունք 3՝ յուրաքանչյուր հսկման կրիտիկական կետի (<ԿԿ) համար կրիտիկական սահմանների որոշում,
9. Սկզբունք 4՝ հսկման կրիտիկական կետերի (<ԿԿ) մոնիթորինգի ընթացակարգերի կիրառում և տվյալների գրառում,
10. Սկզբունք 5՝ ուղղիչ գործողությունների մշակում և իրականացում,
11. Սկզբունք 6՝ ստուգման ընթացակարգերի սահմանում (վերիֆիկացիա),
12. Սկզբունք 7՝ ՎՎՀԿԿ պլանի փաստաթղթավորման համակարգի ստեղծում [4, 51, 103, 115, 121]:

Ձևավորված աշխատանքային խումբը, որի անդամներն ունեն համապատասխան մասնագիտական գիտելիքներ, փորձ և հմտություններ, պատասխանատու է ՎՎՀԿԿ համակարգի մշակման, ներդրման և կառավարման համար:

Աշխատանքային խմբի ձևավորումից հետո հաստատվել է մթերքի նկարագրությունը, որը ներկայացված է աղյուսակ 50-ում:

Աղյուսակ 50

Արտադրանքի նկարագրությունը

Արտադրանքի անվանումը	Լակտովոզի հավելմամբ մածուն
Վերամշակման եղանակը	Պաստերացված կաթի մակարդմամբ ստացված մթերք
Արտադրանքի հատկությունները	Պրոբիոտիկ և պրեբիոտիկ բաղադրիչների առկայությամբ պայմանավորված ֆունկցիոնալ հատկություններ, տիտրվող թթվությունը՝ $100\text{-}110^{\circ}\text{D}$
Սպառողները	Տարբեր տարիքային խմբի մարդիկ
Տարայավորման տեսակը	Ապակյա տարայում (250գ կամ 500գ) լցված
Պահպանման տևողությունը	Երաշխավորվող պահպանման ժամկետը՝ 5 օր $4\pm2^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում
Ո՞րտեղ է վաճառվելու	Մանրածախ առևտուի կետեր, սննդի կետեր
Պահել $4\pm2^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում	

Գործընթացային բլոկ-սխեմայի (*Հավելված 2*) մշակման և հաստատման համար հիմք է ընդունվել Գծանկար 15-ում (*Գլուխ 4*) ներկայացված մածնի արտադրության տեխնոլոգիական սխեման և Կողեքս Ալիմենտարիուսի կողմից առաջարկվող «Որոշումների ընդունման ծառը» (*Հավելված 1*):

Հաջորդիվ իրականացվել է մածնի արտադրության վտանգների վերլուծություն՝ հաշվի առնելով վտանգի հանդիպման հավանականությունը և ազդեցության հետևանքի ծանրության աստիճանը: *Հաշվի* առնելով նաև պաստերացված կաթի և արտադրության համար հիմնական հումք համարվող հում կաթի անվտանգության ռիսկերի գնահատման արդյունքները (*Գլուխ 3*), որպես էական վտանգներ ընդունվել են մանրէաբանական վտանգները, որոնք էլ ներառվել են նոր տեխնոլոգիայով պատրաստվող մածնի արտադրության ՎՎՀԿԿ պլանում (*Հավելված 3*): Արտադրության համար հիմնական հումք համարվող հում կաթի քիմիական վտանգները (թունավոր տարրեր, պեստիցիդներ և ռադիոնուկլիդներ) գտնվում են թույլատրելի ռիսկի տիրույթում, հետևաբար ՎՎՀԿԿ պլանում չեն ներառվել: ՎՎՀԿԿ պլանում քիմիական վտանգներից չեն ներառվել նաև.

1. պահածոյացնող և արգելակող նյութերը, քանի որ մածնի արտադրության համար հում կաթն ընդունելու պահին իրականացվող հետազոտության արդյունքում այսպիսի նյութեր պարունակելու դեպքում կաթը խոտանվում է,

2. հակաբիոտիկները, որոնց առկայության դեպքում ևս կաթը խոտանվում է և արտադրության նպատակով չի օգտագործվում, քանի որ այս նյութերը ոչնչացնում են կաթնաթթվային մանրէներին և կանխում մակարդման գործընթացը [6],

3. միկոտոքսինները, քանի որ մեր կողմից կատարելագործված տեխնոլոգիայով պատրաստվող մածնի արտադրության համար կիրառվել է արոտային պահվածքում գտնվող կենդանիների թարմ կաթը:

Այսպիսով, լակտովոզի հավելմամբ մածնի արտադրության համար ՎՎՀԿԿ պլանում (*Հավելված 3*) ներառվել են հսկման կրիտիկական կետերը, դրանցից յուրաքանչյուրի համար կրիտիկական սահմանները, մոնիթորինգի ընթացակարգերը, ուղղիչ գործողությունները և կանխարգելիչ միջոցառումները: Հսկման կրիտիկական կետերի համար կրիտիկական սահմանները որոշվել են հիմք ընդունելով կաթի և կաթնամթեր-

քի անվտանգության բնագավառը կարգավորող << [11] և ԵԱՏՄ [74, 84] տեխնիկական կանոնակարգերը:

Հաջորդիվ իրականացվել է արդեն պատրաստի մթերքի մանրէաբանական ցուցանիշների ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացված են աղ. 51-ում:

Աղյուսակ 51

Լակտովոզ պարունակող մածնի մանրէաբանական ցուցանիշները

C/C	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի արժեքը
1	Մթերքի զանգված (գ), որում ԱՅԽՄ չի հայտնաբերվել	0,01
2	1 գ մթերքում խմորասնկերի և բորբոսասնկերի քանակ	չի հայտնաբերվել
3	Կաթնաթթվային մանրէների քանակը (ԳԱՄ/գ)	$7 \times 10^{10} - 3 \times 10^8$ *

Ծանոթություն: * - արժեքները պահպանման 1-ին և 5-րդ օրերի համար:

Համաձայն աղյուսակ 51-ում ներկայացված արդյունքների՝ լակտովոզ պարունակող պատրաստի արտադրանքում ԱՅԽՄ, խմորասնկեր և բորբոսասնկեր չեն հայտնաբերվել, իսկ կաթնաթթվային մանրէների քանակները մթերքի պահպանման 1-ին և 5-րդ օրերին համապատասխանում են սահմանված պահանջներին:

Ընդհանուր առմամբ ՎՎՀԿԿ համակարգի սկզբունքների կիրառմամբ ապահովվել է կատարելագործված տեխնոլոգիայով անվտանգ մածնի արտադրությունը, ինչպես նաև արտադրությունում ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով պատրաստի մթերքի փորձարկումների կրճատումը:

Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նոր մթերքի արտադրության տեխնոլոգիայի մշակման և կատարելագործման ժամանակ պետք է ապահովել ոչ միայն անվտանգ, այլ նաև բարձր սննդային արժեք ունեցող մթերքի ստացումը: Վերջինս պետք է ոչ միայն նպաստի առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, սնմամբ պայմանավորված հիվանդությունների կանխարգելմանը, այլև բավարարի մարդու օրգանիզմի ֆիզիոլոգիական պահանջները:

Ելելով վերոնշյալից՝ իրականացվել է լակտովոզի հավելմամբ մածնի ֆիզիկաքիմիական ցուցանիշների ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացված են աղ. 52-ում:

Հակտուլող պարունակող մածնի ֆիզիկաքիմիական ցուցանիշները

C/C	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի արժեքը
1	Յուղի զանգվածային մաս	$2,5 \pm 0,1\%$
2	Սպիտակուցի զանգվածային մաս	$3,2 \pm 0,1\%$
3	Ածխաջրերի զանգվածային մաս	$4,3 \pm 0,1\%$

Այնուհետև գնահատվել են պատրաստի մածնի նմուշների զգայորոշման ցուցանիշները, իսկ արդյունքները համեմատվել են ավանդական տեխնոլոգիայով պատրաստված նմուշի համար ստացված արդյունքների հետ: Մածնի զգայորոշման ցուցանիշների գնահատման բալային սանդղակն ու համտեսի արդյունքները ներկայացված են Հավելված 4-ում:

Համտեսի արդյունքում լակտուլոզի հավելմամբ մածնի նմուշները բարձր գնահատական են ստացել: Դրանք ունեցել են միատարր պինդ կոնսիստենցիա, մաքուր, թույլ թթվային համ և հոտ, համասեռ սպիտակ գույն՝ թույլ կրեմագույն երանգով:

Այսպիսով, կարարելագործված լակտուլոզի արդադրված մածունը, շնորհիվ իր բաղադրության, բնութագրվում է ոյուրամարտությամբ, բարձր սննդային արժեքով: Այն պարունակում է անհրաժեշտ քանակությամբ կաթնաթթվային մանրէներ, որոնց կենսագործունեության շնորհիվ ճնշվում և կանխվում է մածնի մեջ կողմնակի ախտածին միկրոֆլորայի զարգացումը: Մակարդի միկրոֆլորայի զարգացման ընթացքում առաջացող կաթնաթթուն սղեղծում է թթվային միջավայր, որում ոչնչանում են մթերքի արագներ առաջացնող, ինչպես նաև աղիքային ցուպիկի խմբի մանրէները: Բացի այս, ընդգծված կարևորություն ունի մածնի արդադրության նպատակով պրոբիոտիկ կուլտուրայի և պրեբիոտիկ լակտուլոզի համապեղ օգտագործումը, ինչը թույլ է փափս մեր կողմից կարարելագործված լակտուլոզի արդադրավոր ֆունկցիոնալ մթերքը դասել մարդու առողջ սնման լրեսանկյունից արժեքավոր ֆունկցիոնալ մթերքների շարքին:

ԳԼՈՒԽ 6. ԼԱԿՏՈՒԼՈԶԻ ՀԱՎԵԼՄԱՄԲ ՄԱԾՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նոր մթերքի մշակման ժամանակ կարևոր փուլերից մեկը վերջինիս արտադրության տնտեսական արդյունավետության գնահատումն է, որի ժամանակ կարևոր ցուցանիշներ են համարվում արտադրության ժամանակ նվազագույն ծախսերը: Դրանք արտացոլվում են մթերքի ինքնարժեքում և գնագոյացման ժամանակ:

Պայմանական տնտեսական արդյունավետության գնահատումն իրականացվել է հաշվի առնելով «ԽԱՔ» ՍՊԸ-ի արտադրական հզորությունը: Տվյալ դեպքում լակտուլոզ պարունակող և ֆունկցիոնալ նշանակություն ունեցող մածնի արտադրության համար օրական արտադրական հզորությունը կազմել է 200 կգ:

Սույն աշխատանքի շրջանակում առաջարկվող տեխնոլոգիան կարող է կիրառվել կաթնաթթվային մթերքների արտադրման տեխնոլոգիական հոսքագծում առանց հավելյալ կապիտալ ներդրումների, քանի որ լրացուցիչ նոր սարքավորումներ չեն պահանջվում: Բացի այդ, լակտուլոզի հավելմամբ (փորձնական) և ավանդական տեխնոլոգիայով մածնի պատրաստման համար արտադրական և ոչ արտադրական ծախսերը նույնն են, իսկ տարբերություն առկա է միայն հումքի ծեռքբերման ծախսերի համար:

Հումքի ծախսը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով Գլուխ 4 բաժնում ներկայացված բաղադրագիրը (աղ. 49): Աղ. 53-ում ներկայացված է 1 տ մածնի արտադրության համար օգտագործվող հումքի ծախսը:

Աղյուսակ 53

1 տ մածնի արտադրության համար օգտագործվող հումքի ծախսը

Հումք	Գինը, դրամ/լ		Ծախսը, լ/տ		Արժեքը, հազ. դրամ	
	Ստուգիչ	Փորձ-նական	Ստուգիչ	Փորձ-նական	Ստուգիչ	Փորձ-նական
Կաթ	140	140	962	959	134,68	134,26
Լակտուլոզի օշարակ	-	11256	-	3	-	33,768
Ընդհամենը					134,68	168,028

Ծանոթություն: Փորձնական նմուշը պատրաստվել է պրերիորիկ լակտուլոզի հավելմամբ, իսկ սպուգիչը նույն տեխնոլոգիայով, սակայն առանց լակտուլոզի կիրառման:

Այսուակ 53-ից երևում է, որ փորձնական և ավանդական մթերքի արտադրության համար հումքի ծեռքբերման ծախսերի տարբերությունը 1 տ մթերքի հաշվով կազմում է 33348 դրամ, հետևաբար 1 կգ մթերքի հաշվով կլինի՝ մոտավորապես 34 դրամ:

Այսպիսով կարող ենք նշել, որ մեր կողմից առաջարկվող տեխնոլոգիայով պատրաստվող մածնի ինքնարժեքն ավանդական մթերքի ինքնարժեքի համեմատ բարձր կլինի, սակայն, հաշվի առնելով նոր մթերքի ֆունկցիոնալ նշանակությունն ու առողջ սնման տեսանկյունից արժեքավորությունը, այդ գնային տարբերությունը համարում ենք արդարացված: Բացի այդ, արտադրությունում տնտեսական արդյունավետության ապահովման նպատակով առաջարկում ենք լակտովոզ պարունակող մածնի տարայա-վորման համար օգտագործել ապակե (շրջանառելի՝ բազմակի օգտագործման ենթա-կա) տարա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պաստերացված կաթի մեջ չոր կաթի որակական հայտնաբերման համար տեղայնացված և կիրառված թիոբարիտուրաթթվային մեթոդ (ՇԲՇ) հավաստի, արդյունավետ և տնտեսապես մատչելի է:
- Հետազոտված նմուշների գգայի մասը ըստ հիգիենիկ ցուցանիշների չեն համապատասխանում անվտանգության առումով մանրէաբանական ցուցանիշների համար սահմանված պահանջներին: Հում և պաստերացված կաթի որոշ նմուշներում հայտնաբերվել է ԱՑԽՄ, իսկ ՄԱՖԱՄ պարունակությունները գերազանցում են թույլատրելի քանակությունները: Մեծ քանակությամբ (44%) հում կաթի նմուշներում հայտնաբերվել է *St. aureus* (ոսկեգոյն ստաֆիլակով):
- Պաստերացված կաթի որոշ նմուշներում հայտնաբերված ՄԱՖԱՄ բարձր պարունակությունները և ԱՑԽՄ, ինչպես նաև *Pseudomonas aeruginosa* մանրէի առկայությունը թույլ են տալիս կաթնամթերքի շուկայում իրացվող պաստերացված կաթի սպառումը համարել ոիսկային՝ հաշվի առնելով նաև մարդու առողջության համար նշված մանրէների կողմից հարուցվող բացասական հետևանքները:
- Հետազոտված պաստերացված, հում և չոր կաթի նմուշներում քիմիական վտանգներից ռադիոնուկլիդներ (Cs-90, Sr-137) և պեստիցիդներ (ԴԴՏ և դրա մետաբոլիտները, ՀՔՑ α , β , γ իզոմերներ) չեն հայտնաբերվել, իսկ թունավոր տարրերի (Pb, As, Cd, Hg) հայտնաբերված պարունակությունները չնշին են և չեն գերազանցում << և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերով, ինչպես նաև ԵՄ նորմատիվային փաստաթղթերով սահմանված առկա թույլատրելի մակարդակները:
- Քիմիական վտանգների ոիսկի գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ այդ վտանգները գտնվում են թույլատրելի ոիսկի տիրույթում, ուստի համարվում են ոչ էական և արտադրության տեսանկյունից ոչ ոիսկային:
- Ուսումնասիրվել է պրեբիոտիկ լակտովոզի տարբեր քանակությունների ազդեցությունը *Str. bovis* 730 և *L. acidophilus* E շտամներից ու պրոբիոտիկ *Lactobacillus salivarius* N 1588-ից բաղկացած մանրէական մակարդի կողմից թթվություն առաջանելու ակտիվության և մակարդման տևողության վրա: Գիտականորեն հիմնավորվել և

փորձնականորեն հաստատվել է մածնի արտադրությունում պրեբիոտիկ լակտովոզի կիրառումը, որի օպտիմալ չափաքանակն ընդունվել է 0,3%:

7. Փորձնականորեն ապացուցվել է, որ լակտովոզի ավելացումն էականորեն արտահայտված ազդեցություն չի թողնում պահպանման ընթացքում մածնի մեջ ընթացող պրոտեոլիտիկ և լիպոլիտիկ գործնթացների վրա, ուստի սպիտակուցների և ճարպերի քայլայմամբ պայմանավորված արատներ չի առաջացնում:

8. Կատարելագործված տեխնոլոգիայով պատրաստված մածունն ունի լավ զգայություն գուցանիշներ, միատարր խիտ կոնսիստենցիա և պարունակում է անհրաժեշտ քանակությամբ կաթնաթթվային մանրէներ: Վերջիններիս պարունակությունը մածնի պահպանման 1-ին օրը կազմում է 7×10^{10} ԳԱՄ/գ, իսկ 5-րդ օրը՝ 3×10^8 ԳԱՄ/գ:

9. Լակտովոզի հավելմամբ մածնի արտադրությունում ՎՎՀԿԿ համակարգի ներդրման արդյունքում ապահովվել է անվտանգ մթերքի ստացումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով իրականացված հետազոտությունների հիմնական գիտական արդյունքները՝ առաջարկվում է.

1. Պաստերացված կաթի մեջ չոր կաթի որակական հայտնաբերման թերթ մեթոդն առաջարկել որպես պետական վերահսկողության շրջանակներում կիրառելի այլընտրանքային մեթոդ, մշակել և հաստատել համապատասխան ազգային ստանդարտ:
2. Պաստերացված կաթի նմուշներում թունավոր տարրերի մնացորդային քանակությունների առկայությամբ պայմանավորված՝ իրականացնել երկարաժամկետ (քոռնիկ) առողջական ռիսկերի գնահատում՝ հաշվի առնելով ոչ միայն հայտնաբերված թունավոր տարրերի կոնցենտրացիաները, այլև մթերքի սպառման տվյալները:
3. Մածնի արտադրության կատարելագործված տեխնոլոգիան ներդնել կաթի վերամշակման ձեռնարկություններում, հաշվի առնելով, որ լրացուցիչ կապիտալ ներդրումներ չեն պահանջվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Վ., Համբարձումյան Գ., Հարությունյան Ժ., Խաչատրյան Ն. Պարենամթերքի փորձաքննության հիմունքներ: - Եր.: «Լուսաբաց հրատարակչություն», 2008, 360 էջ:
2. Աղաբաբյան Ա.Ա., Բեգլարյան Ռ.Ա., Արաքսյանց Ա.Է. «Կաթի քիմիա և ֆիզիկա» առարկայի պարապմունքների ուսումնական ձեռնարկ: - Եր.: ՀԳԱ-ի հրատարկչություն, 1998, 109 էջ:
3. Բատիկյան Հ.Գ. Որակ և անվտանգություն: Պարենային հումք և սննդամթերք: - Եր.: «Լուսաբաց հրատարակչություն», 2001, 108 էջ:
4. Բատիկյան Հ.Գ., Աղաբաբյան Ա.Ա. Սննդամթերքի անվտանգության կառավարման HACCP համակարգ: Ուսումնական ձեռնարկ: - Եր.: ՀԱՍՀ, 2016, 112 էջ:
5. **Բեգլարյան Մ.Ռ.** Չոր կաթի մեջ ծանր մետաղների ուսումնասիրություն և գնահատում // Ագրոգիտություն. - 2016, № 1-2. - էջ 59-62:
6. Բեգլարյան Ռ.Ա., Բեգլարյան Ա.Ռ. Կաթի, կաթնամթերքի և մանկական սննդի տեխնոլոգիա, 2008, 210 էջ:
7. Դիլանյան Զ.Ք. Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիան, 1956, 547 էջ:
8. Ինիխով Գ.Ս. Կաթի և կաթնամթերքների բիոքիմիա, 1973, 379 էջ:
9. Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին <<օրենք (աղյուրը' www.arlis.am):
10. Հաշվետվություն: << բնակչության սնուցման վիճակի ուսումնասիրություն տարածաշրջանային պարենային անվտանգության բարելավում ազգային ռազմավարության և մանր ֆերմերների միջոցով ծրագրի շրջանակներում / EU, APR Group, OXFAM, <<, 2015, 132 էջ:
11. << կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշումը կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին (աղյուրը' www.arlis.am):
12. << կառավարության 2011 թվականի հունվարի N 34-Ն որոշումը սննդամթերքի անվտանգության հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին (աղյուրը' www.arlis.am):

13. << կառավարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի նիստի արձանագրային որոշման հավելված N1 Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը (աղյուրը՝ www.arlis.am):
14. << կառավարության 2014 թ. նոյեմբերի 27-ի նիստի N 50 արձանագրային որոշման Հավելված 1 Ռազմավարական ծրագիր առողջ ապրելակերպի խթանման (աղյուրը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/11/50-4_1ardz.pdf):
15. << կառավարության որոշումը սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում (նախնական արտադրության գործառնություններից հետո) պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը սահմանելու և << կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 531-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին (աղյուրը՝ www.arlis.am):
16. <US ԻՍՕ 22000-2006 Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր. Սննդամթերքի արտադրության շղթայում ընդգրկված կազմակերպություններին ներկայացվող պահանջներ:
17. <US ԻՍՕ/SU 22004-2007 Սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգեր. ԻՍՕ 22000:2005 Ստանդարտի կիրառման ուղեցույց:
18. Նուրազյան Ա.Գ. Կաթի և կաթնամթերքների մանրէակենսաբանություն, 1988, 440 էջ:
19. Պիպոյան Դ.Ա., **Բեգլարյան Մ.Ռ.**, Աղաբաբյան Ա.Ա. Լակտովովի ազդեցությունը մածունի արտադրության տեխնոլոգիական գործընթացների և որակի վրա // Ագրոգիտություն, 2016, № 11-12, էջ 345-348:
20. Պիպոյան Դ.Ա., **Բեգլարյան Մ.Ռ.**, Գալոյան Գ.Մ., Հովհաննիսյան Ա.Ա. << տարբեր վայրերում արտադրված հում կաթի մեջ ծանր մետաղների գնահատում // ֆարմա, 2015, № 11, էջ 101-104:

21. Պիպոյան Դ.Ա., Բեգլարյան Մ.Ռ., Մարտիրոսյան Ա.Գ. Երևան քաղաքում իրացվող պաստերիզացված կաթում արգելակող նյութերի առկայության որոշումը // Ազրոգիտություն, № 9-10, 2012, էջ 612-614:
